ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

Երևան 2021

ՀՏԴ 811.19(082)
ԳՄԴ 81.51գ43
Հ 301

Հրապարակվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝
բ.գ.դ. Վ. Լ. Կատվալյան
բ.գ.թ. Գ. Մ. Մխիթարյան
բ.գ.թ. Ա. Ս. Գալստյան
բ.գ.թ. Ն.Մ.Սիմոնյան

Հայերենագիտական առցանց գիտաժողովի նյութեր:
Հ 301 Գիտական հոդվածների ժողովածու (էլ. հրապարակում).–
Եր.: ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2021.-
էջ:

Ժողովածուում տեղ են գտել հայերենի ուսումնասիրության տարբեր ոլորտներին վերաբերող նյութեր:

ՀՏԴ 811.19(082)
ԳՄԴ 81.51գ43

ISBN 978-9939-9277-2-5
© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2021 (էլ. հրապ.)

Բառնասյան Ջեմմա

(ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԵՐԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻ[1]

Բարբառագիտության զարգացման արդի փուլում մեծ հետաքրքրություն է ցուցաբերվում բարբառների բառապաշարի քննության հարցերին: Բառապաշարային իրողություններ քննելիս ի հայտ են գալիս իմաստային և կիրառական նրբերանգներ, իսկ դրանք հնարավորություն են տալիս կատարելու համեմատական ուսումնասիրություն՝ հետաքրքիր եզրահանգումներով:

Անցյալ դարի 80-ական թվականներին բարբառագիտական գործուղման շրջանակներում Շիրակի տարածաշրջանի տարբեր գյուղերում գրառել ենք բարբառային տարբեր խոսվածքներ՝ ըստ հատուկ հարցարան–ծրագրի[2] (այսուհետ՝ Ծրագիր): Նշենք նաև, որ բարբառախոսներից գրառումներ կատարելիս նախապատվությունը տվել ենք ցեղասպանությունից փրկվածների սերունդներին՝ տեղաբնիկների խոսվածքներին հետագայում

---

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T- 6B111 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:
[2] Տե՛ս *Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր*, Եր, 1977:

անդրադառնալու ակնկալիքով: Հանգամանքների բերումով Շիրակի տարածքի գյուղերի հնաբնակների մայրենի խոսվածքների գրառումներին անդրադարձանք 1988 թվի ավերիչ երկրաշարժից տասնամյակներ անց միայն և համոզվեցինք, որ առավել ճիշտ կլիներ չթողնել հետագային: Այնուամենայնիվ, նպատակ ունենալով առաջին հերթին ցեղասպանության հետևանքով բնօրրանից կտրված բարբառների գրառումն ու պահպանությունը՝ Շիրակի մարզի (նախկինում՝ Ախուրյանի շրջան) *Ոսկեհասկ, Ախուրիկ, Հայկավան, Գետք* գյուղերում գրանցել ենք *Մշո Մկրագոմ, Կոպ, Բոստաքյանդ, Քրդագոմ, Հացիկ*, Խութի Բիջունք և *Կարսի Ուչքիլիսա, Ուզունքիլիսա, Փալդրվան* գյուղերի խոսվածքները:

Մեծ եղեռնից հետո Զորավար Անդրանիկի զորքի հետևից Շիրակի դաշտում ապաստանած մշեցիների մի քանի տասնյակ ընտանիքներ իրենց համար գյուղատեղի են ընտրել Ախուրյան գետի Ախուրիկ վտակի երկու ափերը: Այդ խառնակ ժամանակաշրջանում են կազմավորվել բացառապես գաղթականներով բնակեցված՝ *Ոսկեհասկ, Հայկավան, Ախուրիկ գյուղերը:* Այդ գյուղերում աստիճանաբար բնակություն էին հաստատել նաև Կարսի մարզի տարբեր գյուղերից բռնագաղթածների նորանոր գերդաստաններ՝ փաստորեն առանձնանալով և գետակի տարբեր ափերին առանձին թաղեր հիմնելով: Այդ կերպ մեկուսանալն էր պատճառը, որ տասնամյակներ շարունակ տարիքով մարդիկ անխառն էին պահել իրենց մայրենի խոսվածքները:

Հայտնի է, որ Շիրակի տարածքի հնաբնակների խոսվածքները *Ում* ճյուղին են պատկանում, բայց 19-րդ դարում Էրզրումից հոծ գաղթականությամբ այստեղ վերաբնակություն հաստատածների ազդեցությամբ ձևավորել են միջբարբառային խոսվածքներ: Ասենք, Շիրակի մարզի *Գետք* և *Մարմաշեն* գյուղերում ապրող տեղաբնիկները Արարատյան բարբառի կրողներ են և մեր գրառումներում փաստում են բայի ներկա ժամանակաձևի *էրտըմ է, ըսըմ է* և նման ձևերը, թեև կիրառում են նաև *Կը* ճյուղին բնորոշ՝ *կէրտա, կըսէ* համապատասխանությունները: Կարնո բարբառը կենդանի, գործուն է և որպես հաղորդակցման միջոց է ծառայում Գյումրիում, Շիրակի մարզի բազմաթիվ բնակավայրերում, ինչպես նաև Վրաստանի Հանրապետության Ախալքալաքի, Ախալցխայի, Բոգդանովկայի մի շարք հայաբնակ գյուղերում: Կարնո բարբառին անդրադարձել ենք՝ Կարսի *Ուչքիլիսա, Ուզունքիլիսա* գյուղերի խոսվածքները Գյումրիում և Ոսկեհասկ գյուղում գրանցելով:

Վերջին տարիներին զբաղվում ենք հայերենի բարբառային բառապաշարի իմաստային, ծագումնաբանական, բառակազմական իրողությունների քննությամբ և հայ բարբառների համեմատական ուսումնասիրությամբ: Դա հնարավորություն է տալիս ստանալու վիճակագրական որոշակի տեղեկություններ հայերենի բարբառների խոսվածքների մասին:

Մեր այս հակիրճ քննության շրջանակներում ներկայացնենք բառիմաստային որոշ իրողություններ՝ կապելով դրանք

լեզվամտածողության առանձնահատկությունների հետ: Վերոհիշյալ Ծրագրի 479-559 կետերն ընդգրկող՝ բառիմաստային զուգաբանությունները[34] գրանցելիս հաճախ պարզվում է, որ բառային հոմանիշներն իրենց նույնական կամ մերձավոր իմաստներով կարող են կիրառելի լինել և գործառույթ ձեռք բերել՝ այլ խոսվածքների միջավայրում: Օրինակ, ասենք, Ծրագրի 493 կետի պահանջով հարցում է արվում ***ՄՈՁԻ*** բառի իմաստի մասին: Այն գյուղերում, ուր բնակչությունը համեմատաբար միատարր է, (Մարմաշեն, Գետք) այդ բառի համար գրառել ենք ***1 տարեկանից մեծ՝ կովի կամ գոմեշի հորթ*** իմաստները, իսկ, ասենք, Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներից գաղթած և Ախուրյանի շրջանի Ոսկեհասկ,Ախուրիկ, Հայկավան գյուղերում բնակվողներին ծանոթ և հասկանալի էր նաև բառին վերագրվող մի այլ իմաստ ևս՝ ***նախորդ ամուսնուց ունեցած երեխա, որ կինն իր հետ տանում էր երկրորդ ամուսնու տուն:***

Բնական է, որ հարյուր տարի կողք կողքի ապրող մշեցին և կարսեցին կարող էին գործառել մի բառ, որը մեն-մենակ մի ամբողջ բարդ ստորադասական նախադասությամբ արտահայտվող իմաստ ունի:

Այս կարգի զուգաբանություններին անդրադառնալիս բարբառախոսները ձգտում են լրացուցիչ պարզաբանումներ տալ՝

---

[3] Տե՛ս *Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր*, Ե., 1977, էջ 71-76:

թյուրիմացություններից խուսափելու համար: Բառին հատուկ նրբիմաստը մշտապես նշում են Թալինի գյուղերում վերաբնակություն հաստատած սասունցիները: Օրինակ՝ Սասունի Սպաղանք գյուղի խոսվածքը գրառելիս մեր բարբառախոսը այսպիսի բացատրություն ներկայացրեց մեզ՝ ***Ըղ գընից, օր զարկվիրը, մօզից լը պէրիրը հէղ:***

Նշենք նաև, որ 2001թ. Հալեպի բնակիչ, արմատներով սասունցի Վազգեն Արոյանից իր ընտանեկան հարկի տակ դեռևս գործածական՝ Գելիեգուզան գյուղի խոսվածքով նույնատիպ վկայություն ենք գրառել: Օրինակ՝ ***Ըղ դըղըն զըմ հօխպըրզին Սօւէի մօզիզն ը, բըլը ուրըն զըմ ախպօրըն շաղը հազ զէնըմ*** *(այդ տղան իմ հորեղբոր կին Սոսեի՝ հետը բերած տղան է, բայց իմ եղբորից շատ եմ սիրում նրան):*

Բառիմաստային հետաքրքիր մի ձև էլ ներկայացնենք՝ ըստ վերոհիշյալ Ծրագրի բառիմաստյն զուգաբանությունների բաժնի 513-րդ կետի հարցումով բարբառախոս անձանցից գրառված տեղեկությունների: Խոսքը վերաբերում է ***ԾՄԱԿ*** բառի իմաստին: Կարելի է փաստել, որ ասենք Արևելյան խմբակցության բարբառների մի շարք խոսվածքներում այդ բառը գործառում է ***անտառ*** հասկացության իմաստով (Լոռի, Արցախ): Մինչդեռ Արևմտյան խմբակցության բազմաթիվ խոսվածքներում ՄԵՇԱ փոխառյալ բառն է գործառում: Իսկ ինչ վերաբերում է ***ԾՄԱԿ*** հասկացությանը, ապա ասենք Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբում բառն ունի խոնավ տեղ իմաստը՝: Բերենք օրինակներ.

Մըր դան օղէն փըշումը ***ձըմը*** *է (Սասունի Սրցանք գյուղ):*

Ձըմա տէխ նըստա,պաղա-հիվընդծա (Մշո Մկրագոմ գյուղ):

Բերենք օրինակ նաև Տարոն-Տուրուբերան ազգագրական գոտու բանահյուսական պատառիկներից.

Մուխսի Թըմէն նըստի ձ՛ըմէն,

Հ՛ինկ, ուր քըմէն կաժէ զըմէն:

Շիրակի դաշտի գյուղերի խոսվածքներում նույնպես ***ձ՛ըմա*** բառաձևն առկա է՝ ***խոնավ ու բորբոսնած տեղ*** իմաստով: Օրինակ բերենք Շիրակի Ազատան գյուղի խոսվածքով.

Մէր տունը քիճըմ ձ՛ըմա է, էնղի էմ ըսման հիվընդծէ *(Մեր տունը մի քիչ խոնավ է, դրա համար եմ այսպես հիվանդացել):*

Այս և բազում այլ օրինակներով կարելի է փաստել, որ լինելով մշտապես փոփոխվող համակարգ՝ լեզուն առավել պատկերավոր է դառնում և առավել արտահայտիչ ու հարուստ՝ շնորհիվ բառային հետաքրքիր հոմանիշների, ինչպես նաև դարձվածքային միավորների, որոնց ուսումնասիրությամբ զբաղվում ենք: Մեր ձեռքի տակ ունենք հայերենի բարբառներում փոխաբերական ու այլաբանական իմաստ ունեցող կայուն կապակցություններ՝ քաղված բանահյուսական առատ նյութերից:

В селах Гетк, Азатан и Мармашен Ширакской области, помимо местных жителей, проживают также поколения переселившихся сюда в начале 19-ого века из Карса и Эрзрума людей. Ощутимое количество составляют также представители 3-4-го поколения семей, переживших Геноцид армян. Есть также деревни, в основном населенные переселенцами (Воскеаск, Айкаван, Ахурик), где десятилетия назад мы произвели собирательные работы – записывая реальности у носителей диалекта, относящиеся к армянским диалектам, в том числе – действующие в говорах фразовые единицы. Заметно, что лексические различия свидетельствуют о разнообразии языкового мышления.

Jemma Barnasyan*. Study of the peculiarities Linguistic thinking -according to the records of the dialects of the villages of Shirak region*

In the villages of Getk, Azatan and Marmashen of the Shirak region, in addition to local residents, there are also generations of people who moved here at the beginning of the 19th century from Kars and Erzrum. A tangible number also make up the representatives of the 3-4th generation of families who survived the Armenian Genocide. There are also villages mostly inhabited by settlers (Voskehask, Haykavan, Akhurik), where decades ago we provided the collection works - recording realities among dialect speakers, related to Armenian dialects, including - phrasal units operating in dialects. It is noticeable that lexical differences point the diversity of linguistic thinking.

Գրիգորյան Գայանե
(ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԱԿԱՆԱՎՈՐ ՀՆԴԵՎՐՈՊԱԲԱՆՆԵՐ
(տեղեկատվական հոդված)

Սույն հոդվածում ներկայացված են մի քանի ականավոր հնդեվրոպաբանների կենսագրական տվյալներ և նրանց գիտական լեզվաբանական գործունեության մասին տեղեկություններ: Այս լեզվաբաններն իրենց կարևորագույն ներդրումն են ունեցել հնդեվրոպաբանության բնագավառում:

Իվան Ալեքսանդրի Բոդուեն դե Կուրտենե
կամ՝ Յան Նեցիսլավ Իգնացի Բոդուեն դե Կուրտենե, լեհ և ռուս լեզվաբան, Կազանի, Պետերբուրգի և Լեհաստանի լեզվաբանական դպրոցների հիմնադիր

(1845-1929)

Բոդուեն դե Կուրտենեն սերում է հին ֆրանսիական Կուրտենե ազնվական տոհմից. նրա նախնիները Լեհաստան են տեղափոխվել 17-18-րդ դարերի սահմանագծին: Նա սովորել է Վարշավայի գլխավոր դպրոցում և 1866 թվականին ավարտել՝ ստանալով մագիստրոսի կոչում, այնուհետև կատարելագործվել Սանկտ Պետերբուրգում, Մոսկվայում: 1870 թվականին Լայպցիգի համալսարանում ստացել է փիլիսոփայության դոկտորի աստիճան:

Բոդուեն դե Կուրտենեին իրավամբ կարելի է համարել կիրառական լեզվաբանության նախահայրերից, քանի որ նա իր աշխատանքներում ցույց տվեց, որ լեզվի էությունը խոսքի՛ գործունեության մեջ է, և հետևաբար, անհրաժեշտ է ուսումնասիրել կենդանի լեզուներ և բարբառներ: Միայն այդ կերպ կարելի է հասկանալ լեզվի գործունեության մեխանիզմը և ստուգել լեզվական տեսությունների ճշմարտացիությունը: Այս իմաստով նա հեղափոխություն բերեց լեզվաբանական գիտության ասպարեզում: Մինչ նա՝ լեզվաբանության մեջ գերիշխում էր լեզվի նկատմամբ պատմական մոտեցումը, երբ լեզուներն ուսումնասիրվում էին բացառապես գրավոր հուշարձանների նյութի հիման վրա:

1874-1883թթ. Դե Կուրտենեն աշխատել է Կազանում և հիմնադրել Կազանի լեզվաբանական դպրոցը, որն անպայմանորեն իր ազդեցությունն է ունեցել այլ հանճարեղ լեզվաբանների՝ Վասիլի Բոգորոդիցկու, Լև Շչերբայի, Եվգենի Պոլիվանովի և այլոց վրա:

Դե Կուրտենեն երկար տարիներ ուսումնասիրել է հնդեվրոպական լեզուներ, իր գիտական աշխատությունները

գրել է ոչ միայն ռուսերենով և լեհերենով, այլև գերմաներենով, ֆրանսերենով, չեխերենով, իտալերենով և այլ լեզուներով: Մասնակցելով գիտական արշավներին և ուսումնասիրելով սլավոնական լեզուներն ու բարբառները՝ նա գտնում և դիտարկում էր դրանց հնչյունական առանձնահատկությունները: Նրա բացահայտումները հիմք դրեցին համեմատական (տիպաբանական) վերլուծության կանխատեսումներին, որոնք հետագայում իրենց արտացոլումը գտան ականավոր տիպաբան-սլավոնիստ Կառլ Ռոբերտ Յակոբսոնի աշխատանքներում: Այս ուսումնասիրությունները Դե Կուրտենեին հնարավորություն տվեցին ստեղծելու հնչույթի տեսությունը, որը նա շարադրեց «Опыт фонетических чередований» (1895) աշխատության մեջ[1]: Առաջին անգամ լեզվաբանության պատմության մեջ նա անդրադարձել է հնչյունի և հնչույթի տարբերությանը՝ գիտականորեն բացահայտելով դրանց բնույթը և առանձնացնելով այդ երկու միավորները որպես առանձին երևույթներ: Այսինքն՝ հիմք դնելով հնչյունի գործառութային (ֆունկցիոնալ) ուսումնասիրմանը՝ մեծ գիտնականն առաջին անգամ առանձնացրեց հնչույթ և հնչյուն եզրույթները՝ հիմք դնելով հնչույթաբանության՝ որպես առանձին ճյուղի ձևավորմանը: Եվ իսկապես, Բոդուեն դե Կուրտենեի գործառութային տեսակետի առաջքերման շնորհիվ հնչյունաբանության բնագավառում ստեղծվեց մի նոր գիտակարգի հիմք, և այդ գիտակարգը կոչվեց հնչույթաբանություն: Հնչույթի բազմաթիվ սահմանումներից (ծագումնաբանական, վերացարկման, բաշխումային

[1] **Бодуэн де Куртенэ И.А.**, *Избранные труды по общему языкознанию*, тт. 1–2. М., 1963:

իմացաբանական և այլն) Բոդուենի համար ընդունելի էր հոգեբանական տեսությունը, ըստ որի հնչյունն արտասանական-ընկալողական միավոր է, իսկ հնչույթը՝ հոգեբանական: Հնչույթը կա խոսողի հոգեկան աշխարհում որպես մտապատկեր, որը նա վերարտադրում է խոսելիս: Այս պարագայում առկա է 2 միավոր՝ բնախոսական, ֆիզիկական (հնչյունը) և հոգեբանական (հնչույթը): Հոգեբանական այս տեսությանը հետևել են արտասահմանյան շատ լեզվաբաններ, ինչպես նաև Դե Կուրտենեի աշակերտ Լև Շչերբան՝ իր գործունեության վաղ տարիներին:

Բոդուեն դե Կուրտենեի աշխատանքների հիման վրա ստեղծվեց մի նոր ուղղություն՝ փորձառական հնչյունաբանությունը: Նրա բերած նորություններից մեկն այն էր, որ նա լեզվաբանության մեջ կիրառեց մաթեմատիկական մոդելները: Նա ապացուցեց, որ լեզուներում կատարվող փոփոխությունները ոչ միայն կարելի է գրանցել, այլև դրանցով հնարավոր է ազդել լեզուների զարգացման վրա:

Բոդուեն դե Կուրտենեն պատրաստել է Վլադիմիր Դալի բառարանի երրորդ և չորրորդ հրատարակությունները՝ կատարելով ստուգաբանական աշխատանքներ, նոր բառերի ավելացումներ և այլ շտկումներ, որոնց պատճառով ենթարկվել է խիստ քննադատության: Խորհրդային տարիներին Դալի «բոդուենական» բառարանը չի վերահրատարակվել:

Բոդուեն դը Կուրտենեն ամուսնացած է եղել երկու անգամ: Նրա երկրորդ կինը լեհ գրող Ռոմուալդա Բագնիցկայան էր, որը հոդվածներ էր տպագրում ռուսական,

լեհական ու չեխական մամուլում: Նրանց դուստրը՝ Սոֆյա Բոդուեն դե Կուրտենեն (1887-1967) եղել է նկարիչ, մյուս դուստրը՝ Ցեզարիա Էրենկրեյցը՝ հայտնի ազգագրագետ (1885-1967): Մեծ գիտնականը մահացել է 1929 թվականի նոյեմբերի 3-ին Վարշավայում և թաղվել Վարշավայի գերեզմանատանը:

Լև Վլադիմիրովիչ Շչերբա
ռուս և խորհրդային լեզվաբան
(1880-1944)

Լև Վլադիմիրովիչ Շչերբան հնչույթի տեսության հիմնադիրներից մեկն է: Նա ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս էր և մեծ ներդրում է ունեցել բառագիտության և հնչյունաբանության զարգացման մեջ: Լինելով ընդհանուր լեզվաբանության մասնագետ՝ նա մեծ գիտակ էր նաև ռուսերենի, սլավոնական այլ լեզուների և ֆրանսերենի:

Լև Վլադիմիրովիչ Շչերբան (1880 –1944) ծնվել է Մինսկի նահանգի Իգումեն քաղաքում, մեծացել Կիևում: Գիմնազիան ավարտելուց հետո 1898-ին ընդունվել է Կիևի համալսարանի բնական գիտությունների ֆակուլտետ, իսկ 1899-ին տեղափոխվել Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետ, որին էլ կապված է եղել իր ամբողջ կյանքի ընթացքում:

1903թ. ավարտելուց հետո Շչերբան հանձնում է մագիստրոսական քննությունները և սկսում աշխատել համեմատական քերականության և սանսկրիտի ամբիոնում՝ միաժամանակ կադետական կորպուսում դասավանդելով ռուսաց լեզու: 1906թ. նա գործուղվում է արտասահման: Իտալիայում սովորում է տոսկանյան բարբառները, Ֆրանսիայում աշխատում է Ռուսլոյի փորձառական հնչյունաբանության լաբորատորիայում, Գերմանիայում ինքնուրույն ուսումնասիրում է գերմաներենի որոշ բարբառներ, որոնք հետագայում նկարագրում է իր դոկտորական ատենախոսության մեջ:

1909-ին Սանկտ Պետերբուրգի համալսարանում նա ստեղծում է փորձառականական հնչյունաբանության լաբորատորիա, որն այժմ կրում է նրա անունը: 1912-ին պաշտպանում է մագիստրոսական թեզը՝ «Русские гласные в качественном и количественном отношении»)[2], իսկ 1915-ին՝ դոկտորականը՝ «Восточнолужицкое наречие»[3]: 1916 -ից աշխատում է Պետրոգրադի համալսարանի համեմատական լեզվաբանության ամբիոնում՝ որպես պրոֆեսոր: 1924

[2] **Л.В. Щерба**, *Русские гласные в качественном и количественном отношении, Ленинград*, «Наука», 1983:

[3] http://books.e-heritage.ru/book/10094503

թվականից Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ էր, 1943-ից՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս: 1924 թվականից Հնչյունաբանների միջազգային ասոցիացիայի պատվավոր անդամ էր: Շչերբան Լենինգրադի (Պետերբուրգի) հնչյունաբանական դպրոցի հիմնադիրն է: Նրա աշակերտներից են եղել Լ. Զինդերը և Մ. Մատուսևիչը:

Նա զարգացրեց իր ուսուցչի՝ Բոդուեն դե Կուրտենեի կողմից ներկայացված հնչույթի հայեցակարգը՝ «ֆոնեմ» տերմինին տալով ժամանակակից իմաստ: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակներում էին նաև շարահյուսական, քերականական հարցերը, լեզուների փոխազդեցության խնդիրները, ռուսերենի և օտար լեզուների դասավանդման, լեզվական նորմերի, ուղղագրության և ուղղախոսության հիմնահարցերը:

Նա հատուկ ընդգծում էր բառի գիտական և «միամիտ» իմաստները տարբերելու կարևորությունը: Նա առաջ քաշեց ակտիվ քերականության կառուցվածքի խնդիրը, որը գնում էր իմաստից դեպի ձև ուղղությամբ. սա ավանդական պասիվ քերականության հակադրությունն էր, որը ձևից գնում էր դեպի իմաստ: Իր «О трояком аспекте языковых явлений и об эксперименте в языкознании»[4] աշխատության մեջ հեղինակը սահմանազատում է լեզվական համակարգը և խոսքային գործունեությունը՝ զարգացնելով Ֆերդինանդ դե Սոսյուրի՝ լեզվի և խոսքի առանձնացման գաղափարը:

Շչերբան ներմուծել է բացասական լեզվական նյութի և լեզվաբանական փորձարարության հասկացությունները:

---

[4] https://lingvotech.com/otroyakomaspe

Փորձն իրականացնելիս Շչերբան ենթադրում էր, որ կարևոր է ոչ միայն օգտագործել ճիշտ և հավաստի օրինակները (ինչպես կարելի է խոսել), այլև պարբերաբար դիտարկել բացասական նյութը (ինչպես չի կարելի խոսել)։ Այս առնչությամբ նա նշել է, որ հատկապես ուսուցանելի են լինում բացասական արդյունքները, որովհետև դրանք ցույց են տալիս կամ մեկնաբանվող օրենքի անճշտությունը, կամ նրա որոշ սահմանափակումների անհրաժեշտությունը, կամ այն, որ կանոնները այլևս գոյություն չունեն, այլ կան միայն բառարանի փաստերը և այլն։

Նիկոլայ Սերգեյևիչ Տրուբեցկոյ
ռուս լեզվաբան, փիլիսոփա և հրապարակախոս
(1890-1938)

Նիկոլայ Տրուբեցկոյը սերում է Տրուբեցկոյների ազնվական տոհմից: Նրա հայրը Մոսկվայի համալսարանի ռեկտորն էր, իսկ արքայազն եղբայրը գրող էր և հուշագիր:

Պատանեկան տարիներին Նիկոլայը հաճախում է Մոսկվայի համալսարանին կից գործող բնագիտության, պատմության, մարդաբանության և ազգագրության հարցերով զբաղվող ընկերության հանդիպումներին: Տասնհինգ տարեկանում նա հրապարակում է իր առաջին գիտական աշխատությունը՝ հնագետ Ս. Կուզնեցովի խորհրդատվությամբ և հսկողությամբ: 1907 թվականից սկսած զբաղվում է հյուսիսկովկասյան և Չուկոտկայում ու Կամչատկայում խոսվող լեզուների քերականական կառուցվածքի պատմահամեմատական և տիպաբանական ուսումնասիրություններով: Այս ընթացքում հավաքած նյութերը քաղաքացիական պատերազմի ժամանակ անհետանում են կամ կրակի մատնվում, սակայն հետագայում՝ աքսորում եղած ժամանակ, Տրուբեցկոյը հիշողությամբ վերականգնում է դրանք:

1913-ին ավարտում է Մոսկվայի համալսարանը, 1913-1914 թվականներին դասախոսություններ է լսում Լայպցիգի համալսարանում: 1915-1916 թթ. աշխատում է Մոսկվայի համալսարանում որպես մասնավոր դոցենտ, 1918 թվականին՝ Ռոստովի համալսարանում որպես պրոֆեսոր: 1920-1930 թվականներին Վիեննայի համալսարանում դասավանդում է սլավոնական լեզուներ և գրականություն, զբաղվում գիտական գործունեությամբ: 1930 թվականին ընտրվում է Վիեննայի գիտությունների ակադեմիայի անդամ:

Նիկոլայ Տրուբեցկոյը Պրահայի լեզվաբանական խմբակի տեսաբաններից է եղել, մեկը այն ակտիվ մասնակիցներից և գաղափարական առաջնորդներից, որոնք լեզվաբանության մեջ հիմնադրեցին Սլավոնական ստրուկտուրալիզմի դպրոցը: Նրա տեսությունը ձևավորվել է Բոդուեն դե Կուրտենեի և Ֆերդինանդ դը Սոսյուրի գաղափարների ազդեցությամբ:

Տրուբեցկոյը ուսումնասիրել է սլավոնական լեզուների պատմությունը, զբաղվել նախադաղստանյան և աբխազական լեզուների պատմահամեմատական հետազոտությամբ: 1920-ականների վերջին և 1930-ականների սկզբին նա մշակել է հնչյունաբանության՝ որպես լեզվաբանական առանձին գիտակարգի տեսությունը:

Ռուս գրականության իր դասախոսություններում նա արտահայտում էր հեղափոխական գաղափարներ ռուս հին և միջնադարյան գրականության, գրական ստեղծագործությունների վերլուծության մեթոդների, ինչպես նաև ռուսական բիլինաների տաղաչափության վերաբերյալ:

Վասիլի Ալեկսեյևիչ Բոգորոդիցկի
ռուս եզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
(1857-1941)

Բոգորոդիցկին ծնվել է Ռուսական կայսրության Ցարևոկոկշայսկ քաղաքում քահանայի ընտանիքում: 1868 թվականից սովորել է Կազանի գիմնազիայում, իսկ 1876-1880թթ.՝ Կազանի համալսարանի պատմության և բանասիրության ֆակուլտետում: Ուսումն ավարտելուց հետո նա մնացել է համալսարանում՝ դասավանդելու նպատակով: Դասավանդել է դասական լեզուների համեմատական քերականություն և ռուսերենի հնչյունաբանություն առարկաները, հետագայում նաև՝ սանսկրիտ:

1884 թ. նա պաշտպանել է իր թեկնածուական թեզը՝«Гласные без ударения в общерусском языке», իսկ 1888 թվականին՝ «Курс грамматики русского языка. Ч.1. Фонетика»

խորագրով դոկտորական դիսերտացիան: Պաշտպանությունից հետո նրան շնորհվել է արտակարգ պրոֆեսորի, ապա վաստակավոր պրոֆեսորի կոչումներ: Նույն թվականին նա համալսարանում հիմնադրել է առաջին փորձառական հնչյունաբանության լաբորատորիան:

Բոզորոդիցկին Կազանի լեզվաբանական դպրոցի հիմնադիրներից է: 1905 թվականին ընտրվել է որպես Փարիզի լեզվաբանական դպրոցի անդամ: Պարգևատրվել է Ս. Վլադիմիրի, Ս. Աննայի, Ս. Ստանիսլավի շքանշաններով: 1915-ից՝ Սանկտ Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ է: 1925 թվականին, արդեն խորհրդային տարիներին, դառնում է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ:

1917-ի հեղափոխությունից հետո Վ. Բոզորոդիցկին դասավանդել է Կազանի մանկավարժական ինստիտուտում: 1940 թվականին նրան շնորհվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան:

Բոզորոդիցկին հեղինակ է լեզվաբանական մի շարք տերմինների, որոնք վերաբերում են տարժամանակյա (դիախրոնիկ) ձևաբանությանը և օգտագործվում են առ այսօր: Օրինակ, նա ներմուծել է *переразложение* (ձևույթների սահմանների շարժ՝ բառի կազմում), *опрощение* (բառի ձևաբանական կառուցվածքի փոփոխություն) եզրույթները:

Ռուբեն Հովհաննեսի Ավանեսով

Խորհրդային լեզվաբան, Ժամանակագրական դպրոցի հիմնադիրը

(1902—1982)

Ռուբեն Ավանեսովը ծնվել է հայ ընտանիքում, մանկությունն անցկացրել է Լեռնային Ղարաբաղում, մասնավորապես՝ Շուշիում: 1909 թվականին ընդունվել է Լազարյան ճեմարան, որը որոշ ժամանակ անց փակվել է: Դպրոցն ավարտելուց հետո (1919թ.) ընդունվել է Մոսկվայի պետական համալսարանի պատմության և բանասիրության ֆակուլտետ, ընդմիջումներով ուսանելուց հետո՝ 1925 թվականին ավարտել է համալսարանի հասարակական գիտությունների ֆակուլտետը՝ «սլավոնառուսական լեզվաբանություն» մասնագիտությամբ: Աշխատել է դպրոցում, ֆաբրիկաներում, կատարել նաև բանվորական աշխատանք:

Ավանեսովը Մոսկվայի հնչյունաբանական դպրոցի հիմնադիրներից մեկն է, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ (1958), Մոսկվայի պետական

համալսարանի պրոֆեսոր (1937): Սկզբում մասնակցելով բարբառագիտական արշավախմբերին՝ այնուհետև տարիներ շարունակ Մոսկվայի պետական համալսարանում ղեկավարել է բարբառագիտական աշխատանքները: Նա ռուսական բարբառների և խոսվածքների նյութերի հավաքման, ռուսաց լեզվի բարբառային ատլասի (ДАРЯ) և սլավոնական լեզվաբանական ատլասի (ОЛА) ստեղծման աշխատանքների հեղինակներից է:

Պ. Կուզնեցովի, Վ. Սիդորովի և Ա. Ռեֆորմատսկու հետ միասին նա մշակել է հնչույթի տեսությունը, որը հիմք է դարձել Մոսկվայի հնչույթաբանական դպրոցի հնչյունաբանության և հնչույթաբանության հայեցակարգերի ստեղծման համար: Այս մոտեցումը չափազանց օգտակար էր գրի տեսության զարգացման համար: Ավանեսովի դասական աշխատանքը համարվում է «Фонетика современного русского литературного языка»[5] աշխատությունը:

Անչափ մեծ է Ավանեսովի ներդրումը ռուսերենի ուղղախոսության բնագավառում: Մինչև այժմ ցանկացած ռուս լեզվաբանի սեղանի գիրքը նրա «Русское литературное произношение» (1950) աշխատությունն է, որը վերահրատարակվել է վեց անգամ: Ավանեսովի խմբագրմամբ հրատարակվել է «Словарь древнерусского языка XI—XIV вв.»[6] գիրքը:

---

[5] **Аванесов Р.И.**, *Фонетика современного русского литературного языка, Изд-во Московского ун-та*, 1956.

[6] **Аванесов Р.И.**, *Словарь древнерусского языка (XI-XIV вв.) в 10 томах*, АН СССР. Ин-т рус. яз., 1988:



Ալեքսանդր Ալեքսանդրի Ռեֆորմատսկի
ռուս և խորհրդային լեզվաբան
(1900-1978)

Ռեֆորմատսկին Մոսկվայի հնչույթաբանական դպրոցի հիմնադիրներից մեկն է և դրա հայեցակարգի ակտիվ քարոզիչներից: Ա. Ա. Ռեֆորմատսկու առավել ամբողջական հնչյունաբանական տեսակետները շարադրված են նրա կողմից հրատարակված «Из истории отечественной фонологии»[7] քրեստոմատիայում և նրա գիտական ոճին բնորոշ «Фонологические этюды» հավաքածուում:

Նրան շնորհել են բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան՝ առանց դոկտորական թեզի պաշտպանության: Նա մասնագետ էր լեզվաբանության մի

[7] **Реформатский А.А.**, *Из истории отечественной фонологии, Изд-во Наука,* Москва, 1970:

շարք ճյուղերի՝ հնչույթաբանության, տառադարձման, ուղղագրության, ձևաբանության, նշանագիտության, տերմինաբանության, լեզվաբանության պատմության և այլն: Նրա «Введение в языковедение»[8] դասագիրքը իրավամբ կարելի է համարել դասական ուսումնասիրություն: Նրա ստեղծած «практическая транскрипция» (գործնական տառադարձություն) տերմինը համընդհանուր գործածություն է ստացել:

Ռեֆորմատսկին աշխատել է տարբեր բնագավառներում՝ կատարելով ամենատարբեր գործեր՝ աշխատանքային գաղութում՝ որպես հրահանգիչ, ռենտգեն կաբինետում՝ որպես տեխնիկ, տարբեր հրատարակչություններում՝ որպես սրբագրիչ և տեխնիկական խմբագիր: 1931 թվականից ավագ գիտաշխատող էր Լուսավորության կոմիսարիատում, 1934 -ից դասավանդել է Մոսկվայի քաղաքային մանկավարժական ինստիտուտում և ղեկավարել ռուսաց լեզվի ամբիոնը Գրականության ինստիտուտում:

1954-1959 թվականներին աշխատել է Մոսկվայի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, որտեղ ստեղծել է փորձառական հնչյունաբանության լաբորատորիա: 1950 թվականից սկսած՝ ղեկավարում էր ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Լեզվաբանության ինստիտուտի կառուցվածքային և կիրառական լեզվաբանության բաժինը (1958-1970), որտեղ նրա

---

[8] **Реформатский А.А.**, *Введение в языкознание, Государственное учебно-педагогическое изд-во министерства просвещения РСФСР*, Москва, 1955.

ենթակայությամբ աշխատել են Վ. Վինոգրադովը, Ի. Մելչուկը, Ռ. Ֆումկինան և հայտնի այլ գիտնականներ: 1971 թ. նա դադարեցրել է կատարել բաժինը ղեկավարելու պարտականությունը և մնացել որպես խորհրդատու:

Լինելով ռուսական մշակույթի, պատմության, կենցաղի մեծ գիտակ, կրքոտ որսորդ և հեշտ բռնկվող շախմատիստ, բանաստեղծական էքսպրոմտի վարպետ՝ Ռեֆորմատսկին առաջին հերթին լեզվաբան էր: Լսելով օպերային արիաներ՝ նա մեծ ուշադրություն էր դարձնում արտասանական առանձնահատկություններին, որոնք պահանջում էին լեզվաբանական բացատրություններ: Օգտագործելով շախմատային տեսության հնարքները՝ նա փորձում էր դրանք օգտագործել տեքստի կառուցվածքը ուսումնասիրելու համար:

Grigoryan Gayane - Outstanding Phoneticians (informatio-nal article) - The article presents the biographical data of some prominent phonologists (Jan Baudouin de Courtenay, Lev Vladimirovich Shcherba, Nikolai Sergeyevich Trubetzkoy, Vasiliy Alekseevich Bogoroditskiy, Ruben Ivanovich Avanesov, Alexander Alexandrovich Reformatskiy) and information about their scientific linguistic activities. These linguists have made the greatest contributions to the field of phonetics.

Григорян Гаяне - Выдающиеся фонетисты (информа-ционная статья) - В статье представлены биографические данные некоторых выдающихся фонологов (Иван Александрович Бодуэн де Куртенэ, Лев Владимирович Щерба, Николай Сергеевич Трубецкой, Василий Алексеевич Богородицкий, Рубен Иванович Аванесов, Александр

Александрович Реформатский) и сведения об их научной лингвистической деятельности. Эти лингвисты внесли наибольший вклад в область фонетики.

Գրիգորյան Սուսաննա
(ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԳԻՐՔ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆ» ԱՄԱՌԱՆ ԵՒ ՁՄԵՌԱՆ ՀԱՏՈՐՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՁԵՒԱԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐՆ ԻԲՐԵՒ ԻՆՔՆԱՏԻՊ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ

Կա օրինաչափություն, որ հեղինակային երկերի բառապաշարի ձևաիմաստային խմբերն առանձնացնելիս, օրինակների գերակշիռ մասը կազմում են հոմանիշներն ու հականիշներ. անհամեմատ սակավաթիվ են համանունները: Այս առումով, բացառություն չեն նաև Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան «Ձմեռան» և «Ամառան» հատորները:

Եթե նկատի ունենանք, որ Տաթևացու երկերը հիմնականում մեկնողական բնույթի են, ուստի և միանգամայն սպասելի է հատկապես հոմանիշների մեծաթիվ առկայությունը նրա երկերում:

Հեղինակի առաջին իսկ մեկնողական բնույթի աշխատության մեջ՝ **«Լուծումն համառօտ դժուարիմաց բանի ի գիրս գրչութեան Արիստակիսի վարդապետէ...»** այնքան շատ են բառամեկնությունները, հետևաբար և՝ հոմանիշ բառերը, որ կարելի է ասել, այն հիշեցնում է միջնադարյան ձեռագիր բառարան: Քանի որ այդ մեկնության նպատակը արդեն մի

քանի դար անհասկանալի դարձած ուղղագրական կանոնները բացատրելն էր, ուստի Տաթևացին բոլոր անհասկանալի հասկացությունները փոխարինում է հասկանալի հոմանիշներով.

«վերլուծութիւն – մեկնութիւն յայտնապէս

զաղափարէ – օրինակէ ստուգութեամբ

վերտառել – վերագրել ր յայտնի գործել առ միմեանս կապելով

յորջորջելն – կոչելն է

հրահանգն – կրթութիւն

սատար – միջնորդ և օգնական

բացերև - յայտնի

գլխագիր – յառաջագիրն է

շաղաշարել – դասելն է

ռաբբիք – վարդապետք»[1]:

Ընթերցողին մատչելի շարադրանք մատուցելու այս մեթոդը Տաթևացին շարունակում է նաև հետագա իր մյուս աշխատություններում:

«Գիրք քարոզութեան «Ձմեռան» հատորում արդեն հեղինակը տալիս է հոմանիշ, համանուն և այլ հասկացությունների սահմանումները. «Գիտելի է, զի իմաստասէրք զանունն ի չորս բաժանեն, այսինքն ի **հոմանուն**, ի **փաղանուն**, ի **յարանուն** և ի **բազմանուն**: **Հոմանուն** է, որ զանազան իր նշանակէ և չտայ զբան

[1] Հին ձեռագրերի ինստիտուտ, Մատենադարան, ձեռ.1115, էջ 196բ:

գոյացութեան, որպէս յորժամ ասենք «զակն»: Եւ է աչաց ակն, աղբեր ակն, սայլի ակն և սոքա **այլ և այլ բնութիւնք են և զանազան սահմանս ունին**: Իսկ **փաղանուն** է, որ տայ զանունն և տայ իրն, այսինքն սահմանն իւր, որպէս սեռն, որ տեսակաց ստորոգի, զի կենդանին փաղանունաբար կոչի ձիոյն և ոչխարին, զի կարեմք ասել ոչխարն կենդանի, գոյացութիւն, ներշնչական և զգայական. Նոյնպէս և զձին: **Յարանունն** այն է, որ ի գործոյն կոչի, որպէս յառաքինութենէն առաքինի, ի քերականութենէն՝ քերական: Իսկ **բազմանունն** այն է, որ մին իրացն բազում անուն տամք, որպէս՝ սուսեր, նրան, դալապր, մարտացու, վաղակաւոր»[2]:

«Հոմանուն» հեղինակը կոչում է **համանունը**, իսկ **հոմանիշը**՝ բազմանունն է: Հաջորդիվ բերվող բացատրության մեջ հեղինակը շարունակում է գրաբարյան ձևաիմաստային խմբերի՝ **հոմանվան**, **փաղանվան**, **յարանվան, բազմանվան** սահմանումը. «Զի սոքա թէպէտ ունին զշաբաթ անունն **հոմանունաբար**, **բայց այլ է** միաշաբաթն և այլ է երկու շաբաթն և այլ է, որ ի կարգին: Եւ փաղանունաբար կոչի օր, զի **տայ զանունն և տայ զիրն**, զի կարեմք ասել՝ թէ երկու շաբաթն օր է և զսահման աւուրն ունի: Ասեմք՝ երեք շաբաթ օր, չորեքշաբաթ օր: Ասեմք դարձեալ՝ ծառազարդի օր, վարդավառի օր, պահոց օր, զատկի օր: Եւ սոքա ամենայնքն

---

[2] **Գրիգոր Տաթևացի**, *Գիրք քարոզութեան, Ձմեռան հատոր*, Կ.Պոլիս, 1740, էջ 647:

ունին զանուն աւուրն: Եւ յարանունաբար կոչի շաբաթն և կիրակէն և ուրբաթն»[3]:

Տարբեր աշխատություններում Տաթևացին տալիս է նաև **հականիշության** սահմանումը՝ հականիշներով նշանակվող երևույթները բնութագրելով իբրև «ներհակ» կամ «հակառակ». «**Ներհակ** են կորուստն և գիւտն, որպէս լոյս և խաւար»[4]. «Ճշմարտութիւն է պարզաբան, որ ոչ ունի ստութիւն և **հակառակ** իւր, որպէս զխաւար՝ լոյս...»[5]:

Նա նկատել է, որ հականիշներով նշանակվում են հակադիր բևեռում գտնվող երևույթները. «Բարկութիւն **վերին ծայրքն** է և հեզութիւն **ներքին** և ամենայն ուրեք **ընդդէմ** միմեանց են»[6], թեպետ ըստ նրա, ոչ բոլոր երևույթներն են օժտված հակառակ եզրով, ինչպես օրինակ, ճշմարտությունը կամ իմաստությունը. «Ճշմարիտն փոխի երբեմն ի սուտն, որպէս իմաստասիրաց բանքն, իսկ ճշմարտութիւն ոչ փոխի»[7]. «Եւ դարձել զի նոցա ամենեցուն **ներհակ** գոյ, որպէս մեծութեան՝ աղքատութիւն, առողջութեան՝ հիւանդութիւն և կենաց՝ մահ: Իսկ իմաստութեան՝ ոչ ինչ է ներհակ»[8]:

Ինչպես նշեցինք, համանունները համեմատաբար փոքր թիվ են կազմում նաև «Ձմեռան» և «Ամառան» հատորներում:

---

[3] **Նույնը**, էջ 648:
[4] **Գրիգոր Տաթևացի,** *Ø»ÏÝáõÃÇõÝ Ø ³ ï Ã¿Ç*,, *Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռագիր 1264*, ¿ç 162 ³ :
[5] **Գրիգոր Տաթևացի,**, *¶Çñù ø ³ ñá½áõÃ» ³ Ý, ÒÙ»ñ ³ Ý*, ¿ç 173:
[6] **Գրիգոր Տաթևացի,** *Ø»ÏÝáõÃÇõÝ Ø ³ ï Ã¿Ç, Լ*ç 76µ::
[7] **Գրիգոր Տաթևացի**, *¶Çñù ø ³ ñá½áõÃ» ³ Ý,, ÒÙ»ñ ³ Ý*, ¿ç 173:
[8] **Գրիգոր Տաթևացի,** *¶Çñù Ð ³ ñóÙ ³ Ýó*, Կ.Պոլիս, 1729, ¿ç 178:

Սրանց մեջ առկա սակավաթիվ համանունները և՛ գոյականական են, և՛ բայական. (*օրինակների մեծաթիվ լինելու պատճառով հղումները բերվում են տեղում).

«...օրինակաւ գրոց ոպ ասեն վարդապետք իմացուք զբանին լինիլն: Եւ այս ըստ տասն **եղանակի**: Նախ ոպ բանս անմարմին է զի ոչ տեսանի և ոչ շոշափի... («Գիրք քարոզութեան, Ձմեռան, էջ 35).

...այժմ **յեղանակս** ձմերան կատարեմք զտարեմուտս մեր: Նախ զի ի ձմեռնամուտս արեգակն սկսանի բարձրանալ ի հարաւոյ և գայ առ մեզ» (նույն տեղը, էջ 11):

Առաջին դեպքում ունենք եղանակ՝ «տեսակ, ձև» իմաստով. Երկրորդ դեպքում՝ տարվա եղանակ:

«...Զի որ զհիւանդութիւն ոչ զգայ, զբժիշկն ոչ **խնդրէ:** (նույն տեղը, էջ 9).

Որպէս յիմար կուսանքն **խնդրեցին** յիմաստնոյն և ոչ առին: (նույն տեղը, էջ 19»):

Առաջին դեպքում՝ «դիմել» իմաստն է, երկրորդ դեպքում՝ խնդրել:

«Հրոտից զխորհրդակցութի և զ**կատարումն** ժամանակացն ասէ: (նույն տեղը, էջ 13):

...ի **կատարում**ն զործոց որդւոյն աստծոյ պատմեց»: (նույն տեղը, էջ 12):

Առաջին դեպքում՝ «լրանալ» իմաստն է, երկրորդ դեպքում՝ «ավարտ»:

«Երրորդ զի անյարկք բացօթայք էին նշանակէ թէ որք

թողուն զկենցաղս աշխարհի զմայր զհայր զկին զորդիս զ**տուն**ս զագարակս նք զաաստուած տեսանել կարեն: (նույն տեղը, էջ 30):
Եւ հինքն **զ է** մոլորականսն է **տուն** չաստուածոցն կոչեցին»: (նույն տեղը, էջ 11:
Առաջին դեպքում՝ «տուն» իմաստն է, երկրորդ դեպքում՝ «դիրքը երկնակամարում»:

«Եւ յորժամ կամէր ժողովել զ**կենդանիսն** ամենայն առեալ փայտէ ժամահար հնչեցոյց: (նույն տեղը, էջ 9):
Արդ երջանկիս ի ըաբունեաց որ ի բանալն զբերան իւր, բղխէր զջուրն **կենդանի** երկնած իր պարզևօք ըստ որում՝ շիջուցանէր զհուր մեղացն որ վառիւր» (նույն տեղը, էջ 9):
Առաջին դեպքում՝ «կենդանի, անասուն» իմաստն է, երկրորդ դեպքում՝ «ողջ, կենդանացնող»:

«Առաջին խորհուրդ որպէս ուսաք յիմաստնոց թէ ի բաժանել **լեզուացն իբ** տանուտէրքն գնացին իւրաքանչիւր տամբ և ազղօք յաշխարհն իւրեանց (նույն տեղը, էջ 8):
...յետմահու գործել ոչ կարէ զի ոչ ունի մարմին և ձմեռն ոչ լալ արտասուել զի ոչ ունի աչք ոչ խոստովանիլ և ոչ ապաշխարել զի ոչ ունի **լեզու** ոչ գտանել»: (նույն տեղը, էջ 10):
Առաջին դեպքում՝ «խոսք» իմաստն է, երկրորդ դեպքում՝ «լեզու» օրգանը:
...պսակ, որպէս թագաւորաց, կոչի և մարտիրոսաց, կոչի և հարսանեաց և ծաղիկ բուսոյ, զլուխ անդամոց, որ պսակն

բոլոր և զկատարումն նշանակէ, որպէսի զովեստ նորին դրուատի: («Գիրք քարոզութեան, Ամառան, էջ 670):

«...արեգակն զ**մատաղ** բոյսս և զծաղիկս վնսէ, այլ ոչ զհաստատեալսն» (նույն տեղը, էջ 392):

«**մատաղն**...նախ պատարագ և նուէրք է աստծոյ» («Գիրք հարցմանց, էջ 657):

Առաջին դեպքում՝ «մատղաշ» իմաստն է, երկրորդ դեպքում՝ «զոհաբերություն»:

Տաթևացին, ինչպես տեսանք, համանունություն է համարում նաև հիմնական բառի տարբերակված գործածությունները, որի պարագայում նրա կարծիքով բառակապակցությունը ձեռք է բերում նոր իմաստ, ինչպես օրինակ՝ շաբաթվա անվանումների մեջ «շաբաթ» բառի գործածությունը, որովհետև ըստ նրա դրանք տարբեր օրեր են. «Եւ հոմանուն է կոչումն շաբաթին ի վերայ այլ աւուրցն, որպէս յորժամ ասեմք միա**շաբաթ**, երկու **շաբաթ** և երեք **շաբաթ**, չորեք**շաբաթ** և այլն, որ ի կարգին: Զի սոքա թէպէտ ունին զշաբաթ անունն **հոմանունաբար**, **բայց այլ է** միաշաբաթն և այլ է երկու շաբաթն և այլ է, որ ի կարգին»[9]:

Գալով «Գիրք քարոզութեան «Ձմեռան» և «Ամառան» հատորներում օգտագործված հոմանիշ, հականիշ, համանուն բառերին, ապա նկատելի է, որ դրանք մեծամասամբ ոչ թե համագործածական, այլ անհատական բնույթի են, այսինքն

---

[9] **Գրիգոր Տաթևացի**, *Գիրք քարոզութեան, Ձմեռան հատոր*, էջ 647-648:

արդյունք են հեղինակի ինքնատիպ լեզվամտածողության, որի պատճառով երևույթները բնորոշվում են ոչ թե սպասելի հատկանիշներով, այլ` նոր եզրերով կամ նոր նրբիմաստով:

Համագործածական բառերի հոմանիշության մեջ հոմանիշության երկու կողմն էլ համագործածական բառերի շարքում են, ինչպես օրինակ` **խոնարհութեամբ և հնազանդութեամբ**, **ջահիւք և լապտերօք**, **մերկ և բոկ**, **անհանգիստ և տքուն**:

Քարոզգրքերում անհատական բնույթի են նորակազմ բառերով կազմված հոմանիշային շարքերը, երբ նորակազմ բառերն են հանդես գալիս որպես հոմանիշության եզր, այսինքն խոսքն ավելի ընդգծելու համար հեղինակը դիմում է նորակազմության` այն ավելի տպավորիչ դարձնելու համար: Օրինակ Գողիաթին նկարագրելիս նա **հաղթահասակ** տարածված բառի փոխարեն օգտագործում է **մսաբլուր** նորակամությունը, որն ավելի է ընդգծում Գողիաթի անսովոր հաղթանդամ և հսկա լինելը. «Չորրորդ՝ թագաւորութեան որպէս Դաւթին, որ զօրացեալ յաղթեաց **զմսաբլուրն** Գողիաթն»[10]:

- դէտ, այսինքն` **հայեակ** (բարձր տեղից հսկող մարդ)**.** նորակազմություն է «**հայեակ**» բառը:

Գրաբարում ունենք **ճրագալոյց** բառը (ճրագը լուցանել). Տաթևացին որպես նորակազմություն օգտագործում

---

[10] Նույնը, էջ 96:

է **ճրագալոյծ**-ը՝ բերելով իբրև «պահքի երեկոն ճրագով լուծելու» համարժեք. «վասն զի **ճրագով** յերեկոյս **լուծանեմք**»[11]:

Կան հոմանիշներն, որտեղ եզրերից մեկը փոխառություն է. **անգուման** և անկարծիս պարզևացն, զեղմ և **զզաթ**, ճրագ – **ֆանառ, դար** – հազար ամ, **ալէլու-** օրհնեցէք կամ գովեցէք:

Հոմանիշ բառերի մասին խոսելիս, սովորաբար նկատի են առնվում նույնական կամ մերձավոր իմաստով բառային տարբեր ձևերը. երես-դեմք, ոլորել-պտտել, կոտրել-ջարդել, սպիտակ-ճերմակ և այլն: Սա քերականական բնութագրման առումով հաստատված մոտեցում է, սակայն մեր նյութի շրջանակներում հանդիպել ենք Տաթևացու ոճին շատ հատուկ **կապակցական հոմանիշության** բազմաթիվ օրինակների**,** որտեղ հոմանիշներ են դառնում որոշակի ենթատեքստ ենթադրող բառակապակցությունները, ընդ որում՝ որոշակի իրադրության մեջ: Այսպես՝ Տիրոջ խաչելության ողբերգական դրվագի ինքնատիպ նկարագրությունը **«Գիրք քարոզութեան «Ձմեռան հատոր»-ում** վերածվել է հոմանիշների յուրօրինակ շարքի, որոնք բոլորը մեկ իմաստային դաշտում են՝ ողբերգության և հուսահատության նկարագրության իմաստով,. **«**Այնպէս **սրտաբեկ եղեն.** մինչ **թողին զնա եւ փախեան.** եւ **Պետրոս ուրացաւ.** եւ **Թումաս թերահաւատ եղեւ.** նոյնպէս եւ աստուածածին **կոյսն՝ սրով տրտմութեան**

---

[11] Նույնը, էջ 31:

խոցեցաւ»[12]: Նկարագրության մեջ «սրտաբեկ լինել»-ը, «թողնել-փախնել»-ը, «ուրանալ»-ը, «թերահավատությամբ լցվել»-ը, «իբրև սրով խոցվել»-ը՝ բացարձակ առումով իհարկե, հոմանիշներ չեն, սակայն նկարագրության մեջ համարժեքություն են դրսևորում՝ ունենալով հոմանիշային ընդհանուր համընկնում՝ հուսահատության իմաստով, այսինքն՝

սրտաբեկ եղեն – հուսահատվեցին.

թողին զնա եւ փախեան - հուսահատվեցին և փախան.

Պետրոս ուրացաւ - հուսահատվեց և ուրացավ.

Թումաս թերահաւատ եղեւ - հուսահատվեց հավատի մեջ.

Աստուածածին կոյսն՝ սրով տրտմութեան խոցեցաւ - հուսահատվեց իբրև մայր:

Այստեղ, ըստ էության գործ ունենք հոմանիշի ծավալային տարբերակի հետ, երբ կա իմաստի մասնակի համընկնում, տվյալ դեպքում՝ հուսահատության: Մյուս կողմից, եթե փորձենք «հուսահատություն» բառի հոմանիշները բերել, ապա այդ շարքում անպայման տեղ կգտնեն և՛ «սրտաբեկ լինել»-ը, և՛ «փախչել»-ը, և՛ «ուրանալ»-ը, և՛ «թերահավատությամբ լցվել»-ը և՛ «իբրև սրով խոցվել»-ը:

Ինչպես հայտնի է, հոմանիշը կարող է իմաստի լրիվ համընկնում դրսևորել (այսպես կոչված **նույնանիշ**

---

[12] Նույնը, էջ 82:

հոմանիշներ՝ կոտրել-ջարդել) և իմաստի մասնակի համընկնում ունենալ (**համանիշ հոմանիշներ**)։

Վերջիններս կարող են դրսևորել **իմաստաբանական, գործառնական - ոճական, և կապակցական** տարբերություն-ներ։

Մասնակի համընկնում ունեն, օրինակ՝ սնուցանել և կաթն ջամբել. հոմանիշները. առաջինը համագործածական բառերի շարքում է, երկրորդը՝ գրական։ Բացի այդ, սնուցանել նշանակում է՝ կերակրել ընդհանրապես, իսկ կաթն ջամբել՝ կերակրել միայն կաթով, այսինքն առկա է նաև հոմանիշության աստիճանական տարբերություն.

դժուարըմբեր - անտանելի. առաջինը համագործածա-կան բառերի շարքում է, երկրորդը՝ գրական,

քարբ, այսինքն՝ **արքայիկ (օձ),**

ոմանց **անկումն – ոմանց գլորումն** (այստեղ աստիճանական տարբերություն կա. անկումը ընկնելն է, իսկ գլորվելը ընկնել, ապա շարունակել ցած ընկնելը).

«պարտ է ընդունիլ զՔրիստոս եւ բառնալ ի ձեռս մեր՝ **բարի գործովք** և **ողորմութիւն առնելով.**»[13]. **ողորմութիւն առնել-**ը բարի գործերի մի մասն է.

«հրէայքն ... որք **ուրացօղք եղեն և աստուածամարտք»[14].** սաստկական առումով **աստուածամարտք** հոմանիշը ավելի է ընդգծում ուրացօղք լինելու հետևանքները:

---

[13] Նույնը, էջ 86:

[14] Նույնը, էջ 82:

Հետևյալ օրինակում հեղինակը ինքն է հուշում հոմանիշության առկայությունը. «Զի ուր **երկիւղ տեառնէ**, ա՛նդ է և **պատւիրանաց պահպանութիւն, և հոգւոյ եւ մարմնոյ մաքրութիւն**», այսինքն՝ «պատվիրանապահությունը, հոգու և մարմնի մաքրությունը» հոմանիշ են «երկիւղ տեառնէ» բառակապակցությանը:

Գործառնական-ոճական հոմանիշների փայլուն շարք են Հովհաննես Մկրտչին տրվող մնացյալ ինքնատիպ բնութագրումները, որ մեր լեզվի ոճական հնարավորությունների յուրօրինակ հատված է.

յառաջընթացն փրկչին. եւ արուսեակն արեգական, Հօր առաքեալն. եւ Որդւոյ մկրտիչն, ձայնն բանին. քարոզօղն արքայութեան. եւ աւետաւորն Ադամայ, բարեկամն փեսային. և ճրագն ի վերայ աշտանակին, տատրակն անապատի. և զարնանաբեր ծիծեռն, մեղաւորաց բարի խորհրդակիցն. եւ Հերովդէի յանդիմանի, հին օրինաց փարատօղն. և մարգարէից աւարտօղն, առաքելոց սկսանօղն. և ճշմարիտ խոստովանօղն, վկայն արդարութեան. և մարտիրոսն սուրբ, կարապետն և մկրտիչն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, նախընթաց և կարապետ լինի փրկչին, աւետաւոր զալստեաննն Քրիստոսի, ամլածին և ծերածին զաւակ:

Հատվածն ավարտվում է սրբին ուղղված նախադասությամբ, որտեղ հոմանիշների շարքը շարունակվում է. «Որ եւ ի բոլոր սրտէ՝ արտասւալիր աչօք՝ ի ծունկս անկեալ հառաչեմք առ քեզ. ո՛վ **միջնորդ շնորհաց եւ**

լրումն օրինաց. հրեշտակդ ի մարմնի եւ ձայնդ յանապատի. սերովբէ հողեղէն և մարմնաւոր քերովբէ»[15]**.** միջնորդ շնորհաց, լրումն օրինաց, հրեշտակդ ի մարմնի, ձայնդ յանապատի: Վերջինս ավելի հայտնի է «**ձայն բարբառի յանապատի**» բառակապակցությամբ:

Ինչպես տեսնում ենք, շարքն ամբողջությամբ աստվածաշնչյան պատումների, գեղարվեստական և հռետորական խոսքի համադրությամբ է կառուցված, այսինքն գործ ունենք գործառնական-ոճական տարբերություններ ներկայացնող հեղինակային հոմանիշների հետ:

Աստիճանական տարբերությամբ են բնութագրվում **ձայն ածէ և աղաղակէ** հոմանիշները, որտեղ երկրորդ եզրը բնութագրվում է ուժգնության ավելի բարձր աստիճանով. «Նախ զի տատրակն երկար **ձայն ածէ և աղաղակէ**»[16]**:**

Հետաքրքրական է արդի հայերենում հոմանիշ ընկալվող այն բառերի քննությունը, որոնք դեռ Տաթևացու օրոք դիտարկվել են իբրև նրբիմաստներով տարբերվող բառեր.

պանդուխտ, նշդեհն, եկն - «**պանդուխտ**, որ եկեալ է յայլ գաւառէ ի մէջ մեր և կարօտ է տան և ժառանգութեան և այլոց» («Գիրք քարոզութեան «Ամառան» հատոր, 360). «**նշդեհն**,, որ կամաւ թողեալ է զազգն իւր և զհայրենիս և յօտարութիւն շրջի անինչ» (նոյն տեղը). «**եկն**, որ եկեալ է ի մեզ և կարօտ է

---

[15] Նույնը, էջ 108:

[16] Նույնը, էջ 91:

հաւատոց և բարեաց, գործոց, խրատու և ուսման, որոց պարտ է ողորմի առաւել և տալ զպիտոյսն» (նույն տեղը):

Կռիւ, մարտ, պատերազմ - «**Կռիւն**, որ է լեզուաւ. **մարտն**, որ է անձամբ, **պատերազմ**, որ է սրով և աղեղամբ» (նույն տեղը, 393):

Նույնքան բազմաիմաստ է «Գիրք քարոզութեան «Ձմեռան» և «Ամառան» հատորներում հականիշ բառերի անհատական կիրառությունը, ինչը քարոզգրքերի լեզուն դարձրել են հարուստ, ճոխ և ինքնատիպ: Վերջինիս նպաստել է նաև հրապարակախոսական, հռետորական խոսքին հատուկ ոճական հնարքների հմուտ գործածությունը, մի բան, որ հատուկ է Տաթևացու երկերի ոճին ընդհանրապես:

Իբրև օրինակ բերենք «Ամառան» հատորում զետեղված է Տաթևացու **«Նորին Գրիգորի Ներբողեան ողբերգաբար սգեալ ի թաղումն տիեզերալոյս վարդապետին իւրոյ Յօհաննու Որոտնեցւոյ»** փոքրիկ երկից, որն ի թիվս ոճական հնարանքների բազմազանության, հականիշների բացառիկ գործածությամբ է աչքի ընկնում, որտեղ **ո՞վ** ձայնարկության և **ան-** ժխտական նախածանցով բառերի կրկնությամբ մի կողմից ներքին ռիթմ է ստեղծվում. վերջինս դառնում է նաև **հակադրության ընդգծման միջոց,** և մյուս կողմից՝ հականիշների ինքնատիպ գործածությունը նույն հատվածում նոր նրբիմաստով է ներկայացնում բառակապակցությունը. «Ո՜վ անկշռելի տարակուսիս: Ո՜վ անլոյծ երկանցս: Ո՜վ ծանրագոյն տրտմութեանս: Ո՜վ

աղէխարշ գորովոյս: Ո՜վ պակուցանօղ տագնապիս: Ո՜վ զարհուրելի երկիւղիս: Ո՜վ անդառնալի վճռիս: Ո՜վ անզիւտ կորստեանս: Ո՜վ անխաղաղ ալեացս: Ո՜վ անհանգիստ խռովութեանցս: Ո՜վ անբերելի սգոյս: Ո՜վ անդադար լալեացս: Ո՜վ անվճար ողբոյս: Ո՜վ անեզր աղաղակիս: Ո՜վ անճաճանչ խաւարիս: Ո՜վ անառաւօտ գիշերոյս: Ո՜վ անել բանտիս»[17]:

Իսկ ընդհանրապես, «Գիրք քարոզութեան «Ձմեռան» և «Ամառան» հատորներում հականիշությունը շատ հաճախ կառուցվում է **«այլ», «իսկ»** շաղկապներով, **«ոչ»**, **«ան»** ժխտական դերանուններով, երբեմն նաև հակադրությունն առավելագույն շեշտող **«հակառակ»**, **«ընդդէմ»** բառերով: Բնորոշ օրինակ է աղոթքի մասին քարոզը, որ հեղինակը կառուցել է հականիշների մի քանի աստիճանի հակադրումով, այսինքն կա բառերի (պտղաւէտ-անպտուղ), ապա՝ բառակապակցությունների (պտղաւէտ աղօթք-անպտուղ աղօթք), և ի վերջո գործողությունների հակադրում, որի արդյունքում քարոզն ավելի պատկերավոր է դարձել. «Զի **այլ** է պտղաւէտ աղօթելն և **այլ** է անպտուղն... »[18]. «Զի յորժամ զմիտս և զխորհուրդս և և զզգայարանս ի միասին ժողովեմք և զոր ասեմք լեզուաւ, **մտօք** զայն **խորհիմք**, այս է **պտղաւէտ աղօթքն** և ընդունելի աստծոյ: **Իսկ** յորժամ լեզուաւ աղօթեմք և

---

[17] **Գրիգոր Տաթևացի**, *Գիրք քարոզութեան, Ամառան հատոր*, Կ.Պոլիս, 1741, էջ 341:

[18] **Գրիգոր Տաթևացի**, *Գիրք քարոզութեան, Ձմեռան հատոր*, 91:

մտօք ոչ խորհիմք, այս է **անպտուղ աղօթքն** և այս ոչ չար է և ոչ բարի: Իսկ յորժամ լեզուաւ աղօթեմք և մտօք չարն խորհիմք...., այս ամեննիմբ չար է և յանցանք մահու չափ, զի լեզուն և միտքն **հակառակ** են միմեանց»[19]:

Ներկայացնելով ժամանակի սովորույթները՝ Տաթևացին նկարագրում է հարսնախոսության և հարսանիքի ողջ ընթացքը, որտեղ հականիշներն ընդգծում են սահմանված բարոյական նորմերը կամ էլ այլաբանական իմաստ ձեռք բերած արարողակարգերը, ընդ որում շարադրանքից պարզվում է դրա և՛ աշխարհական, և՛ հոգևոր բնույթ կրելը. հարսնախոսության և հարսանիքի պարտադիր պայման է եղել ըստ հեղինակի՝ պսակի մատանին, ինչպես նաև ամուսնացողների համաձայնությունը, փեսաւերների [փեսայի կողմի բարեկամներ] և հարսնածուների [հարսի կողմի բարեկամներ] ներկայությունը. «...մատանին ոչ է պարտ որ լինի **արձակ** կամ **նեղ**...»[20].

«Եւ նախ սկիզբն պսակին նշանն է, որ կտարի յերկուց, այսինքն՝ **ի հաւանական խօսիցս** և ի նշան է մատանւոյն և յայլոցն: Զի թէ երկու կամքն ոչ հաւասարին և ոչ հաւանին, անհաստատ է պսակն, որպէս **բռնութեամբ և**

---

[19] Նույն տեղը, էջ 34:

[20] Նույն տեղը, էջ 200:

կամայն: Եւ **հաւանումն կամացն** երևի ի տեսանելն աչօք, և ի խօսիլն լեզուաւ»[21].

«Եւ յայն հետէ [այսինքն վաղնջական ժամանակներից] սկսան մարդիկ նախ խօսիլ զհաւանական խօսս **միջնորդիւ** և **անընդմիջաբար** և ապա դնել նշան հարսին և փեսային միջնորդութեամբ քահանայից և արանց և կանանց որպէս և ասացաւ»[22] .

«Իսկ յորժամ արտաքս ելանեն յեկեղեցւոյն, հարսն լինի **ի ձախ կողմն** փեսային և յորժամ նստին ի բարձր տեղւոջն զոր կոչեն թախտ կամ հաճլէք, փոխէ և **յաջ կողմն** նստուցանէ զհարսն»[23] :

Հականիշների հաջորդ խումբը ի մի ենք բերել հեղինակի **բարոյախրատական** վերլուծություններից.

...զի ոչ ունին զկապ և զ**երկիւղ ծառայական**, այլ զ**որդիական սէր** («Գիրք քարոզութեան «Ամառան» հատոր, 188).

...զ**երկրաւոր** **և** զ**շնչաւոր** **իմաստութիւն** փոխեաց յ**երկնաւոր և ի հոգևոր իմաստութիւն** (նույն տեղը, 188).

Երրորդ, ընդդէմ **ճշմարտութեան** հակառակի [սուտն], որպէս ասեն, թէ՝ **ստոյն** շահն այն է, որ, որ ըղորդին այլ չհավատան. (նույն տեղը, 222).

---

[21] Նույն տեղը, էջ 199:

[22] Նույն տեղը, էջ 199:

[23] Նույն տեղը, էջ 202:

Հոգին սուրբ փախչի ի **սուտ խօսից**, այլն սպասաւոր հրեշտակն մեր, զի **ճշմարտութեան մերձ են** և օգնական և ի ստութենէն **ի բաց հեռանան** (նույն տեղը, 222).

Թէ որ ունիցի **բարի խօս** և բարի զրոյց, հազար բարութիւն ելանէ ի նմանէ... թէ **չար խօսք** ելանեն՝ ստութիւնք, հայհոյութիւնք, բարկութիւնք, բամբասանք և այլն, նման են սերմնակաթին... (նույն տեղը, 222 – 223).

«...մի՛ ասեր **մի անգամ** ողորմեցայ, բաւական է **այլ հանապազ** արա» (նույն տեղը, 368).

«...ամենայն վարձ բարեաց **նովին չափով** չափի: Իսկ ողորմութիւն միայն՝ **հարիւրապատիկ և հազարապատիկ**». (նույն տեղը, 367).

...ամենայն մեղաւոր զինքն **յանցաւոր զիտէ**, վասն այն **զղջանայ; Իսկ** հերետիկոսն՝ վասն հպարտութեան իւրոյ զինքն ճշմարիտ և **ուղիղ կարծէ**, վասն որոյ **ոչ զղջանայ**». (նույն տեղը, 439).

Հայտնի է նաև Տաթևացու հանրագիտակ հեղինակ լինելու հանգամանքը: Հոմանիշ, հականիշ, համանունների օրինակները, ինչպես տեսանք, բազմաթիվ ոլորտներից են, այսինքն բազմաթիվ են իմաստային դաշտերը՝ բարոյախրատական, ազգագրական, հոգևոր ոլորտ, շրջակա միջավայր, կենցաղ և այլն:

Grigoryan Susanna - Word-Semantic Groups of Vocabulary of “Winter” and ”Summer” Tomes” of the “Preaches book”.- Grigor Tatevatsi as unique expression of language thinking - Gregor

Tatevatsi in the “Winter” and ”Summer” tomes”' the “Preaches book” is used **synonyms** as a way of interpreting words and phrases, or as an explanation for a reciprocal word, or that is very popular in this work in the broad sense of the synonym, that is, in a specific context, synonyms become completely different semantic phrases, but they are connected by a specific contextual meaning. **Antnonyms** in this books are used as a compilation of phenomena, or as extreme points of phenomena. In this work, according to the semantic spectra, **synonyms** and antonyms are either from religious, or from the environment, or from customs. The author skillfully uses the antonyms of his idioms.
Homonyms are much rare in the “Winter” and ”Summer” tomes” of the “Preaches book” Grigor Tatevatsi.

Григорян Сусанна – Словесно-смысловые группы словарного запаса "Зимного" и "Летнего" тома "Книги проповедей". -Григора Татеваци как уникальное выражение языкового мышления. - Григор Татеваци в "Зимнем" и в "Летнем" томе" "Книги проповедей" **синонимы** в основном употребляет либо как способ толкования слов и словосочетаний, либо как объяснение взаимозаимственного слова, либо что очень распростронено в этом труде - в широком смысле синонима, то есть в конкретном контексте синонимами становятся совершенно разные смысловые словосочетания, однако их соединяет конкретный контекстный смысл. А **антонимы** употребляет либо как соопостовления явлений, либо же как крайние точки явлений. В этом труде по смысловыми спектрами антонимы или из религиозных, или из окружающей среды, или же из обычаев.

Автор очень умело употребляет синонимы и антонимы созданные им крылатых словах.

Намного редко встречаются в "Зимнем" и в "Летнем" томах "Книги проповедей" Григора Татеваци **омонимы.**

Զաքարյան Հովհաննես
(«Տաթև» ԳԿՀ)

Հ.-Ե. *(a)u̯(e)- ԱՐՄԱՏԻՑ ՍԵՐՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայտնի են ***(a)u̯(e)-** տեսքով հ.-ե. մի քանի համանուն արմատներ՝ հետևյալ իմաստներով: 1. «հոսել; թաց; ջուր», 2. «լինել, ապրել, բնակվել; բնակիչ; բնակատեղի, տուն», 3. «պարանոց, վիզ, ճիտ, ծոծրակ», 4. «գին, վճար», 5. «վա՛յ, ափսոս», 6. «խոսել», 7. «գիշերել, քնել», 8. «հազնել», 9. «սիրել, ցանկանալ, ընտրել», 10. «գլորել, պտտել, ծռել», 11. «պատռել, ճանկռել, քերծել», 12. «այրել, տաք», 13. «բարձրացնել», 14. «հող, գետին», 15. «ճնշել, սեղմել, փակել, ծածկել», 16. «տեսնել», 17. «քայլել, գնալ», 18. «մազ, բուրդ», 19. «զառ, խոյ», 20. «զայլ», 21. «զարուն»: 22. «հյուսել» և այլն[1]:

Սրանցից առաջին չորսին անդրադարձել ենք **վ** սկզբնահնչյունի հ.-ե. ծագմանը նվիրված մեր երկու

[1] Տե՛ս **J. Pokorny**, *Indogermanisches etymologisches Wörterbuch.* Bern-München, 1959 (http://dnghu.org/ indoeuropean.html) (այսուհետ՝ Պոկ.); **S. Nikolaev**, *Database of Indo-European etymology.* — http://starling.-rinet.ru/cgi-in/response.cgi?root=config&morpho=0&basename=\data\ie\piet&first (այսուհետ՝ Նիկ.), *Wiktionary* (https://en.wiktionary.org/wiki) (այսուհետ՝ ՎԲԱ), *Викисловарь* (https://ru.wiktionary.org/wiki) (այսուհետ՝ ՎԲՌ); **Հ. Աճառյան**, *Հայերէն արմատական բառարան*, հհ. 1-4, Ե., 1971-1979 (այսուհետ՝ ՀԱԲ); **Գ. Ջահուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010 (այսուհետ՝ ՀՍԲ) և այլն:

հոդվածներում[2]։

Սույն հոդվածում կանդրադառնանք 5-6-րդ արմատներին։ Բայց մինչ այդ հիշեցնենք հայերեն **վ** սկզբնահնչյունի հ.-ե. ծագման վերաբերյալ մեր տեսակետը։

Տողերիս հեղինակի հիշյալ հոդվածներում փորձ է արվել փարատելու այն նախապաշարումը, որ եթե հայերենում բառը սկսվում է **վ**-ով, ուրեմն ամենայն հավանականությամբ իրանական փոխառություն է[3]։ Մինչդեռ իրականությունը հետևյալն է։ Հ.-ե. *au̯(e)- հնչյունակապակցությամբ սկսվող որոշ բառերի դեպքում ձայնավորից առաջ *au̯- > աւ- անցումից այնքան հետո, երբ այլևս չէր գործում *u̯ > գ անցման օրենքը, անկայուն սկզբնաձայնավորն ընկել է, և միջձայնավորային դիրքում գրեթե /վ/ հնչող, իսկ այդժամ բառասկզբում հայտնված **ւ**-ը (այն էլ ձայնավորից առաջ) օրինաչափորեն վերածվել է **վ**-ի (քանի որ հայերենում բառասկզբում **ւ** չի կարող լինել)։ Արդյունքում ունենում ենք *au̯- > աւ- > (ա)ւ- > վ- հնչյունական անցման բանաձևը։

---

[2] **Հ. Զաքարյան**, *Հայերենի վ- սկզբնահնչյունի հնդեվրոպական ծագման մասին*, // «Հայոց լեզվի պատմական ուսումնասիրության արդի խնդիրներ (գիտական հոդվածների ժողովածու)», Ե., «Գիտություն», 2019, էջ 34-45 (այսուհետ՝ Զաք.-1); **Հ. Զաքարյան**, *Վ- սկզբնահնչյունով հայերեն մի քանի բառերի հնդեվրոպական ծագման մասին*, // «Լեզու և խոսք» էլեկտրոնային հանդես, 2021, թիվ 1 (պատրաստվում է հրապարակման) (այսուհետ՝ Զաք.-2)։

[3] Տե՛ս, օրինակ, **Հ. Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, հ. 1, էջ 318; **Գ. Ջահուկյան,** *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան,* Ե., 1987 (այսուհետ՝ ՀԼՊ ՆԺ), էջ 557-558; ՀԱԲ, 4, 350, Վտակ։

Նկատի ունենալով նաև հնարավոր այլ դիրքերը՝ կարող ենք փաստել, որ հ.-ե. բառասկզբի *au̯- [*au-, *aw-] / *ou̯- [*ou-, *ow-] հնչյունակապակցությունը հայերենում զարգացել է առնվազն չորս տարբեր ուղիներով։

1. *(a)u̯- > **գ-** (ձայնավորից առաջ)՝ *(a)u̯osio- > *wosio- > *g^wosio- > **գոյ**,

2. *(a)u̯- > **ու-** (բաղաձայնից առաջ)՝ *(a)u̯(e)-l-kh- > *ulkh- > **ուղխ** «հեղեղ»,

3. *au̯- > **աւ-** (*a > **ա**-ի պահպանմամբ)՝ *au̯a-n- > **աւան** (ձայնավորից առաջ), *aulio- > **աւղի (օղի)** (բաղաձայնից առաջ),

4. *au̯- > *av- > *v- > **վ-** (*a-ի ուշ անկմամբ)՝ *au̯a-n- > *avan- > *(a)van- > *van- > **վան** (ձայնավորից առաջ)։

Հ.-ե. *(a)u̯(e)- «վա՜յ, ափսոս»

Այս արմատը գիտական աղբյուրներում ներկայացված է տարբերակներով՝ *(o)way- (ըստ Նիկոլաևի) կամ *u̯ai- (ըստ Պոկոռնու և Ջահուկյանի (տե՛ս ՀԼՊ ՆԺ, 155, 198))։ Դրանից սերված տարալեզու բառերի թվում տրված է նաև հայ. **վա՜յ** «վա՜խ, ավա՜ղ, ափսո՜ս»[4] բառը։[5] Դա

---

[4] Հայերեն ստուգաբանական բառարաններում այս բառը բացակայում է։

[5] Այլ լեզուներից կարելի է հիշել՝ հ.հնդ. uvé, ավեստ. vayōi, avōi, āvōya, հ.հուն. ὀά, οὐά, οὐᾶ, οὐαί «1. ավաղ, վա՜խ, 2. վիշտ, ցավ», լատ. vāh, vae, ֆր. ouais, ալբ. vaj, մ.իռլ. fāe, կիմր. gwae, գոթ. wai, հ.իսլ. vei «վա՜յ», ռուս. увы, հ.սլավ. оувы «ավաղ», լիտվ. vaĩ «վշտանալ, ցավել, տառապել», լատվ. vaîdêt «1. մորմոքել, ցավել, 2. բողոքել», անգլ. woe «ցավ, վիշտ» ևն (Պոկ., № 2078, *u̯ai-; Նիկ., *(o)way; ՎԲԱ, woe)։

միանգամայն համապատասխանում է վերոհիշյալ *u̯ > **վ** անցման մեր մեկնությանը: Նկատի ունենալով դա, ինչպես և անկայուն սկզբնաձայնավորից հետո **վ – ւ** լծորդությունը՝ հ.-ե. նույն արմատից կարելի է բխեցնել նաև **աւաղ**, **վա՛խ, վա՛շ-վի՛շ (վո՛ւշ-վո՛ւշ), վիշտ, վայվաղայ, վաղվաղկիւն** բառերը:[6]

Աւաղ (աւախ, աւեղ-) «1. վա՛յ, վա՛խ, ափսոս, 2. նիհար, վատուժ, տկար» բառը (որից՝ **աւաղանք** «ողբ, հառաչանք», **աւաղական** «ողբալի, վշտալի», **աւաղաբեր** «բոթաբեր, գուժաբեր») անհայտ ծագման են համարել Հ. Աճառյանը (ՀԱԲ, էջ 352-353) և Գ. Ջահուկյանը (ՀՍԲ, 98-99): Իմաստից և ձևից ելնելով՝ առաջարկում ենք **աւաղ** <*au̯ā-l- <*(o)u̯ai- «ավաղ, ափսոս» ստուգաբանությունը: Մտածելու առիթ է տալիս բառի 2-րդ՝ «նիհար, վատուժ, տկար» իմաստը (ՀԱԲ, 1, 352-353): Խնդիրն այն է, որ Ց. Պոկոռնու բառարանում կա առանձին *u̯ãi-, *u̯ī- «թույլ, խեղճ» արմատը (Պոկ., № 2079)[7], որից կարող էր ծագած լինել նշված 2-րդ իմաստը՝ որպես 1-ինի համանուն: Կամ էլ Պոկոռնու նշած 2-րդ արմատը պետք է համարել 1-ինի իմաստային զարգացում (իմաստային անցման համար հմմտ. **աւաղիկ, աւաղուկ** «ավաղելի,

---

[6] Երբեմն նույն արմատի հետ է կապվում **գայլ** բառը (տե՛ս **H. Martirosyan**, *Etymological dictionary of the Armenian inherited lexicon.* — «Leiden Indo-European Etymological Dictionary Series, Volume: 8», Brill, 2008, էջ 591), որին այլ մեկնություն են տվել Աճառյանը, Մեյեն, Պոկոռնին են (ՀԱԲ, 1, 511-512):

[7] Փակագծերում նշված են Ց. Պոկոռնու բառարանի առցանց տարբերակի բառահոդվածների հերթական համարները:

խղճալի, եղկելի»[8], որից մեկ քայլ է մնում մինչև «նիհար, վատուժ, տկար» իմաստը:

Վա՛խ (որից՝ **ախուվախ** «վայվույ») բառը (Մալխ., 4, 288) բացակայում է ստուգաբանական բառարաններում: Այս ձայնարկությունը **վա՛յ**-ի հոմանիշն է: Ձևային առումով էլ հարում է **աւաղ** հոմանիշին: Ուստի կարելի է առաջարկել **վա՛խ** <*վա՛ղ <*(o)u̯ā-l- <*(o)u̯ai- «ավաղ, ափսոս» ստուգաբանությունը (**ղ – խ** անցման համար հմմտ. *ածուղ – ածուխ, սանդուղ – սանդուխ, զազաղ – զազախ, խողոմել – խոխոմել, ջնջղել – ջնջխել* ևն):

Վա՛շ-վի՛շ (**վո՛ւշ-վո՛ւշ**) (ափսոսանքի, վշտի բացականչություն, որից՝ **վաշվշոց** «ախուվախ, հեծեծանք, ողբ» (Մալխ., 4, 300, 352)) ձայնարկությունը ստուգաբանական բառարաններում չկա: Արմատը **վայ**-ի և **վախ**-ի տարբերակ է՝ *(o)u̯ā-k̓w-՝ այլ (շ < *k̓w) աճականով և ձայնդարձի այլ աստիճաններով (ա/ի/ու < *ā/ē/ō):

Վիշտ «հոգեկան ցավ՝ կսկիծ՝ տառապանք» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը, հետևելով Հյուբշմանին և Բեյլիին, համարել են փոխառություն պահլավերեն ենթադրյալ *višt ձևից (ՀԱԲ, 4, 342, ՀՍԲ, 712): Իմաստային առումով հիմնվելով հիշյալ հ.-ե. *(o)u̯ai- արմատից սերված և «վիշտ» նշանակող այլալեզու բառերի վրա (տե՛ս վերը՝ ծան. 5), իսկ ձևային առումով՝ **վի՛շ** (**վա՛շ, վո՛ւշ**) ձայնարկության վրա՝ առաջարկում ենք **վիշտ** <*(o)u̯ē-k̓w-d- <*(o)u̯ai- «ավաղ, ափսոս» ստուգաբանությունը:

---

[8] Տե՛ս **Ս. Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան*, հհ. 1-4, Ե., 1944-1945 (այսուհետ՝ Մալխ.), հ. 1, էջ 291:

Վայվաղայ (վաղվաղայ[9]) «կոծ, աւաղանք, վա՜յ» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 300), Գ. Ջահուկյանը համարել է բնաձայնական կազմություն (ՀՍԲ, 703): *Վայ+վաղ+այ* բաղադրության մեջ առկա է վերոհիշյալ *վա՜յ* արմատը: Երկրորդ՝ **վաղ** արմատը ակնհայտորեն կապված է *վա՜խ, վա՜յ, աւա՜ղ* բառերի հետ, և դրա համար առաջարկում ենք **վաղ** <*(o)u̯a-l- <*(o)u̯ai- «ավաղ, ափսոս» ստուգաբանությունը: Բառի երկրորդ տարբերակը կրկնավոր է այդ նույն *վաղ* արմատից: Իսկ *-այ* վերջածանցի համար հմմտ. *առ-արկ-այ, հիմ-այ, արք-այ, ան-ուղղ-այ, ան-զգ-այ* ևն[10]:

Վաղվաղկիւն «լացի՝ ողբի ձայն» անստույգ բառը համարվել է անհայտ ծագման (ՀԱԲ, 4, 298, ՀՍԲ, 702), չնայած Գ. Ջահուկյանը համեմատել է *վայվաղայ* բառի հետ (ՀՍԲ, 703): Եթե սա *վաղվաղայ*-ի հիմքի *վաղվաղիւն* հնարավոր ածանցյալի սխալագրությունը չէ, ապա կարելի է ենթադրել *վաղվաղ+կ+իւն* կազմություն, որտեղ **–կ-**ն կա՛մ սղված *-ուկ* ածանցն է (հմմտ. *եղ-ուկ, ճարճատ-ուկ, ծվծվ-ուկ, խռնչ-ուկ, ճայթ-ուկ* ևն), կա՛մ սաստկական մասնիկ է (հմմտ. *սահմռ-կ-ել, թնծ-կ-ալ, ործ-կ-ալ, փռթ-կ-ալ, պոռթ-կ-ալ* ևն) (**-իւն** ածանցի համար տե՛ս ՀՍԲ, 808):

---

[9] Սրա բարբառային տարբերակն է **վալվալայ** «1. ավաղանք, վայնասուն, աղմուկ-աղաղակ, 2. իրարանցում, խառնաշփոթ» բառը (տե՛ս *Հայոց լեզվի բարբառային բառարան,* հհ. Ա-Է, Ե., 2001-2012 (այսուհետ՝ ՀԼԲԲ), հ. Զ, էջ 11):

[10] Տե՛ս նաև *Հայոց լեզվի պատմական քերականություն,* հ. 2, Ե., 1975, էջ 88-89 (այսուհետ՝ ՀԼՊՔ):

Այս շարքին կարելի է ավելացնել նաև **գեր, ուլուլալ** և մի քանի այլ բառեր։

Գեր «ողբ, լաց, կոծ» բառը Գ. Ջահուկյանը հարցականով համարել է փոխառություն իրանական աղբյուրից (ՀՍԲ, 156), սակայն Հ. Աճառյանը նախապես մերժել է այդ կարծիքը հնչյունական անհամապատասխանության և այլ նկատառումներով (ՀԱԲ, 1, 538-539)։ **Վ – գ** լծորդությունը նկատի ունենալով և իմաստից ելնելով՝ առաջարկում ենք **գեր** <*u̯e-r- <*(o)u̯ai- «ավաղ, ափսոս» ստուգաբանությունը։

Ուլուլալ «լալ, ողբալ» բառի արմատը ևս կարելի է բխեցնել նույն արմատից՝ ***ուլ-** <*u̯-l- <*(a)u̯(e)- «վա՛յ, ափսոս» ստուգաբանական բանաձևով։ Սակայն ընդունված է դրա ***ուլ-** <*ōl- <*el- (հ.-ե. բնաձայնական արմատ) ստուգաբանությունը (ՀԱԲ, 3, 593, ՀՍԲ, 748)։ Այս բառի արմատի ձայնդարձային և աճականով տարբերակների ածանցյալներ են **ողող(անք)** «ողբ, լաց» (ՀԱԲ, 3, 555), **ողբ** «լաց ու կոծ» (ՀԱԲ, 3, 553)**, աղատել** «դառն ողբալ» (ՀԱԲ, 1, 122)**, եղար (եղեր)** «ողբ, կոծ» (ՀԱԲ, 2, 15)**, եղուկ** «ավա՜ղ, ափսո՜ս, վա՜յ» (ՀԱԲ, 2, 22) և այլ բառեր[11]։ Մեր առաջարկած ստուգաբանության դեպքում կապ է հաստատվում **աւա՜ղ** բառի և դրա **եղո՜ւկ** հոմանիշի միջև, որի առկա մեկնությունները համարվում են հակասական ու կասկածելի (ՀՍԲ, 215, ՀԱԲ, 2, 22)։ Իսկ այդ կապի դեպքում

[11] Գ. Ջահուկյանը սրանց է միացրել նաև **ողոքել, աղաչել, աղերսել, աղօթել** «խնդրել» (ՀՍԲ, 602, 35, 36) բառերը՝ որպես հ.-ե. բնաձայնական *el-/*ol- արմատի ածանցյալներ։

բացատրելի է դառնում իմաստային և ձևային անցումը դեպի **եղկելի** «1. ողբալի, թշվառ, 2. նողկալի, զզվելի», **ե՜ղկ (եա՜ղք**, **յա՜խկ)** «թո՜ւհ, զզվելի է» (ՀԼԲԲ, Դ, 103)**, վա՜խկ** «թո՜ւհ, զզվելի է» (ՀԼԲԲ, Ձ, 12-13) բառերը: Այլապես անբացատրելի է մնում մանավանդ **վա՜խկ** բառի ծագումը, որի համար առաջարկում ենք ***վաղ-ուկ** <*u̯a-l- <*(a)u̯(e)- «վա՜յ, ափսոս» ստուգաբանությունը:

Հ.-ե. *(a)u̯(e)- «խոսել»

Հ.-ե. <*(a)u̯(e)- «խոսել» արմատից[12] հայերենում տարբեր ածականներով կամ ածանցներով սերվել են **աւճ (օճ)** «պատասխան, պատգամ» <*աւիճ <*au̯ēd-io- <*au̯e-d- (ՀԱԲ, 102), **աւետ (աւէտ)** «ուրախ լուր, ողջույն» <*au̯e(i)d- <*au̯e-d- (ՀԱԲ, 101)[13], **աւրեր (օրեր)** «անեծք, նզովք, նախատինք» <*au̯-ro-՝ կրնությամբ (ՀԱԲ, 104), **յուզեմ (ուզեմ՝ յոյզ** արմատից)[14] «1. փնտրել, խնդրել, հարցնել, 2. աղմկել, 3. շփոթել, խռովել»

---

[12] Տե՛ս նաև Պոկ., № 133, au̯-6, au̯ed- «խոսել», № 2124, u̯ekʷ- «խոսել», № 2167, u̯er-6 «զրուցել, խոսք», Նիկ. *Auk- «ճչալ, լալ», *wekʷ- «ասել, պատմել», *wap- «բղավել», *wAit- (-th-) «հայտարարել, դատապարտել», ՎԲԱ, *wekʷ- «խոսել, ձայնել, հնչել»:

[13] Տե՛ս նաև **Է. Աղայան**, *Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ*, Ե., 1974, էջ 35:

[14] Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը **յոյզ**-ը Հ. Հյուբշմանի հետևողությամբ համարել են փոխառություն պահլ. ենթադրյալ *yōz- «շարժվել, կռվել» արմատից (ՀԱԲ, 1, 403-404, ՀԱԲ, 169):

<*Hu̯-g$^{[h]o}$-[15], **ոզել** «ասել, խոսել, երգել» <*(u̯)og^{w}h- (ՀՍԲ, 599)[16], **գոզել** «ասել, գոչել» <*u̯og^{w}h- (*vog^{w}h-՝ ՀԱԲ, 1, 570, *u̯og^{w}h-՝ ՀՍԲ, 165, *Hu̯eg$^{[h]o}$-՝ Գամկ., 236), **գովել** «ներբողել, հռչակել, բարեբանել, խրախուսել»[17], **գոհ** «շնորհակալ, բավականացած» <*Hu̯-g$^{[h]o}$- (Համբ., 24-25), **գոչել** «բղավել» <*u̯ok^{w}-io- <*u̯e-k^{w}- (Պոկ., № 2124, u̯ek^{w}- «խոսել», ՀՍԲ, 168)[18] և այլ բառեր։[19] Նկատի ունենալով **գ-ւ-վ** լծորդությունը՝

---

[15] **Т. Гамкрелидзе, Вяч. Иванов**, *Индоевропейский язык и индоевропейцы,* Тбилиси, 1984 (այսուհետ՝ Գամկ.), էջ 803։

[16] Հ. Աճառյանն այս բառը համարել է հավաստի ստուգաբանություն չունեցող (ՀԱԲ, 3, 549)։

[17] **Վ. Համբարձումյան**, *Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ*, Ե., 2012 (այսուհետ՝ Համբ.), էջ 24-25։ Ի դեպ՝ Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը **գով-** արմատը համարել են փոխառություն իրանական ենթադրյալ *gōv- «գովել» ձևից (ՀԱԲ, 3, 582-583, ՀՍԲ, 554)։ Վ. Համբարձումյանը հստակ նախաձև չի ներկայացրել (նույն տեղում), ուստի առաջարկում ենք *(a)u̯o-ǵ- >**գով-** ստուգաբանական բանաձևը։

[18] Հ. Աճառյանը **գոչել**-ը համարել է բնաձայնական բառ՝ մերժելով սկզբնապես Հյուբշմանի, Մեյեի և այլոց առաջարկած վերոհիշյալ ստուգաբանությունը (ՀԱԲ, 1, 580)։

[19] Այլ լեզուներից կարելի է հիշել՝ հուն. αὖε «ճիչ», լիտվ. vadinù, vadìnti «կանչել, ճչալ» (Պոկ., № 133, *au̯-6, *au̯ed-), հ.հնդկ. vákti, vívakti «խոսել», vandate, -ti «գովք, գովաբանել, մեծարանք», vandanam «1. գովաբանություն, 2. զին, մրցանակ, 3. ողջույն», vandāru- «գովերգել, գովել», հուն. ἔπος «պատում, խոսք», ὑδέω, ὕδω «գովերգել, փառաբանել», լատ. vox, vōcis «ձայն», հ.իռլ. foccul «խոսք», հ.իսլ. ōmun «ձայն», ն.իսլ. ōmur «բարձրաձայն», անգլ.-սաքս. wōm(a) «աղմուկ», խեթ. ḫuk- «աղաչել», թոխ. A wak, B wek «ձայն» (Պոկ., № 2124, *u̯ek^{w}-), հուն. εἴρω «պատմել», գոթ. wrōhs, «ճառ, խոսք», waurd «բառ», լատ. verbum, հ.բ.գերմ. wort «խոսք, բառ», լիտվ. var̃das «անուն», ռուս. врать «ստել, խաբել» (Պոկ., № 2167, *u̯er-6), կելտ. *wek^{w}os, ալբ. ves «ասել» (ՎԲԱ, *wek^{w}-), անգլ. word «1. բառ, խոսք, 2. լուր, 3. հրահանգ, հրաման» (ՎԲԱ, word) են։

առաջարկում ենք նույն արմատից բխեցնել նաև **վէպ, վէգ, վէճ, վիճակ, վճիռ, վարկ, վկայ, վանկ (վանգ)** և այլ բառեր:

Վէպ «զրույց, պատում» բառը Գ. Ջահուկյանը կասկածով համարել է փոխառություն հին հուն. φέπος-ից, որն էլ ծագել է հ.-ե. *ueku- «խոսել» արմատից (ՀՍԲ, 710): Այդ կարծիքը, սակայն, որ ավելի վաղ հայտնել են Մյուլլերը և այլք, Հ. Աճառյանը հավաստի չի համարել և իր կողմից այլ բան չի առաջարկել (ՀԱԲ, 4, 336): Խնդիրն այն է, որ հունարենի **ε**-ն հայերենում պիտի տար ոչ թե **է**, այլ **ե**: **Է**-ն համապատասխանում է հուն. **η**-ին[20]: Իսկ **վէպ** բառը վերոհիշյալ *au̯- > աւ- > (ա)ւ- > **վ**- բանալիով կարելի է անմիջականորեն բխեցնել հ.-ե. *(a)u̯ei-b- <*(a)u̯(e)- «խոսել» նախաձևից:

Վէգ «վեճ, կազ, բանակռիվ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են փոխառություն իրանական աղբյուրից՝ պհլ. ենթադրյալ *veg «հարված, զարկ» ձևից (ՀԱԲ, 4, 334-335, ՀՍԲ, 710): Նկատի ունենալով, որ վեճը բանակռիվ է, այսինքն՝ խոսքով կռիվ՝ առանց մարմնական ուժ կիրառելու, առանց հարվածների, նաև այն, որ *u̯ek^{w}- «խոսել» արմատից սերված բառերի շարքում կա կիմր. gwaethl «վեճ, վիճաբանություն» բառը (Պոկ., № 2124, *u̯ek^{w}- «խոսել»), իսկ *au̯-6 «խոսել» արմատից սերված ձևերի շարքում՝ հ.հնդկ. vádati «բանակցել» բառը (Պոկ., № 133, *au̯-6 «խոսել»), հնարավոր ենք համարում **վէգ** բառի ծագումը նույն արմատի

[20] Հմմտ. *կուրէտ* < κουρήτες «քուրմ» (ՀԱԲ, 2, 666), *Կորէս* < Κόρης (hատկանուն) (ՀԱԲ, 2, 647), բայց՝ *կերատ* < κεράτιον «մի կշռաչափ» (ՀԱԲ, 2, 577), *Հերմէս* < Έρμής (hատկանուն) (ՀԱԲ, 3, 88) ևն:

*(a)u̯ei-g^{w}h- տարբերակից (*g^{w}h աճականով):[21] «Խոսք > վեճ» իմաստային անցման համար հմմտ. ռուս. ссора «վեճ, գժտություն» < հ.-ե. *swer- «խոսել, հնչել, հայհոյել, աղոթել» (ՎԲՌ, ссора), անգլ. brawl «1. աղմկալի վեճ, աղմկոտ կռիվ, 2. կարկաչյուն, խոխոջյուն», որ կապ ունի դան. bralle «խոսել, զրուցել, շաղակրատել» բառի հետ (ՎԲԱ, brawl):

Վէճ «բանակռիվ, տարաձայնություն» բառը, որ նախորդի հոմանիշն է, Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 335): Գ. Ջահուկյանը համարել է փոխառություն իրանական աղբյուրից՝ համեմատելով **վէգ** և ավ. *vaēγa «հարված, զարկ» բառերի հետ (ՀՍԲ, 710): Չկրկնելով **վէգ** բառի համար ասվածը՝ առաջարկում ենք **վէճ** <*(a)u̯ei-d-io- ստուգաբանությունը (*d աճականով և *-io ածանցով, որի մասին տե՛ս ՀԼՊ ՆԺ, 231):

Վիճակ «1. վիճելի խնդրի լուծումը պատահականությամբ, 2. բախտ, 3. իրադրություն, 4. ժառանգության բաժին, 5. հողաբաժին, 6. թեմ» բառի իմաստները հուշում են, որ սա **վէճ** բառի ածանցյալն է (վէճ+ակ): Մինչդեռ Հ. Աճառյանը Հ. Հյուբշմանի հետևողությամբ համարել է փոխառություն պահլ. vāīčak (vēčak) կասկածելի ձևից (ՀԱԲ, 4, 340): Գ. Ջահուկյանը համաձայն է այդ կարծիքին (ՀՍԲ, 711): Պետք է հաշվի առնել նաև, որ այս բառը հայերենում շատ տարածված և

---

[21] Տե՛ս նաև Համբ., 42, որտեղ դիտարկված է ոչ միայն **վէգ**, այլև դրա հոմանիշ **յոյզ** բառի ծագումնաբանական առնչությունը հ.-ե. հիշյալ *au̯- «խոսել» արմատին՝ առանց հստակեցնելու հայերեն բառերի բուն նախաձևերը (երկրորդի համար կարող էր լինել՝ **յոյզ** < ***ոյզ** < *(e)u̯-g^{w}h- < *(a)u̯(e)- «խոսել»):

իմաստաբանորեն զարգացած է, որ հավելյալ փաստարկ է բնիկ լինելու օգտին:

Վճիռ (վճուրք) «1. վեճը լուծող որոշում, 2. դատաստան, մեղադրանք, 3. հրաման» բառը Հ. Աճառյանը համարել է փոխառություն պհլ. vičir բառից (ՀԱԲ, 4, 346): Գ. Ջահուկյանը կրկնել է նույնը (ՀՍԲ- 713): Սակայն իմաստը և ձևը հուշում են, որ **վճիռ**-ը համարմատ է **վէճ** բառին: Այս և հարակից իմաստներով այլալեզու բառերից հիշենք՝ հ.սլավ. vaditi «մեղադրել», vada «մեղադրանք, զրպարտություն», թոխ. A watk-, AB wätk-, B yaitk- «հրաման» (Պոկ., № 133, *au̯-6, *au̯ed- «խոսել»), գոթ. wrōhjan «մեղադրել», ավեստ. urvāta- «որոշում», հ.հնդկ. vratá- «հրահանգ» (Պոկ., № 2167, u̯er-6 «զրուցել, խոսք»): Ուստի **վճիռ** բառի համար առաջարկում ենք *(a)u̯ē-d-io- (<*վիճ-) նախաձևը՝ **-իռ** ածանցով (**-իռ/-ուռ** ածանցի համար հմմտ. *կնճիռ, բռիռ, ծակուռ, ճմուռ, ակնուռ, ճապուռ* ևն) (տե՛ս նաև ՀԼՊՔ, էջ 87-88): «Խոսք – վճիռ» իմաստային անցման համար հմմտ. ռուս. приговор «վճիռ» բառը, որի արմատն է говор «խոսք, զրույց», տե՛ս նաև ՎԲՍ, word:

Վարկ «1. համարում, համբավ, 2. կարծիք, ենթադրություն, 3. որոշում, վճիռ» բառը (որից՝ **վարկած** «գիտական ենթադրություն») Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 322): Գ. Ջահուկյանը նախապես մտցրել է որպես բացառություն **վ**-ով սկսվող բնիկ հայերեն բառերի շարքը՝ **վարկ** «հեղինակություն, կարծիք» <*u̯er-k- «ասել, հանդիսավոր խոսել»[22], սակայն հետագայում համարել է փոխառություն

---

[22] Տե՛ս **Г. Джаукян**, *Очерки по истории дописьменного периода армянского языка*, Е., 1967, (այսուհետ՝ Ջահ.) էջ 267:

իրանական աղբյուրից՝ առանց իրանական սկզբնաձև նշելու և ընդամենը կասկածով ենթադրելով միջնորդավորված ծագում հ.-ե. *uer- «նկատել, ուշադրություն դարձնել» արմատից (ՀՍԲ, 707)։ Կարծում ենք՝ Գ. Ջահուկյանի նախկին կարծիքը միանգամայն ընդունելի է։ Նա իր այդ կարծիքից հրաժարվել է վերոհիշյալ նախապաշարման հետևանքով։ Ուստի առաջարկում ենք **վարկ** <*(a)u̯ə-r-gʷ- <*(a)u̯(e)- «խոսել» ստուգաբանական բանաձևը։

Վկայ «1. ականատես, 2. հաստատող, հավաստիացնող, ցուցմունք տվող, 3. ապացույց, երաշխիք, 4. նահատակ» բառը Հ. Աճառյանը համարել է փոխառություն պհլ. *vīkay ենթադրյալ ձևից, որի kay արմատը նշանակում է «բաժանել, անջատել» (ՀԱԲ, 4, 344)։ Չնայած իմաստը հեռու է, բայց Գ. Ջահուկյանը համաձայն է դրան (ՀՍԲ, 712)։ Մինչդեռ վկայությունը ականատեսի խոսքն է, ցուցմունքը, որի օգնությամբ վճիռներ են կայացվում վիճելի դեպքերի վերաբերյալ։ Այս և հարակից իմաստներով այլալեզու բառերից հիշենք՝ հ.իսլ. vāttr «վկայություն, ցուցմունք», vātta «վկայել, հաստատել», խեթ. huek-, թոխ. A wak, B wek «երդվել» (Պոկ., № 2124, *u̯ekʷ- «խոսել»)։ Ուստի կարծում ենք, որ **վկայ** բառը կարող էր անմիջականորեն ծագել հ.-ե. *(a)u̯(e)- «խոսել» արմատի *(a)u̯ē-gʷ- (<*վիկ-) տարբերակից՝ *gʷ աճականով և **-այ** ածանցով (ածանցի համար տե՛ս վերը՝ *վայվաղայ* բառի առիթով)։

Վանկ (վանգ) «1. հնչյուն, ձայն, հեգ, 2. մեղեդի» բառը (որից՝ **վանգել** «հնչել», **վանգիւն** «սրնգի հնչյուն»[23]) Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը Հ. Հյուբշմանի հետևողությամբ համարել են փոխառություն իրան. (պահլ.) vāng «ձայն, աղաղակ» ձևից (ՀԱԲ, 4, 304, ՀՍԲ, 703): Թվում է անառարկելի: Այնուամենայնիվ այս բառը, ինչպես նկատել են Տէրվիշեանը (ՀԱԲ, 4, 304), Վ. Համբարձումյանը (Համբ., 41), կարող է համարմատ լինել *գոչել, գոգել, ոգել* և այլ բառերի: Կարծում ենք՝ իրոք **վանկ (վանգ)**-ը հ.-ե. <*(a)u̯(e)- «խոսել» արմատի *(a)u̯ə-n-g^{w}(h)- տարբերակի (ստորին ձայնդարձով, ***n** և ***g^{w}** կամ ***g^{w}h** աճականներով) անմիջական ժառանգն է: «Խոսք – վանկ» իմաստային անցման համար հմմտ. ռուս. слог «1. վանկ, 2. խոսելակերպ, 3. խոսք, լեզու» (ՎԲՌ, слог): Բառավերջի **գ – կ** անցման համար հմմտ. *զանգ – զանկ «կառափ», մանգ – մանկ «խորամանկ», բանգ – բանկ «խելառ խոտ»* ևն):

Այս շարքին կարելի է ավելացնել նաև **զանգիւն, զանգատ, զանչ, զնչել, զարզաչել, զռալ, զժալ, զժիռ, զժտվել, զժղմ(ն)իլ, զոյժ, զոյշ, աւաչ** և մի շարք այլ բառեր:

Գանգ(իւն) «ձայն, հնչյուն, վանգյուն» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են բնաձայնական կազմություն (ՀԱԲ, 1, 515-516, ՀՍԲ, 149): Բայց նկատի ունենալով **վ – գ** լծորդությունը՝ ակնհայտ է դառնում

[23] Այլ լեզուներից հմմտ. հ.հնդկ. vāditram «նվագարան, երաժշտություն», հուն. ὕμνος «մեղեդի, երգեցողություն», ἀ()είδω (ատտ. ᾄδω) «երգել», ἀ()οιδή (ատտ. ᾠδή) «երգեցողություն», ἀοιδός «երգիչ», ἀοίδιμος «երգել», ἀ()ηδών «սոխակ» (Պոկ., № 133, *au̯-6, *au̯ed-):

վանզ(իւն) հոմանիշի հետ նույնարմատ լինելը: Հետևաբար առաջարկում ենք **զանզ** «ձայն» <*u̯ə-n-gʷh- <*(a)u̯(e)- «խոսել» ստուգաբանությունը: Այս նույն արմատից են սերված **արձազանզ** «ձայնի անդրադարձ» (ՀԱԲ, 1, 323-324) և **զանզաչ** «հնչյուն, ձայն (զանզակի)»[24] բառերը (**-աչ/-ոչ** ածանցի համար հմմտ. *շառ-աչ, բառ-աչ, կառ-աչ, հառ-աչ, ճան-աչ, գոռ-ոչ, խոռ-ոչ* ևն):

Գանգատ «տրտունջ, բողոք» բառը նույնպես կարող է կազմված լինել **զանգ** «ձայն» արմատից՝ **-ատ** ածանցով (հմմտ. *պաղ-ատ-ել, հաստ-ատ, արմ-ատ, աղք-ատ, փին-ատ, կտավ-ատ, հուրհր-ատ-ել, հր-ատ «խարույկ»* ևն (տե՛ս նաև ՀԱԲ, 800)): Այս բառի մասին Հ. Աճառյանը գրել է. «անշուշտ կրկնաւոր է, բայց պարզ արմատը յայտնի չէ» (ՀԱԲ, 1, 515): Իսկ Գ. Ջահուկյանն այս բառը կասկածով կապել է հ.-ե. *ghan- «բերանը լայն բաց անել, հորանջել» արմատի հետ (ՀԱԲ, 150), որ այնքան էլ համոզիչ չէ:

Գանչ «հնչում, ձայն» արմատը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են բնաձայնական կազմություն (ՀԱԲ, 1, 518, ՀԱԲ, 150), ինչպես և **կանչ, կոչ, զոչ** և այլ հոմանիշներ: Գ. Ջահուկյանը ավելի քիչ հավանական է համարել կապը հ.-ե. *kan- «երգել, հնչել» արմատի հետ (նույն տեղում): **Գ –կ** լծորդությամբ փաստորեն ունենք մի շարք հոմանիշներ՝ **զանչ – կանչ, զոչել – կոչել, զնչել – կնչել, զոռոչ – կոռոչ, զարզաչել – կարկաչել, զրզռալ – կռկռալ, զլզլալ – կլկլալ** (բրբռ.), **զրզտել –**

[24] **Գանզաչ**-ը Հ. Աճառյանը համարել է կրկնավոր կազմություն՝ ***զաչ** բնաձայնական հիմքից (ՀԱԲ, 1, 515): Գ. Ջահուկյանը համաձայն է դրան (ՀԱԲ, 149-150):

կրկտել «կրճտացնել», **գրգմիլ – կարկամել, գօճակ – կօճակ** «մի ծաղիկ», **գէշ – կէշ** (բրբռ.) ևն: Սրանց **գ**-ով ձևերը մեծ մասամբ հնացած են, իսկ **կ**-ով ձևերը՝ երբեմն բարբառային, հետևաբար կարելի է ենթադրել, որ **կ**-ով տարբերակները ավելի ուշ շրջանի ներհայերենյան զարգացումներ են, և հ.-ե. նախաձև պետք է վերականգնել **գ**-ով ձևերի համար, իսկ այդ նախաձևը ամենայն հավանականությամբ *(a)u̯(e)- «խոսել» արմատն է: Ուստի առաջարկում ենք **գանչ** <*u̯ə-n-kʷ-io- <*(a)u̯(e)- «խոսել» ստուգաբանությունը:

Գնչել «1. ճղճղալ (խոճկորը), 2. կակազել, թոթովել, թլվատ խոսել» բառը (որից՝ **գնչուտ, գնչ(ն)ոտ** «կակազ, թլիկ, թոթովախոս», **գնչու** «1. կակազ, 2. բոշա») Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են բնաձայնական կազմություն (ՀԱԲ, 1, 568, ՀՍԲ, 164): Ձևից և իմաստից ելնելով՝ առաջարկում ենք **գնչել** <***գունչ-** <*u̯ō-n-kʷ-io- <*(a)u̯(e)- «խոսել» ստուգաբանությունը:

Գոռալ «գոչել, բղավել, բոռալ, ձայնել» բառը (որից՝ **գոռեղ** «իշամեղու», **գոռոչ**[25] «բղավոց, գոչյուն») Հ. Աճառյանը համարել է բնաձայնական կազմություն (ՀԱԲ, 1, 580-581): Գ. Ջահուկյանը կասկածով կապել է հ.-ե. *ghor-s-՝ *gher- բնաձայնական արմատի հետ (ՀՍԲ, 168): Սա էլ հավանական վարկած է, սակայն նկատի ունենալով վերոհիշյալ **գոգել**

[25] Այս *գոռ-ոչ* մեկնությունը Գ. Ջահուկյանինն է (ՀՍԲ, 169) (**-աչ/-ոչ** ածանցի համար տե՛ս վերը՝ *գանգաչ* բառի առիթով): Հ. Աճառյանը համարել է բնաձայնական կազմություն՝ **գոչ** արմատի սաստկականը (հմմտ. *շաչ – շառաչ*) (ՀԱԲ, 1, 580-581): Մեզ ավելի համոզիչ է թվում Գ. Ջահուկյանի կարծիքը:

«ասել, գոչել», **գոչել** «բղավել» և այլ հոմանիշ բառերի ստուգաբանությունը՝ առաջարկում ենք այլ վարկած՝ **գոռ-ալ** <*u̯o-r-s- <*(a)u̯(e)- «խոսել» ստուգաբանական բանաձևով: Այս նույն նախաձևից թերևս պետք է բխեցնել նաև **բոռալ** հոմանիշը (Մալխ., 1, 386)՝ նկատի ունենալով Գ. Ջահուկյանի այն կարծիքը, թե հայերենում հնարավոր է նաև *u̯ < **բ** անցում (օրինակ՝ **բաղձ-ալ** <*u̯el-d- <*(a)u̯el «ցանկանալ, ընտրել»՝ **գեղձալ** «ցանկանալ, ըղձալ» բառին զուգահեռ)՝ որպես շեղում *u̯ < **գ** օրինաչափությունից (Ջահ., էջ 269-270): Նույն կերպ կարելի է *au̯(e)- «խոսել» արմատի հետ կապել նաև **բղաւել** «գոռալ», **բաչիւն** «կենդանական ձայն», **բառաչ** «կովի ձայն», **բնչել**, **բչել (բջել)** «բառաչել», **բոմբիւն (բմբիւն)** «դղրդյուն, պայթյուն, թմբուկի ձայն», **բոռ(եխ)** «գոռեխ, որձ մեղու» բառերը: Այս շարքից է նաև **բոկոկ** «ճոռոմ, ճարտարախոս» բառը (Ջահ., 270): Այս **գ – բ** լծորդությունը թերևս կարելի է բացատրել հնագույն բարբառային տարբերակմամբ:

Գարգաչել «հիմար-հիմար խոսել, ցնդաբանել» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են կրկնավոր կազմություն՝ փաստորեն վերոհիշյալ ***գաչ** բնաձայնական հիմքից (ՀԱԲ, 1, 521, ՀՍԲ, 151): Սակայն վերոհիշյալ **գանգաչ** բառի օրինակով առաջարկում ենք **գարգ-աչ-ել** <*u̯ə-r-gʷh- <*(a)u̯(e)- «խոսել» ստուգաբանությունը: Նկատի ունենալով հիշյալ **գ – բ** լծորդությունը՝ այս բառի տարբերակ պետք է համարել **բարբա(ն)ջել** համանիշը (**ն**-ի ոչ պարտադիր հավելումով և **չ – ջ** անցմամբ, հմմտ. *աւաչ* – *աւաջ*, *կարկաչ* – *կարկաջ* ևն), որը Հ. Աճառյանը համարել է կրկնավոր՝ ***բա(ն)ջ**

բնաձայնական հիմքից (ՀԱԲ, 1, 419-420)։ Գ. Ջահուկյանը համաձայն է դրան (ՀՍԲ, 149-120)։

Գժալ «աղաղակել, գոռալ, ճչալ» բարբառային բառը (ՀԼԲԲ, Ա, 242), որ չկա ստուգաբանական բառարաններում, ձևով հեռու չէ **գոչել, գոգել** հոմանիշներից և կարող է ունենալ ***գուժ-** <*u̯ō-gʷh- նախաձևը՝ հ.-ե. *(a)u̯(e)- «խոսել» արմատից։

Գժիռ «դաժան՝ ծանր (խոսք)» բառը անհայտ ծագման են համարել Հ. Աճառյանը (ՀԱԲ, 1, 554) և Գ. Ջահուկյանը (ՀՍԲ, 160)։ Սրա արմատի նախաձևը նույնը կլինի, ինչ նախորդինը՝ *u̯ō-gʷh- (**–իռ**ածանցի համար տե՛ս վերը՝ *վճիռ* բառի առիթով)։

Գժտվել «վիճել, ընդհարվել, տարաձայնություն ունենալ» բառը, որ հոմանիշ է **վիճել** բառին, անհայտ ծագման են համարել Հ. Աճառյանը (ՀԱԲ, 1, 554) և Գ. Ջահուկյանը (ՀՍԲ, 160)։ Սրա համար կարելի է ենթադրել ***գուժտ-** <*u̯ō-gʷh-d- նախաձևը, որ նախորդ դեպքից տարբերվում է *d աճականի առկայությամբ։ Գ. Ջահուկյանը ենթադրել է, որ այս բառը կարող է կապ ունենալ **գժդմ(ն)իլ** բառի հետ (նույն տեղում)։

Գժդմ(ն)իլ «խոժոռվել, զայրանալ» բառը նույնպես անհայտ ծագման են համարել թե՛ Հ. Աճառյանը (ՀԱԲ, 1, 553-554), թե՛ Գ. Ջահուկյանը (ՀՍԲ, 160)։ Կարելի է կարծել, որ սա բարդ բառ է, որի երկրորդ բաղադրիչը **դէմ(ք)**-ն է, այսինքն՝ բառը նշանակում է «դաժան դեմք ընդունել»։ Այդ դեպքում առաջին բաղադրիչը կնույնանա վերոհիշյալ **գժիռ** «դաժան» բառի արմատին՝ ***գուժ-** (<*u̯ō-gʷh- նախաձևից)։

Գոյժ «1. բոթ, վատ լուր, 2. ողբ, լաց ու կոծ» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 1, 577)։ Գ. Ջահուկյանը կասկածով ենթադրել է իրանական փոխառություն՝ «բայց

բուն աղբյուրը չի հավաստված» վերապահությամբ (ՀԱԲ, 167): Այս բառի առաջին և հիմնական իմաստը կապվում է վերոհիշյալ **աւետ** «բարի լուր» բառի հետ (իմաստի շրջմամբ), իսկ ձևը՝ **գժալ, գժիռ, գժտվել, գժդմնիլ** բառերի ***գուժ-** արմատի հետ: Ուստի առաջարկում ենք **գոյժ** <*u̯oi-gʷh- <*(a)u̯(e)- «խոսել» ստուգաբանությունը:

Բաւթ (բօթ) «գույժ» բառը ցայժմ համարվել է անհայտ ծագման (ՀԱԲ, 1, 494, ՀԱԲ, 123): Վերոհիշյալ **գ – բ** լծորդությունը նկատի ունենալով՝ այս բառը ևս կարելի է հ.-ե. նույն արմատից բխեցնել, ինչ **գոյժ** հոմանիշը: Ուստի առաջարկում ենք **բաւթ** <***բաթ** <*u̯ə-t- <*(a)u̯(e)- «խոսել» ստուգաբանությունը՝ **ւ**-ի հավելմամբ (հմմտ. *մա(ւ)տ, հա(ւ)տել*):

Գոյշ «1. խոսք, լուր, տեղեկացում, ահազանգ, 2. չլինի թե» բառը (որից՝ **գուշել** «ասել, տեղեկացնել, հուշել, ահազանգել», **գուշակ** «1. ապագան պատմող, կանխատեսող, մարգարե, 2. ազդարար, հուշարար», **գուշակել** «1. մարգարեանալ, 2. հայտնել, լուր տալ, 3. մատնել», **զգոյշ** «շրջահայաց, ուշադիր, երկյուղած») Հ. Աճառյանը Հ. Հյուբշմանի հետևողությամբ, սակայն կասկածով համարել է «իբր» իրանական փոխառություն՝ նկատի ունենալով մ.պարսկ. gūš «լսել, ականջ դնել», հ.պարսկ. gauša «ականջ» բառերն ու դրանց ածանցյալները (ՀԱԲ, 1, 578): Գ. Ջահուկյանը կրկնել է նույնը՝ առանց որևէ վերապահության (ՀՍԲ, 167): Հ. Աճառյանը «իբր» բառը գործածել է նաև **գուշակ** բառահոդվածում (ՀԱԲ, 1, 596)՝ հուշելով, որ ինքը համոզիչ չի համարել Հյուբշմանի ստուգաբանությունը: Իսկապես, **գոյշ**-ը

իրականում կապված է «ասել, խոսել», այլ ոչ թե «լսել, ունկնդրել» իմաստի հետ: Ուստի առաջարկում ենք **գոյշ** <*u̯oi-k′w- <*(a)u̯(e)- «խոսել» ստուգաբանությունը:

Աւաչ (աւաջ) «ձայն, մրմունջ, երգ, մեղեդի» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը Հ. Հյուբշմանի հետևողությամբ համարել են փոխառություն իրան. (պահլ.) āvāč «ձայն» ձևից (ՀԱԲ, 4, 304, ՀՍԲ, 703): Թվում է անառարկելի: Սակայն հատկապես **վանկ** բառի հետ իմաստային կապը հիմք է տալիս **աւաչ** բառը ևս համարելու հ.-ե. *(a)u̯(e)- «խոսել» արմատի *au̯ə-k^{w}-io- տարբերակի (ստորին ձայնդարձով, *k^{w} աճականով և *-io- ածանցով) անմիջական ժառանգը (ձևի առումով հմմտ. **գոչ**): Հնարավոր է ենթադրել նաև **աւ** <*au̯- արմատ՝ **-աչ** ածանցով (որի մասին խոսվել է վերը՝ *գանգաչ* բառի առիթով):

Zakaryan Hovhannes – Etymology of Some Armenian Words Derived from PIE Root *(a)u(e)-. – There are some Armenian words considered to be generated from PIE homonymous roots *(a)u(e)- «alas» (**վա́յ** «woe!, alas!») and *(a)u(e)- «to speak» (**աւետ, աւճ, աւրեր, ոգել, գոգել, գովել, գոհ, գոչել** etc.). The article, dwelling upon phonetic, morphemic and semantic analyses, puts forward to replenish these series with some other Armenian words still not etymologized or considered to be borrowings. They are: **աւաղ** «alas» <*au̯ā-l-**,** **վիշտ** «sorrow» <*(o)u̯ē-k′w-d-**,** **գեր** «sorrow, wailing, cry» <*u̯e-r- <*(o)u̯ai- «alas», **վէպ** «saga, epos» *(a)u̯ei-b-, **վէգ** «quarrel, dispute, controversy» <*(a)u̯ei-g^{w}h-, **վէճ** «controversy, discord» <*(a)u̯ei-d-io-, **վճ-իռ** «resolution, decision» *(a)u̯ē-d-io-, **վարկ** «1. prestige, 2. credit» <*(a)u̯ə-r-g^{w}-, **վկ-այ** «witness» *(a)u̯ē-g^{w}-, **վանկ**

«syllable» *(a)u̯ə-n-gʷ-, **զանգ(իւն)** «sound, hum» <*u̯ə-n-gʷh-, **գժտվել** «to quarrel», <*u̯ō-gʷh-d-, **գոյժ** «bad news» <*u̯oi-gʷh-, **բաւթ** «bad news» <*բաւթ <*u̯ə-t-, **աւաչ** «sound, song» <*au̯ə-kʷ-io- <*au̯(e)- «to speak» etc.

Закарян Оганес – Этимология некоторых армянских слов, возникших от ПИЕ корня *(a)u(e)-. – Некоторые армянские слова считаются производными от ПИЕ омонимичных корней *(a)u(e)- «жаль, увы!» (**վա՜յ** «увы!») и *(a)u(e)- «говорить» (**աւետ, աւճ, աւրեր, ոգել, գոգել, գովել, գոհ, գոչել** и т. д.). В настоящей статье на основе фонетического, словообразовательного и семантического анализов предлагается пополнить эти ряды некоторыми другими словами, до сих пор считающимися заимствованными или же не этимологизированными. Эти слова: **աւաղ** «ափսոս» <*au̯ā-l-, **վիշտ** «горе, скорбь» <*(o)u̯ē-k′w-d-, **գեր** «скорбь, плач, вопль» <*u̯e-r- <*(o)u̯ai- «жаль, увы!», **վէպ** «сказание» *(a)u̯ei-b-, **վէգ** «спор, ссора, полемика» <*(a)u̯ei-gʷh-, **վէճ** «полемика, разногласие» <*(a)u̯ei-d-io-, **վճ-իռ** «решение, указ» *(a)u̯ē-d-io-, **վարկ** «1. престиж, 2. кредит» <*(a)u̯ə-r-gʷ-, **վկ-այ** «свидетель» *(a)u̯ē-gʷ-, **վանկ** «слог» *(a)u̯ə-n-gʷ-, **զանգ(իւն)** «звук, гул» <*u̯ə-n-gʷh-, **գժտվել** «ссориться», <*u̯ō-gʷh-d-, **գոյժ** «плохое известие» <*u̯oi-gʷh-, **բաւթ** «плохое известие» <*բաւթ <*u̯ə-t-, **աւաչ** «звук, песня» <*au̯ə-kʷ-io- <*au̯(e)- «говорить» и т. д.

Զաքարյան Հովհաննես

(«Տաթև» ԳԿՀ)

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՆՑՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Լեզվաշինությունը կանխամտածված ներգործությունն է տվյալ հանրության լեզվավիճակի կամ որևէ լեզվի կառուցվածքի, գործառույթների ու յուրացման ընթացքի վրա: Լեզվաշինության ուղղություններն են լեզվի վերակենդանացումը, պահպանությունը, զարգացումը և տարածումը, գրային համակարգի ստեղծումը, ուղղագրական բարեփոխումը, լեզվի մաքրումը, կանոնարկումն ու կանոնակարգումը, բառաշինությունը, գիտական, վարչական և այլ բնույթի եզրույթաբանական համակարգերի ստեղծումը, գրական լեզվի գործառական տարբերակների մշակումը, լեզվի բնական զարգացման ընթացքի կանխատեսումն ու ծրագրված ուղղորդումը, մայրենի և օտար լեզուների դասավանդման տարբերակված եղանակների մշակումը, թարգմանչությունը, բառարանների, լեզվուսուցման ձեռնարկների ու դասագրքերի ստեղծումը, տվյալ լեզվով համացանցային պաշարների կուտակումը և էլեկտրոնային սպասարկող գործիքների ստեղծումն ու կատարելագործումը, լեզվական օրենսդրության մշակումը և այլն:

Հայոց լեզվաշինությունը սկիզբ է առնում հնագույն ժամանակներից: Մինչև 5-րդ դարը լեզվաշինական աշխատանքների վերաբերյալ ուղղակի տեղեկություններ չեն պահպանվել: Կան միայն այդ աշխատանքների որոշ արդյունքների վկայություններ կամ դրանց մասին տեղեկություններ: Օրինակ՝ շումերական աղբյուրների համաձայն՝ մ.թ.ա. 3–րդ հազարամյակի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհում առ այսօր ստույգ հայտնի հայկական առաջին պետությունը՝ Արատտան, ունեցել է սեփական գիր (նախ՝ պատկերագիր, հետո՝ սեպագիր)[1]:

Հայկական լեռնաշխարհում տարբեր ժամանակներում ստեղծվել և կիրառվել են բնիկ՝ հիմնականում ոչ փոխառյալ մի քանի գրային համակարգեր՝[2]

1. այծագրերը (մ.թ.ա. 7–2–րդ հազարամյակներ),

2. վաղբրոնզեդարյան խեցեղենի գաղափարագիր նշանները (մ.թ.ա. 5–3–րդ հազարամյակներ),

3. գծային գիրը (մ.թ.ա. 3–1–ին հազարամյակներ),

4. բիայնական և հետբիայնական մեհենագրերը (մ.թ.ա. 1–ին հազարամյակ),

5. բիայնական ոչ ասուրերեն սեպագրերը (մ.թ.ա. 8–6–րդ դարեր),

---

[1] Տե՛ս **Ա. Մովսիսյան**, *Հնագույն պետությունը Հայաստանում. Արատտա*, Եր., 1992, էջ 60–62:

[2] Տե՛ս **Ա. Մովսիսյան**, *Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը*, Եր., 2003, 400 էջ:

6. մաշտոցյան այբուբենով հնչյունական գիրը (սկսած 5-րդ դարից) և այլն:

Սրանցից առաջինի՝ այծագրերի մասին կարելի է ասել հետևյալը: Դրանք տեղական ծագում ունեն, ներմուծովի չեն[3], սակայն դրանց ազգային պատկանելության հարցը վիճարկվում է: Ոմանք այն կարծիքին են, թե մ.թ.ա. 7-րդ հազարամյակում դեռևս չեն եղել ձևավորված ազգեր ու ազգություններ, հետևաբար այծագրերի հայկական ծագման մասին խոսելը ճիշտ չէ: Բայց մյուս կողմից՝ մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակներում Հայկական լեռնաշխարհում դեռևս շարունակում էին ստեղծվել այծագրերը, որոնց հեղինակները չէին կարող ազգային պատկանելություն չունենալ: Հետևաբար տրամաբանորեն կարելի է պնդել, որ այծագրերը ստեղծել են հայերը և նրանց նախնիները: Մյուս հարցը՝ դրանք գի՞ր են, թե՞ ոչ, նույնպես վիճարկման առարկա է: Բայց չի կարելի խոսել գրի սկզբնական տեսակի՝ պատկերագրության մասին՝ նկատի չունենալով նաև այծագրերը: Հետևաբար դրանք գիր են: Այծագրերը հիմք են դարձել գրային այլ համակարգերի՝ մեհենագրության ու գծային գրի առաջացման համար:

Երկրորդի (վաղբրոնզեդարյան խեցեղենի գաղափարագիր նշաններ) և երրորդի (գծային գիր) ազգային

[3] Տե՛ս **Կ. Թոխաթյան**, *Հայկական ժայռապատկերներ*, // «Լեզու և կրթություն», Եր., 2012, էջ 117-123:

պատկանելության վերաբերյալ կարելի է կրկնել նույնը, ինչ ասվեց այծագրերի դեպքում:

Չորրորդի (բիայնական և հետբիայնական մեհենագրեր) և հինգերորդի (բիայնական ոչ ասուրերեն սեպագրեր) դեպքում վիճարկվում է բիայներենի (ուրարտերենի)՝ հայոց լեզվի հետ առնչություն ունենալու (նրա նախազրաբարյան վիճակը լինելու) խնդիրը: Բայց քանի որ այս դեպքում գործ ունենք միայն վարկածների հետ, ուրեմն իրավունք ունենք մեր ընդունած վարկածի շրջանակներում ենթադրելու նշված գրերի հայկական ծագումը: Բիայնական մեհենագրերն արդեն հիմնականում հաջողվել է հայերեն վերծանել[4]: Բիայնական ոչ ասուրերեն սեպագրերի մասին հայտնի է, որ դրանք ասուրական սեպագրերի ձևափոխված ու հարմարեցված մի տարատեսակն են, այդ պատճառով էլ վերծանվում են ասուրական սեպագրերի սկզբունքներով: Սակայն հնարավոր է, որ բիայնական գրում վերցված է ասուրական գրի միայն արտաքին ձևը, իսկ գրանշանների արժեքները շատ ավելի տարբեր են, քան մինչ այժմ ենթադրվում է: Այդքանով հանդերձ՝ այդ գիրը ևս մասամբ հաջողվել է հայերենով կարդալ:[5] Ամեն դեպքում մի բան պարզ է, որ

---

[4] Տե՛ս **Ա. Մովսիսյան**, *Հայկական մեհենագրություն*, Երևան, 2003, 272 էջ:

[5] Տե՛ս **Գ. Ջահուկյան**, *Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին*, // «ՊԲՀ», Եր., 2000, հմ. 1, էջ 124-129: Տե՛ս նաև **Ս. Այվազյան**, *Ուրարտերեն*

մ.թ.ա. 8–րդ դարում Բիայնայում (Վանի կամ Այրարատյան թագավորությունում) կատարվել են լեզվաշինական լուրջ աշխատանքներ:[6]

Վեցերորդի (մաշտոցյան այբուբեն) ազգային պատկանելության վերաբերյալ վեճեր չկան, քանի որ դրա ստեղծման պատմությունը հանգամանորեն վկայված է մատենագրության մեջ[7]: Հենց այդ վկայություններն էլ թույլ են տալիս ասելու, որ հայոց լեզվի կանոնարկման խոր, համապարփակ ու համակարգված աշխատանքների

– *հայերեն. բառապաշար և պատմահամեմատական քերականություն*, Եր., ԵՊՀ հրատ., 2008, 400 էջ:

[6] Ինչ վերաբերում է Բիայնայի (Ուրարտուի)՝ հայկական պետություն լինելու խնդրին, ապա թեև ոմանք դա ևս վիճարկում են, սակայն դրա ամենավառ ապացույցը Բեհիսթունի եռալեզու արձանագրությունն է (մ.թ.ա. 523-521 թթ.), որտեղ Հայաստանի համար գործածված են հին պարսկերենով *Արմինա*, բաբելոներենով (աքքադերենով)՝ *Ուրարտու (Ուրաշտու)* և էլամերենով՝ *Հարմինուեա* անունները (տե՛ս https://hy.wikipedia.org/wiki/Բեհիսթունի_արձանագրություն, Պ. Հովհաննիսյան, Ա. Աբրահամյան, Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Եր., 1981, էջ 156): Նույն երկիրը «Հին կտակարանի» եբրայերեն բնագրում, դրա հունարեն, ասորերեն, լատիներեն, արաբերեն թարգմանություններում անվանված է մերթ *Արարատի երկիր*, մերթ *Այրարատյան թագավորություն*, մերթ *Արմենիա* (տե՛ս նույն տեղում, էջ 116): Իսկ ակնհայտ է, որ *Արատտա, Ուրարտու, Արարատ, Այրարատ* անունները ստուգաբանորեն նույնական են (տե՛ս **Ա. Մովսիսյան**, *Հնագույն պետությունը Հայաստանում. Արատտա*, Ե., 1992, էջ 29-32): Ըստ Հրաչ Մարտիրոսյանի՝ դրանք ծագում են հ.-ե. *ara-ta- «սուրբ օրենք, կարգ» նախաձևից, որից է նաև **արդ-ար** բառը (տե՛ս նույն տեղում):

[7] Այդ վկայությունների քննությունը տե՛ս, օրինակ, **Հ. Աճառյան**, *Հայոց գրերը*, Եր, 1984, 688 էջ:

պատմությունը սկսվում է առնվազն 5-րդ դարից: Անշուշտ, մինչ այդ ևս Հայաստանում կատարվել են լեզվի կանոնարկման աշխատանքներ, որոնց մասին, սակայն, կան առավելապես անուղղակի տվյալներ ու փաստարկներ: Դրանցից գլխավորը մաշտոցյան այբուբենով գրի առնված գրաբարի ի սկզբանե խիստ կանոնարկված, մշակված և զարգացած լինելն է:[8]

5-րդ դարում լեզվաշինական համակողմանի և ծավալուն աշխատանքներ կատարվեցին Մեսրոպ Մաշտոցի գլխավորությամբ, հայոց արքայի՝ Վռամշապուհ Արշակունու, և հայրապետի՝ Սահակ Պարթևի հովանավորությամբ: Քրիստոնեության հետ հայոց աշխարհ ներթափանցած հունական ու ասորական դպրոցների փոխարեն հայկական դպրոցների համերկրային ցանցի վերստեղծման, հայոց աշխարհի կառավարման պետական համակարգի և հայոց եկեղեցու պաշտոնավարության ու գործավարության հիմնովին հայերենացման նպատակով Մաշտոցն իր համախոհների և աշակերտների հետ ձեռնամուխ եղավ լեզվաշինական բազմաբնույթ աշխատանքների. կատարելով հնչյունաբանական ու

---

[8] Նախամաշտոցյան՝ պայմանականորեն «դանիելյան» կոչված հնչյունագրի խնդրին այստեղ չենք անդրադառնում: Այդ մասին տե՛ս, օրինակ, **Ա. Մովսիսյան**, *Նախամաշտոցյան Հայաստանի....*, էջ 213-218; **Հ. Զաքարյան,** 5-րդ դարի լեզվավիճակը՝ որպես գրերի գյուտի դրդապատճառ, «Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն», պրակ Ե, Եր., 2006, էջ 23-30; **Ռ. Հակոբյան (Թարումեան)**, *Հայոց տառերը. ձևագոյացման համեմատական քննություն*, Եր., 2017, 228 էջ:

գրաբանական խոր ուսումնասիրություններ՝ ստեղծեց հայերենին լիովին համապատասխանող գրային համակարգ, մշակեց գրատեսակներ, վայելչագրական, ուղղագրական, ուղղախոսական կանոններ, հայերենի դասավանդման մեթոդաբանություն՝ տառուսուցման և ինքնաբավության սկզբունքներով, գիրկապ, հեգելով, ասերգությամբ և այլ եղանակներով: Սկզբնավորեց թարգմանչական շարժումը, որի նպատակն էր համամարդկային նվաճումներին հայերենով հաղորդակից դառնալը: Հիմք դրեց հետևողական լեզվաշինությանը, բառակերտմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով հայերենի մաքրության խնդրին: Զբաղվեց գրչության, ճարտասանական, բանաստեղծական և տաղաչափական արվեստների մշակմամբ, հայոց ձայնեղանակների կարգավորմամբ, հայերեն հոգևոր երգի ուսուցման մեթոդաբանությամբ: Նպաստեց միասնական գրական լեզվի տարածմանը Հայաստանի բոլոր գավառներում: Դիվանագիտական բանակցություններ տեղի ունեցան բյուզանդական արքունիքի հետ, որպեսզի հայոց գիրն ու դպրությունը հնարավոր լինի տարածել նաև Հայաստանի բյուզանդահպատակ մասում:

Մաշտոցի աշակերտները շարունակեցին նրա գործը: Հայերենի փոխադրվեցին անտիկ աշխարհում ամենահայտնի քերականական և ճարտասանական ձեռնարկները՝ Դիոնիսոս Թրակացու «Քերականության արվեստը» և Ափթոնիոսի «Պիտոյից գիրքը»: Ստեղծվեց

հունաբան դպրոցը, որը զբաղվեց հայերենի կանոնարկմամբ, բառակերտմամբ, թարգմանություններով:[9]

Այս գործն ավանդաբար շարունակվեց միջին դարերում: Գրվեցին Դիոնիսոսի «Քերականության արվեստի» մի շարք մեկնություններ, որոնք փաստորեն հայերենի քերականության դասագրքեր էին: Գրչության արվեստի զարգացմամբ պայմանավորված՝ սահմանվեցին ուղղագրական կանոններ[10], մշակվեց, զարգացավ ու կատարելագործվեց հայերենի կետադրության համակարգը[11]: Ստեղծվեցին գրության տարբեր ոճեր (համառոտագրություն, կցագրություն, կապագրություն, զարդագրություն, ծաղկագրություն և այլն), տարբեր գրատեսակներ (երկաթագիր, բոլորգիր, նոտրգիր, շղագիր և այլն): Կատարելագործվեցին գրության ձևերը՝ վիմագրությունը, որմնագրությունը, գրչագրությունը:[12] Ստեղծվեցին բառարանների նախատիպեր՝ ուղղագրական, բացատրական ու թարգմանական բառացանկեր,

---

[9] Տե՛ս նաև **Հ. Զաքարյան**, *Մաշտոցը՝ լեզվաշինարար*, // «Նյութեր մաշտոցյան գրերի 1600-ամյակին նվիրված գիտաժողովի», Եր., 2005, էջ 30-36:

[10] Տե՛ս **Ս. Գյուլբուդաղյան**, *Հայերենի ուղղագրության պատմություն*, Ե., 1973, 432 էջ:

[11] Տե՛ս **Հ. Մխիթարյան**, *Հայերենի կետադրության համառոտ պատմություն*, Ե., 1972, 148 էջ:

[12] Տե՛ս **Ա. Գ. Աբրահամյան**, *Հայ գրի և գրչության պատմություն*, Եր., 1959, 415 էջ:

բառացուցակներ, այնուհետև՝ բառգրքեր:[13] Բացվեցին համալսարաններ: Ձևավորվեցին լեզվաշինական նոր դպրոցներ՝ լատինաբան, հայկաբան: Ավելի ուշ մշակվեց հայկական տպագրության արվեստը, ստեղծվեցին տպագիր տառատեսակներ[14], հիմնվեցին զանգվածային լրատվամիջոցներ՝ հանդեսներ, լրագրեր[15]:

Նոր ժամանակներում լեզվաշինական աշխատանք-ներով աչքի ընկան Մխիթարյան միաբանները՝ հայերենի համար ստեղծելով բարձրարժեք կանոնական բառարաններ, քերականության ուսուցման ձեռնարկներ և այլն:[16]

Գործնական լեզվաշինության ասպարեզում նշանակալից է մի շարք ստեղծագործողների ներդրումը (Հ. Պարոնյան, Դ. Վարուժան, Մ. Մեծարենց, Վ. Տերյան, Ե. Չարենց, Բակունց և այլք), որոնք բյուրեղացրին ու ժողովրդականացրին իրենց ժամանակի գրական լեզուն:

---

13 Տե՛ս **Է. Աղայան**, *Հայ լեզվաբանության պատմություն*, հ. 1, Եր., 1958, 411 էջ, հ. 2, Եր., 1962, 389 էջ; **Գ. Ջահուկյան**, *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում*, Եր., 1954, 396 էջ; https://hy.wikipedia.org/wiki/Մխիթար-յան_միաբանություն:

14 Տե՛ս **Գ. Լևոնյան**, *Հայ գիրքը և տպագրության արվեստը*, Եր., 1958, 255 էջ; **Ռ. Իշխանյան**, *Հայ գիրքը. 1512-1920*, Եր., 1981, 154 էջ; **Ռ. Իշխանյան**, *Հայ գրքի պատմություն*, հ. 1. Հայ տպագիր գիրքը 16-17-րդ դարերում, Եր., 1977, 536 էջ:

15 Տե՛ս *Հայ պարբերական մամուլի պատմություն*, հ. 1, Եր., 2006, 701 էջ, հ. 2, Եր., 2017, 786 էջ:

16 Տե՛ս **Գ. Ջահուկյան**, *Գրաբարի քերականության պատմություն (XVII-XIX դդ.),* Երևան, 1974:

Մասնավորապես Վ. Տերյանի երկերի լեզուն փաստորեն գրական արևելահայերենի այն չափորոշիչն է (ստանդարտը), որ աննշան շտկումներով գործում է մինչ այժմ:

Լեզվաշինությունը նոր թափ ստացավ խորհրդային տարիներին: Կատարվեցին ուղղագրական երկու բարեփոխումներ (1922 թ. և 1940 թ.), որոնց վերաբերյալ կան հակասական կարծիքներ ու վերաբերմունք: Ստեղծվեցին լեզվաշինական հատուկ լիազորված պետական կառույցներ ու մարմիններ՝ ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտե, ՀԳԱ գիտատեխնիկական տերմինաբանության խորհուրդ, գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտ, հայոց լեզվի բուհական ամբիոններ, հրատարակչություններ և այլն: Հայերենը ներդրվեց հեռահաղորդակցման ոլորտում (ռադիո, հեռուստատեսություն, հեռատիպ): Մեծ մասամբ ազգայնացվեցին Խորհրդային Հայաստանի ոչ հայկական տեղանունները:[17]

Այս ամենին զուգահեռ լեզվաշինական աշխատանքներ էին կատարվում նաև սփյուռքում: Կազմվում և հրատարակվում էին դպրոցական դասագրքեր, բառարաններ (առավելապես թարգմանական), կերտվում էին նորանոր հայերեն բառեր, մեծ ջանքեր էին գործադրվում

---

[17] Տե՛ս նաև *Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում*, Եր., 1973, 554 էջ:

հանուն հայերենի անաղարտության, արևմտահայ գրական լեզվի կանոնարկման: Նրանակալից են ոգորումները եզրաշինության ասպարեզում գրական լեզվի երկու ճյուղերի միասնականացման ուղղությամբ: Անցյալ դարի 90-ականներին Ֆրանսիայում ստեղծվեց արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ, որը հրատարակեց հիմնականում գիտատեխնիկական եզրույթների կանոնական ցանկեր պարունակող չորս հատորներ՝ հույս ունենալով, որ դրանք հաշվի կառնվեն նաև մայր հայրենիքում:[18] Բայց դրանք, կարելի է ասել, մնացին գրեթե անարձագանք:

Այս բազմադարյան ջանքերի արդյունքում հայ ժողովուրդն ունի զարգացած, ճկուն և գրական հարուստ ժառանգությամբ լեզու, որ շարունակում է կատարելագործվել ու հարմարվել արդիականության պահանջներին:

Անցյալի ավանդույթները հիմնականում շարունակվում են և այսօր: ՀՀ անկախացումից հետո ազգայնացվեց կրթական համակարգը, շարունակվեց տեղանունների հայերենացումը, մշակվեց լեզվական օրենսդրություն, որն աստիճանաբար համալրվում ու կատարելագործվում է: Հայերենը սկսեց ներդրվել տեղեկույթի փոխանակման նոր՝ էլեկտրոնային միջավայրում, որտեղ ստեղծվեցին հայալեզու

---

[18] *Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ. Ուղեցոյց,* հ. Ա, Մարսէյլ, 1993, 110 էջ, հ. Բ, Էքս-ան-Պրովանս, 1995, 82 էջ, հ. Գ, Էքս-ան-Պրովանս, 1998, 87 էջ, հ. Դ, Էքս-ան-Պրովանս, 2002, 123 էջ:

կայքեր, հանդեսներ, թերթեր, ռադիոկայաններ, հրապարակներ (ֆորում), զրուցատեղիներ, հեռուսուցման և ինքնաստուգման կենտրոններ, հիմնադրվեցին գրադարաններ, ձայնադարաններ, տարաբնույթ շտեմարաններ, բառարան-ներ, ինքնուսույցներ, ստեղծվել ու շարունակաբար կատարելագործվում են ինքնաշխատ թարգմանիչներ, զանազան կարգի խմբագրիչ, սրբագրիչ, որոնիչ, թվայնացուցիչ, գրանշանների ճանաչիչ, ընթերցիչ, փոխարկիչ, տառադարձիչ, տողադարձիչ ծրագրեր[19], համակարգչային նորանոր տառատեսակներ, հայերենացվում են մի շարք էլեկտրոնային ծրագրեր ու գործիքներ: Հրատարակվում են հայերեն էլեկտրոնային գրքեր, խաղեր:

Թե՛ գրավոր, թե՛ բանավոր հայերենի որակը վերջին 30 տարում բավական բարելավվել է: Բազմաթիվ օտարաբանությունների փոխարեն լայն տարածում են գտել դրանց հայերեն համարժեքները *(վարչակարգ, զբոսավար, գնաճ, առցանց, համակարգիչ, հեռավար, սահկահանդես, խաղատուն, մարզասրահ, դիմահարդար, ինքնացիր, մրցույթ, քայլաշար* և այլն): Շարունակվում է փոխառությունները հայերեն համարժեքներով փոխարինելու, հայերենը մաքրելու գործընթացը: Լույս են տեսնում հայերեն մեծաթիվ նորաբանություններ պարունակող մասնագիտա-

---

[19] Տե՛ս նաև **Հ. Զաքարյան**, *Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը հայերենի ուսումնասիրության, պահպանման և զարգացման գործում,* // «Բանբեր ԵՊԼՀ. Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն», հմ. 2, Եր., 2012, էջ 59-65:

կան բառարաններ[20]: Այլևս չկան հայերենի ինքնամաքրմանը խոչընդոտող կուսակցական ու վարչական ճնշումներ: Հայերեն խոսքում խիստ նվազել են հատկապես արևելյան լեզուներից (թուրքերենից, պարսկերենից, արաբերենից) նոր ժամանակներում ներթափանցած բառերն ու արտահայտությունները:[21]

---

[20] Օրինակ՝ **Փ. Քոլին,** *Դրամագործության և դրամամիջոցների բառարան* (անգլերեն-հայերեն), Եր., 2001, 288 էջ; **Փ. Քոլին,** *Անգլերեն-հայերեն համակարգչային եզրերի բառարան*, Եր., 2004, 388 էջ; *Քաղաքագիտության և քաղաքականության Օքսֆորդի բացատրական բառարան* (անգլերեն-հայերեն), Եր., 2003, 592 էջ; **Փ. Քոլին,** *Հրատարակչական և տպագրական եզրերի բառարան* (անգլերեն-հայերեն), Եր., 2003, 92 էջ; **Փ. Քոլին,** *Իրավաբանական բացատրական բառարան* (անգլերեն-հայերեն), Եր., 2005, 336; **Ա. Աղաբեկյան,** *Գործարարություն, տնտեսագիտություն. անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն բառարան*, Եր., 2008, 426 էջ և այլն: ՀՀ լեզվի ինստիտուտը նախաձեռնել է *«Նոր բառեր»* մատենաշարը. արդեն լույս են տեսել առաջին հինգ պրակները (Ա. պրակ, Եր., 2015, 196 էջ, Բ. պրակ, Եր., 2016, 184 էջ, Գ. պրակ, Եր., 2017, 158 էջ, Դ. պրակ, Եր., 2018, 172 էջ, Ե. պրակ, Եր., 2020, 175 էջ): Լեզվի ինստիտուտը պատրաստվում է էլեկտրոնային տարբերակով հրապարակելու եռահատոր *«Արդի հայերենի համապարփակ բառարանը»*:

[21] Այնուամենայնիվ, մի շարք նեղ մասնագիտական ոլորտներում գործածվող հայերենը, հատկապես մասնագիտական բանավոր ժարգոնը շարունակում է մնալ անհարկի օտարաբանություններով խճողված, անգամ եթե կան այդ ոլորտների հայերեն եզրույթաբանությունը պարունակող հաջող բառարաններ (մարզական ոլորտ, տնտեսագիտություն, առողջապահություն, տեխնիկա և այլն): Այդ ոլորտների լեզվի ինքնամաքրումը ժամանակի և հավելյալ ջանքերի հարց է:

Սակայն առկա են նոր մարտահրավերներ, որոնք պահանջում են էլեկտրոնային միջավայր ներմուծել հայալեզու ամբողջ մշակույթը, անընդմեջ համալրել հայոց լեզվով համացանցային պաշարները, կատարելագործել այդ պաշարները սպասարկող էլեկտրոնային գործիքները, ստեղծել նորերը, ուժեղացնել ՀՀ լեզվական օրենսդրությունը: Այդ առումով զգալի աշխատանքներ կատարվել ու կատարվում են:[22] Սակայն անհրաժեշտ է պետության ավելի գործուն աջակցություն և համազգային ներուժի առավել համախմբում՝ հայերենն ու հայալեզու մշակույթը կենսունակ պահելու և մրցունակ դարձնելու համար:[23]

---

[22] Կարելի է հիշել հայ բառարանագրական «Նայիրի», ISMA, ArmDict.com կայքերը, «ԱՐԵՎԱԿ» շտեմարանը, http://unicodenow.com/ հայերեն յունիքոդ առցանց փոխարկիչը, բազմալեզու diict.com, hy.glosbe.com, abbyy lingvo էլ. բառարանները, հայերեն տառատեսակների tarumian.am կայքը և այլն:

[23] Թերացումների կողքին կարելի է տեսնել նաև հետաքրքիր ձեռքբերումներ: Նշենք դրանցից մեկը: Հայաստանի որոշ բուհեր իրենց կրթական բարձր մակարդակի, հեղինակության և կրթավճարի մատչելիության շնորհիվ հավաքագրում են նաև օտարազգի, հատկապես հնդիկ, պարսիկ ու արաբ ուսանողներ: Դա ամենից ավելի հաջողվում է Երևանի բժշկական համալսարանին (տարեկան 200-300 ուսանող): Այդ ուսանողները իրենց ուսումնառության առաջին երկու տարիներին պարտադիր սովորում են հայերեն (առաջիկայում այդ ժամկետը կդառնա 3 տարի): Համալսարանի հայագետ դասախոսները կարողանում են այդ ընթացքում այնքան գիտելիք ու հմտություն տալ, որ այդ ուսանողները, սկսելով բացարձակ զրոյից, ձեռք են բերում առօրյա, ինչպես նաև մասնագիտական գրավոր ու բանավոր հաղորդակցման բավարար ունակություն:

Ներկայումս, չնայած արտաքին ուժեղ ազդեցություններին ու ճնշումներին, հայերենում շարունակում են գործել ինքնամաքրման, ինքնակատարելագործման, բանականացման, տնտեսման միտումները, որոնց շնորհիվ լեզուն դառնում է ավելի կենսունակ, ճկուն ու արտադրողական: Հայերենին պակասում են այդ ձեռքբերումների ամենօրյա զանգվածային կիրառության ոլորտներ մի շարք բնագավառներում: Դրանք կարող է ապահովել պետությունը համապատասխան լեզվաքաղա-քականության միջոցով:

Գլխավոր խնդիրը հայախոս զանգվածի պահպանումն ու ընդլայնումն է: Դրա համար անհրաժեշտ է հայախոսությունը դարձնել մի կողմից՝ ինքնաբավ (ապահովել հայերենով տեղեկատվության, աշխատանքային ու ստեղծարար գործունեության և զվարճության ու ժամանցի լիարժեք հնարավորություններ), մյուս կողմից՝ փոխարկելի (ապահովել հայերենից այլ լեզուներ և հակառակը առցանց ինքնաշխատ որակյալ թարգմանության հնարավորություններ):[24]

Կարևոր խնդիրներ են նաև պայքարը հարաճուն անգլաբանությունների դեմ, վերացող բարբառների լիարժեք ուսումնասիրումն ու գրանցումը, գրական և խոսակցական

---

[24] Տե՛ս նաև **Հ. Զաքարյան**, *Լեզվաշինության արդի խնդիրները հայերենի մրցունակության բարձրացման տեսանկյունից*, // «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների ժողովածու (Երևան, հոկտեմբերի 17-19, 2013), Եր., 2014, էջ 256-259:

լեզուների անջրպետի նվազեցմանն ուղղված լեզվաշինական աշխատանքների ծավալումը, արևմտահայ գրական լեզվի պահպանումը ունեցող գաղթավայրերում, արդի գրական լեզվի երկու ճյուղերի հետագա տարամիտման կանխումը և գուցե հնարավորինս մերձեցումը:[25]

---

[25] 2010-ականներին ՀՀ սփյուռքի նախարարությունը ծրագրում էր ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնի հետ միասին կազմակերպել արևմտահայերենի կանոնարկման ու միասնական քերականության ստեղծման, Սփյուռքի լեզվական քարտեզի կազմման աշխատանքները, ընթացքի մեջ էին «Արևմտահայերենի պահպանման», «Արևմտահայերենի և արևելահայերենի մերձեցման» և «Հայերենի ուղղագրության» հանձնախմբերի ստեղծման աշխատանքները: Սակայն սփյուռքի նախարարության լուծարման պատճառով այդ ծրագրերը խափանվեցին: Այնուամենայնիվ մինչ այդ ՀՀ սփյուռքի նախարարության պատվերով «Զանգակ» հրատարակչությունը պատրաստել է *«Արեւմտահայերէնի քերականութիւն»* դպրոցական դասագիրք՝ 3 հատորով (Եր., 2014, 2015, 2018 թթ.): Սփյուռքի նախարարության աջակցությամբ լույս են տեսել նաև մի շարք այլ գրքեր՝ **Ռ. Թոխմախեան, Յ. Չոլաքեան, Ս. Տիոյեան, Ա. Քարտաշեան**, *Արեւմտահայերէնի ու արեւելահայերէնի մերձեցման ուղիները*, Եր., 2016, 146 էջ; **Յ. Չոլաքեան**, *Արեւմտահայերէնի քերականութիւն (կանոնակարգ եւ խնդիրներ)*, Ա. գիրք, Եր., 2017, 216 էջ, Բ. գիրք, Եր., 2019, 152 էջ; **Ս. Տիոյեան, Ա. Ֆիշենկճեան**, *Արեւմտահյերէնի արդի վիճակը հայկական գաղթօճախներում (Արեւմտեան Եւրոպա)*, Եր., 2017, 126 էջ; *Արեւմտահայերենի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում*, Եր., 2015, 65 էջ; **Ն. Հովհաննիսյան, Ս. Տիոյան, Ա. Գալստյան**, *Արևմտահայերենի և արևելահայերենի տերմինային համակարգերի զուգադրական քննություն*, Եր., 2014, 230 էջ; *Արդի լեզվաքաղաքականության խնդիրներ: Մայրենիի օրվան նվիրված գիտաժողովի նյութեր (Երևան, 2013 թ. փետրվարի 21)*, Եր., 2013, 114 էջ և այլն: Հրատարակման է պատրաստվում Ա. Սարգսյանի եռահատոր *«Արեւմտահայերէնի բառարանը»*:

Չնայած բոլոր մարտահրավերներին ու վտանգներին՝ հայոց լեզուն հիմքեր ունի պահպանելու իր արժանի տեղը արդի զարգացած լեզուների շարքում՝ յուրացման, տարածման, լիարժեք կիրառության ու կատարելագործման բավարար հնարավորություններով հանդերձ:

Միանգամայն իրատեսական է սպասելը, որ մոտ ապագայում համակարգչային ցանցերից ստացվող հայերեն տեղեկույթն իր քանակով կգերազանցի այլ ուղիներով (այդ թվում՝ կենցաղային զրույցից, մամուլից, հեռախոսով և նույնիսկ հեռուստատեսությամբ) ստացվող տեղեկույթին: Հատկապես թարգմանիչ ծրագրերի լիարժեք աշխատանքի դեպքում կտրուկ կմեծանա հայերենի տեղեկատվական արժեքը, կդադարի հայախոսության ծավալների նվազումը, մեծապես կբարձրանան հայախոս զանգվածի զարգացման հնարավորությունները ոչ միայն մտավոր, այլև տնտեսական առումով: Հայերենը կդառնա այն մրցունակ լեզուներից մեկը, որոնք ընդունակ կլինեն համացանցում առկա ամբողջ տեղեկույթը իրենցով արտահայտելու, ի վիճակի կլինեն էլեկտրոնային միջավայր տեղափոխելու իրենց մշակույթն ու կրթական համակարգը:

Այդպիսով հայերենը կկարողանա ազատագրվել իշխող լեզուների (անգլերենի, ռուսերենի և այլն) թե՛ գործառական, թե՛ կառուցվածքային ճնշումից, կազատագրվի զանգվածային երկլեզվության ու բազմալեզվության պարտադրված կապանքներից: Դրանով իսկ կստեղծվեն մեր

ազգային լեզվի անվտանգության կայուն և երկարատև երաշխիքներ։

Zakaryan Hovhannes – The Past, Present of the Armenian Language Planning and Its Vision of Future. – The history of Armenian language planning originates from ancient times. In the Armenian highland several native, not borrowed writing systems were created and used: ideographic inscriptions on pottery of the Early Bronze Age (V-III millennium BC), linear inscriptions (III-I millennium BC), Biaynian and Postbiaynian hieroglyphs (I millennium BC), Biaynian not Assyrian cuneiforms (VIII-VI century BC), phonetic writing on Mashtots alphabet (since the V century), etc.

The history of systematic work on standardization of the Armenian language began in the V century. In the V century extensive and voluminous works on language planning were done under the leadership of Mesrop Mashtots. These activities traditionally continued in the Middle Ages, when new fonts developed, new spelling rules were installed, punctuation marks, new words and grammar manuals were created, universities were opened, etc. Schools for language planning were known also (pro-Hellenic, pro-Latin, pro-Armenian). The most important achievements were the creation of Armenian typographic culture and periodicals in Armenian.

Language planning acquired a new dimension during the Soviet period, when specially authorized state agencies and structures were established (Terminological Committee, Council of Scientific and Technical Terminology, Institute of Language of the Academy of Sciences, chairs of Armenian Language, publishing

houses, etc). The Armenian language was introduced in the area of telecommunication (radio, television).

These traditions are generally carried on presently. However, there are new challenges which require to pass the culture in Armenian into the electronic environment, continuously replenish the Internet resources in Armenian language, to create and enhance electronic tools, that serve these resources (digitizer, orthographic converter, transcriber, search engine, hyphenator, spell checker, translator, OCR, reader, etc), to strengthen the Language Legislation of RA. A great amount of work was done for these purposes and is being done. However, more active state engagement, more efficient involvement of the national potential is necessary to maintain the viability of the Armenian language and culture in Armenian and for making them competitive.

Закарян Оганес – Прошлое, настоящее и видение будущего армянского языкового строительства. – История армянского языкового строительства берет начало с древнейших времен. В Армянском нагорье были созданы и использовались несколько исконных, не заимствованных письменностей: идеографические надписи на керамике раннего бронзового века (V-III тысячелетия д. н. э.), линейные надписи (III-I тысячелетия д. н. э.), биайнийские и постбиайнийские иероглифы (I тысячелетие д. н. э.), биайнийские клинописи не на ассирийском языке (VIII-VI века д. н. э.), фонетическое письмо, написанное маштоцским алфавитом (начиная с V века) и т. д.

История систематизированных работ по нормализации армянского языка начинается с V века. В V веке совершились всесторонние и объемные работы по языковому строительству под руководством Месропа Маштоца. Эти работы традиционно

продолжались и в средние века, когда разработались новые шрифты, устанавливались новые орфографические правила, создавались знаки препинания, новые слова, пособия по грамматике, открывались университеты и т. д. Известны также школы языкового строительства (грекофильская, латино-фильская, арменофильская). Важнейшими достижениями являются армянская типографическая культура и периодические издания на армянском языке.

Языковое строительство приобрело новый размах в годы советской власти, когда создались специально уполномоченные государственные структуры и органы (терминологический комитет, совет научно-технической терминологии, институт языка академии наук, кафедры армянского языка, издательства и т. д.). Армянский язык был внедрен в область телекоммуникации (радиовещание, телевидение).

Эти традиции в основном продолжаются и сегодня. Однако есть новые вызовы, которые требуют ввести в электронную среду армяноязычную культуру, непрерывно пополнять интернет ресурсы на армянском языке, создавать и усовершенствовать обслуживающие эти ресурсы электронные инструменты (цифрователь, орфографический конвертор, транскриптор, поисковик, переносчик, спеллчекер, переводчик, распознаватель символов, читающее устройство и др.), усилить языковой кодекс РА. В этих направлениях уже сделаны и делаются существенные работы. Однако необходимы более активное содействие государства, большая сплоченность общенационального потенциала, чтобы сохранить жизнеспособность армянского языка и армяноязычной культуры и сделать их конкурентоспособными.

Թադևոսյան Հասմիկ
(ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

«ԲԺՇԿԱՐԱՆ ՁԻՈՅ ԵՎ ԱՌՀԱՍԱՐԱԿ ԳՐԱՍՏՆՈՅ» ԵՐԿԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ»

Միջին հայերենով շարադրված բժշկարանների շարքում առանձնանում է 13-րդ դարում *ստեղծված **«Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ»**[1]* երկը, որ նվիրված է ձիաբուծության և ձիաբուժության հարցերին: Վերջինս Սմբատ Գ-ի հրամանով Սիս մայրաքաղաքում կազմել է ասորի բժիշկ Ֆարաջը (1296-1298), որին ձեռագիրը գրելու հարցում օժանդակել է Թորոս քահանան: Սույն ձիագիտարանը փաստում է, որ Հայաստանը հնագույն ժամանակներից ի վեր ունեցել է ձիաբուծության հարուստ ավանդույթներ, որոնք էլ շարունակել են զարգանալ Կիլիկյան Հայաստանում[2]:

Բժշկագիտական կարևոր հուշարձան լինելուց բացի, ձիաբուժական այս ձեռնարկը արժևորվում է որպես միջին հայերենի՝ մասնավորապես *կիլիկյան նորմավորման*

---

[1] *Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ* (ԺԳ դար), աշխատասիրությամբ Բ. Լ. Չուգասզյանի, Ե., 1980: (Այսուհետ տեքստում՝ ԲՁ համառոտագրությամբ, բերվող օրինակների էջերը կնշվեն փակագծերում):

[2] **Ս. Վարդանյան**, *Հայաստանի բժշկության պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը*, Ե., 2000, էջ 128-130:

շրջանի[3] հուշարձան և կարևոր սկզբնաղբյուր միջին հայերենի ամբողջական բառապաշարը ներկայացնելու տեսանկյունից: Շարադրված լինելով կիլիկյան միջին հայերենով և Հերացու հետևողությամբ, այն է՝ ժողովրդին հասկանալի լեզվով, ԲՋ-ն, անշուշտ, աչքի է ընկնում բառապաշարի, մասնավորապես բժշկական տերմինների, նաև քերականական իրողությունների ընդհանրությամբ: Սակայն այս ձիազրտարանում տեղ են գտել նախորդող բժշկարաններում (Հերացի, Աբուսայիդ, Գրիգորիս), ինչպես նաև երկրագործական «Գիրք վաստակոց»-ում չվկայված զգալի թվով նոր բառեր, որոնք, հնարավոր է՝ առաջին գրավոր վկայությունները կամ եզակի կիրառություն լինեն: Նշենք նաև, որ ԲՋ-ն՝ իբրև միջինհայերենյան սկզբնաղբյուր, ընդգրկվել է միայն «Միջին հայերենի բառարան»-ում: Ըստ Բ. Չուգասզյանի՝ այս երկում կիրառվել է «մեր բառարաններին անծանոթ 105 հայերեն բարդություն և 146 փախառյալ բառ»[4]: Դրանց մի ստվար մասը կազմում են բժշկական բառանունները՝ կազմախոսական բառեր, ախտանուններ, բուսանուններ, դեղանուններ, նաև ձիերին առնչվող բառեր: Ինչպես միջնադարյան բժշկարաններում առհասարակ, ԲՋ-ում էլ արաբերենից, պարսկերենից և այլ լեզուներից փոխառված բժշկական տերմինների կողքին

[3] **Գ. Ջահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 26:
[4] Տե՛ս *Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ* (ԺԳ դար), Ե., 1980, Ներածություն, էջ 27:

արժեքավոր են հատկապես այդ բառերի հայերենաստեղծ համարժեքները: Մեր լեզվի բառակազմական եղանակներով ստեղծված նոր տերմինները հիմնականում իրենց վրա կրում են կամ փոխատու լեզվի կամ մեր ժողովրդական մտածողության կնիքը:

Սույն ուսումնասիրության մեջ կարևորվում են հատկապես բժշկական տերմինի արժեք ունեցող փոխառությունները, նորակազմությունները, բառիմաստի նոր դրսևորումները, ինչպես նաև ժողովըրդախոսակցական, բարբառային բառերը:

1. **Փոխառություններ:** Ինչպես և բնորոշ է միջնադարյան բժշկարաններին առհասարակ, ԲՁ-ի բառապաշարի անքակտելի մասը ևս կազմում են բժշկական տերմինի արժեք ունեցող փոխառյալ բառերը՝ ախտանուններ, կազմախոսական բառեր, բուսանուններ, ինչպես նաև՝ ձիանուններ ու ձիերին առնչվող այլ բառեր: Դրանք մեծամասամբ արաբերեն և պարսկերեն բառեր են, մի քանի ֆրանսերեն ձիագիտական տերմին և 2 թուրքերեն բառ: Ինչպես վերն ասացինք, փոխառությունները վկայված չեն ավելի վաղ ստեղծված բժշկարաններում, կիրառվել են միայն ԲՁ-ում, մի փոքր մասը միայն երկու դար անց գտնում ենք Ամասիացու բժշկարաններում:

Պայմանավորված արաբական բժշկագիտության աղբյուրների օգտագործմամբ՝ փոխառյալ բառերի գերակշիռ մասը կազմում են ***արաբական փոխառությունները*** կամ

արաբերենի միջնորդությամբ այլ լեզուներից անցած բառերը (մեր հաշվումներով՝ 84) ինչպես՝ *ահնաֆ/հանաֆ* «ծուռ ոտք» (89), *աֆ* «սմբակի կեղև» (94), *բայտար* «անասնաբույժ» (114), *գորուփ* «աչքի անկյունները» (92), *զառզուռի* «պսպղուն բծերով ձի» (56), *զպիպճպել* «ոջլախոտ» (115), *ընթիշար* «ոտքերի երակների հիվանդություն» (98), *ըռքապի* «ծնկի հիվանդություն» (100), *թավասուֆ* «զրաստների հիվանդություն» (140), *խարինճ* «մոխրագույն ձի» (60), *խումահ* «ծնկից իջնող ուռուցք» (101), *համր* «շատ գարի ուտելուց առաջացող հիվանդություն» (106), *հարտ* «թիկնոսկրի ցավ» (101), *հլելիճ* 1«բույս հալիլա» (115), 2 «այտուցային հիվանդություն» (119), *հմլաճ* «դանդաղ քայլվածք ունեցող ձի» (80), *ճարատ* «ձիու ծնկների ուռուցք» (100), *մամիրան* «կանթեղախոտ» (168), *մլուխ* «զմռնենի» (155), *մուլահ* «ձիու ծնկների ուռուցք» (101), *մուհաճալ* «սպիտակառոտք ձի» (57), *մտէտ* «շնախոտ» (160), *յասամ* «հողերի կարծրացում» (102), *յամմիր* «անասնակեր խոտ» (87), *նազար* «արագաշարժ ձի» (103), *նքթէպ* «թիակ» (46), *նատիֆ* «օճառախոտ» (132), *շահրի* «ազնվացեղ սև զրաստ» (52), *շուռնախ* «թարախակալ վերք» (117), *ուկուղայ* «Հնդկաստանում բրինջալ կոչվող պտուղը» (69), *պաճար* «փորը ուռած» (101), *ջանղիանէ* «օձի սխտոր» (103), *ռայսայ* «սմբակները քայքայող ախտ» (131), *սինապ* «համեմունքի տեսակ» (110), *սուլախ* «աչքի կոպի բշտիկ» (163), *վլախ* «ձիու տեսակ» (52), *տոլի* «սև խաղող» (157), *քամնայ* «տեսողության մթագնում» (143), *քուսայ* «ցրտառության մի տեսակ» (129),

ֆախատ «ազդրի հիվանդություն» (100), *ֆարֆիուն* «իշկաթնուկ» (126) և այլն:

Արաբերենից հետո զգալի թիվ են կազմում նաև ***պարսկական փոխառությունները*** (մեր հաշվումներով՝ 24), որոնք բույսերի, դեղերի և հիվանդությունների, նաև ձիերի անուններ են, ինչպես՝ *բահրակ* «անասնակերի բաժին» (183), *գորգզան* «գայլի վազք ունեցող ձի» (82), *զընձուֆր* «կինուբարիս, քիմիական նյութ» (160), *մնձան* «մարջան» (160), *շրէշ* «շուշանազգի բույս» (160), *չալ* «կարմիր և սպիտակ մազեր ունեցող ձի» (57), *պատխունամ* «վատ հիվանդություն» (118), *ռէչ* «ատամնաշար» (54), *սամանդ* «սև բաշով և պոչով խարտյաշ ձի» (59), *սիսլախ* «կրակոտ, դյուրաբորբոք ձի» (91), *սպունկզուռ* «շնխաղող» (158), *տարէշթայք* «պատատուկ դաշտային» (86), *տորվանտակ* «նորահաս միրգ» (145), *քարաք* «հյուսվածքների քայքայումով հիվանդություն» (109), *քիքք* «աչքի բիբ» (109), *ֆախտ* «խաղողի տեսակ» (118), *ֆառայ* «խոտի ցողուն» (83), *ֆնտու* «շատ զարի ուտելուց առաջ եկող հիվանդություն» (88), *ֆարխութզին* «մրտի տակ» (103) և այլն: Նկատենք, որ ի տարբերություն արաբերեն բառերի՝ պարսկական փոխառություններից երեքը՝ *շրէշ, չալ, սիսլախ*, նշված

իմաստներով պահպանվելով հայերենի բարբառներում[5], ամրագրվել են նաև արդի հայերենի բառապաշարում[6]:

ԲԶ-ում կիրառվել են նաև **ֆրանսերեն** երեք՝ *սրօս* «ձիու սրունքի վրայի կարծր այտուց» (98), *տուբեթ* «ձիու ճակատի մազափունջ» (55), *ֆրացին* «ձիու խոց» (119) և **թուրքերեն** երկու՝ *մօրմուր* «արևախաղիկ» (112), *սաղրի* «գրաստի կամ ձիու գավակ» (88) բառեր: Ֆրանսերեն galop «քառասմբակ» բառով բժշկարանում կիրառվել է *կալօպել* «քառասմբակ վազել» բայը (96):

2. **Նորակազմություններ:** Մեր լեզվի համար առավել կարևոր նշանակություն ունեն օտար տերմինների կողքին հայերեն համարժեք բառերի կիրառությունները: Ինչպես միջնադարյան մյուս բժիշկարաններում, ԲԶ-ն ևս ձգտել է օտար բժշկական տերմինները բացատրել միջին հայերեն նոր կազմություններով, որոնք էլ գործածել է փոխառություններին զուգահեռ, ինչպես՝

Նեքթաֆ (<արաբ. kataf) «թիկնոսկրի ցավ»՝ **բէճցավ.** «Եւ *նեքթաֆն*, որ թարգմանի *բէճցաւ*» (110):

Ռայսայ (<արաբ. rahşa) «սմբակները քայքայող հիվանդություն»՝ **բնեռհաս.** «Ցաղագս *ռայսայ*ի, որ է *բնեռհասն*» (131):

[5] *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ.4,Ե., 2007, էջ 285, 365, հ.5, Ե., 2008, էջ 388:

[6] **Է. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, հ.1 էջ 362, հ..2 էջ 1120, 1153:

Տայար (<արաբ. da'ar) «ապականություն, նեխվածութ-յուն»՝ **բերանցաւ**. «Յաղագս *բերնցաւի*, որ *տայար* լինի… զայ ի բերնէ հոտած հոտ» (148):

Տարֆա (<արաբ. ṭaefa, պրսկ. tārfē) «աչքի արյունա-զեղում»՝ **զարկք**. «Յաղագս *տարֆայի*, որ է *զարկք* ի յաչքն» (149):

Ֆրացին (<ֆր. farcin) «գրաստների հիվանդությու, որի դեպքում թարախային խոցեր են առաջանում»՝ **ձիախոց**. «Յաղագս վիրաց, որ ի *ֆրացինն*, որ կոչի *ձիախոց*» (119):

Բժշկարանը աչքի է ընկնում հայերենի բառակազ-մական զրեթե բոլոր միջոցներով կազմված բառերի առա-տությամբ: Նորակազմությունները, ստեղծման գործում, ինչպես և միջնադարյան բժշկարաններում առհասարակ, ակնառու է ժողովրդական մտածողության ազդեցությունը, ինչպես՝ *այգոյհոտ* «խաղողի վազի էտած մասերը» (61), *աւաղութիւն* «նիհարություն» (45), *գազանառ* «գազանի կծած» (143), *դեղնխունկ* «հնդկական քրքում» (111), *ծուծոսկր* «ծուծ պարունակող ոսկոր» (58), *նեղհրել* «սեղմել» (77), *ոռաղի* «ուղիղ աղիք» (112), *պձկոռք* «ուսազլուխ» (50), *քթահրան / քթահրկոտ* «սայթաքող, քիթ-բերանի վրա ընկնող» (94) և այլն:

ԲՁ-ում գերակշռում են իսկական բարդությունները: Նոր ախտանունները հիմնականում կիրառվել են ***գոյական***

(կենդանանուն, մարմնամաս)*+ ցաւ* կաղապարով[7], որտեղ *ցավ*-ը հիվանդություն է նշանակում, ինչպես՝ *արծվեցավ* «ջրգողություն» (138), *բէճցավ* «թիկնոսկրի ցավ» (101), *բերնցաւ* «բերանի ցավ կամ խոց» (148), *ըղտացավ* «գրաստների մկանային հիվանդություն» (126), *մկնացավ* «ռևմատիզմ» (39), *նքպեթցավ* «թիակոսկրի ցավ» (101), *պախրեցավ* «տավարի վարակիչ հիվանդություն» (112), *սմբակցավ* «սմբակի վերք» (42), *սպիտակցավ* «մաշկը սպիտակելու հիվանդություն» (139), *քուռկցավ* «քուռակների գեղձախտ» (137):

Իսկական բարդությամբ կազմել են նաև այլ ախտանուններ՝ *բեւեռհաս* «սմբակները քայքայող հիվանդություն» (90), *ձիախոց* «ձիու քոս» (119) և այլն:

Նոր ախտանուններ են գործածվել նաև **-ութիւն** ածանցով, ինչպես՝ *արմուհություն* «կծանություն» (73). *աւաղութիւն*/ավղութիւն «նիհարութիւն» (45), *բերնցաւութիւն* «բերանի ցավ կամ խոց» (41), *խումրութիւն* (արաբ. xumār «գինի»+ութիւն), «ջերմություն, գլխացավ» (112), *հարունութիւն* (արաբ. harūn «կամակոր» +ութիւն), «ձիու

[7] Կենդանիների անվանումներով բաղադրված ախտանունների մասին առավել մանրամասն տե՛ս մեր *Կենդանիների անվանումներով ախտանունները «Բժշկարան ձիոյ» երկում (XIIIդ.)* հոդվածում, http://language.sci.am/sites/default/files/hasmik_tadewosyan.pdf , էջ 81-95:

կամակորություն» (78), *մկնացավութիւն* «ռնմատիզմ» (115), *շողություն* «ջերմություն» (50, 51):

Իսկական բարդությունների շարքում զգալի թիվ են կազմում ***բերան, գլուխ, թև, ծայր, մեջ, ող, փող, տակ, տեղ*** բաղադրիչներով կազմախոսական նոր բառերը, ինչպես՝ *անդմմէջ* «աճուկ, երանք» (55), *բէճգլուխ* «ուսագլուխ» (101), *երկթև* «երակաթև» (90), *թամքող* «այն ողերը, որոնց վրա թամբն է դրվում» (58), *կզող* «թամբի տեղը բարձրացնող ողերը» (58), *ծնաբերան* «արգանդի բերան» (51), *ծղատակ* «բազկոսկրի ներքևի մասը» (46), *կոճբերան* «վեգի դուրս ցցված մասը» (47), *ձվատակ* «ձվարանի ներքևի մասը» (151), *մազբերան* «մազի ծռված մասի ծայրը» (90), *մազծայր* «մազի ծայր» (55), *մազտակ* «մազի տակի մասը» (55), *պախցտեղ* «ձիու գլխի առաջամասը՝ սանձատեղ» (88), *սմբակբերան* «սմբակի ծայրամասերը» (89), *տոշգլուխ* «ձիու առնանդամի գլուխը» (131), *տոշփող* «ձիու առնանդամի միզանցքը» (138), *քաշտեղ* «ձիու փորքաշի հարած տեղը» (95):

Իսկական բարդությամբ կիրառվել են նաև ձիերին առնչվող բառեր, ինչպես՝ *գորտնփոխ* «սմբակի միջի մասի փոփոխումը» (90), *դեկնախայտ* «դեղնագույն» (56), *եզնազաւակ* «եզի պես լայն ու տափակ գավակ ունեցող գրաստ» (93), *խոզմազ* «խոզի մազ» (158), *խոզմիս* «խոզի միս» (142), *խոյաքիթ* «խոյի նման քիթ ունեցող» (45), *մազկեր* «կոշտ մազ» (158), *մշկաբաշն* «սևավուն բաշ» (59), *մշկագույն* «սևավուն մաշկի գույն» (60), *նօսրասմբակ* «նուրբ սմբակ

ունեցող» (89), *սպնախայտ* «ոսպնման» (59), *տափքիթ* «տափակաքիթ» (45), *ցոէշ* «վայրի էշ» (55)::

*Հ*այերենաստեղծ բուսանունները կամ դեղանունները հանդիպում են ինչպես համադրական, այնպես էլ վերլուծական բարդությունների ձևով. *խողկաղնի* «կաղնու պտուղը» (104), *կանիփայտտիզ* «գերչակ» (115), *հավնդեղ* «անստույգ դեղ» (118), *ջրկոտեմ* «խաչածաղկավոր բույս» (123), *սպիտկդեղ*__«սպիտականերկ» (123), *կորի ագի* «կարիճատուտ» (107), *մարեմա տակ* «խնկողկուզակ» (115), *սատանայի խիարուկ* «կատաղի վարունգ» (106), *սատանայի սեխուկ* «դդմազգի բույս» (123): Նշված բուսանուններից չորսը՝ *խոզկաղնի, կանեփայտտիզ* (տզկանեփատ)*, ջրկոտեմ, սպիտկդեղ,* պահպանվել և ամրագրվել են արդի հայերենի բառապաշարում, իսկ *կորի ագի*-ն և *մարեմա տակ*-ը ամրագրվել են *կարիճատուտ* և *մարեմխոտ* տարբերակներով[8]:

Ածանցմամբ, բացի վերը նշված –ութիւն ածանցից, ավելի քիչ նոր բառեր են գործածվել, ինչպես՝ *ազկ**իկ*** «ընտիր ցեղից, տոհմիկ» (70), *կտր**ուք*** «կտրված, վիրավոր տեղը» (159), *շք**ելի*** (շեք+ելի), «երկու սրունքների միջև եղած արանքը» (100), *փրփ**իչ*** «օճառախոտ» (155), *քայլ**ան*** «հանդարտ քայլվածքով ձի» (80):

ԲԶ-ում կիրառվել են նաև զգալի թվով նոր բայեր

---

[8] **Է. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, h.1 էջ 589, h..2 էջ 1440, 1250, 1325, 705, 979:

(պարզ և բարդ), որոնք կազմվել են ինչպես բնիկ, այնպես էլ փոխառյալ արմատներին *-ել/իլ* բայածանց ավելացնելով, ինչպես՝ *անկածնիլ* «տկարանալ, ուժից ընկնել» (76), *աղփրթել* «սանձարձակ դառնալ» (76), *արղապել* (արաբ.պրսկ.arqāb «կարիճ, պոչը կեռ»+ ել) «ծռել, կորացնել» (94), *գահըլնալ* (արաբ.kāhil, պրսկ.kahela «ծույլ, դանդաղկոտ») «թուլանալ» (106), *գաւկել* «հեծնել» (69), *գորզզալ* (պրսկ. gurg «գայլ» zana «կերպ, ձև» +ալ) «գայլի պես վազել» (80, 48), *դեղղրել* «դեղ քսել» (105), *խումրնալ* «ջերմել» (79), *կալաւպել / կալաւփցնել* (ֆրանս.galop «քառասմբակ») «քառասմբակ վազել/ վազեցնել» (89, 96), *մաղտել* (արաբ, պրսկ.makta ՙ«կտրում, հերձում»+ել) «կտրել, հատել» (91), *նեղհրել* «սեղմել» (77), *չախել* (պրսկ. čak «վառել»+ել) «ջերմից այրվել» (110), *քաշկե*լ (պհլ.kašīk «չվան» +ել) «փորքաշ անցկացնել» (77)։ *բերնվախ լինել* «բերանից ինչ-որ վախ զգալ» (72),

3. **Նորիմաստ բառեր**։ ԲՁ-ում հանդիպում են նաև գրաբարյան բառերի վերաիմաստավորմամբ առաջացած նոր կիրառություններ (քննել ենք 12 նոր իմաստ)։ Դրանք առօրյա-խոսակցական այն բառեր են, որոնք հիմնականում *նմանության զուգորդությամբ*[9] կիրառվել են բժշկական տերմինի նշանակությամբ։ Մեր ուսումնասիրության շրջանակներում քննվել են միայն այն իմաստային նոր դրսևորումները, որոնք ամենայն հավանականությամբ

---

[9] **Է. Աղայան**, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 79։

առաջին անգամ հանդիպում են հենց այս բժշկարանում: Նշենք նաև, որ վերջիններս հիմնականում տեղ չեն գտել բացատրական բառարաններում, բացի «*Միջին հայերենի բառարան*»-ից (այսուհետ՝ ՄՀԲ): Բերենք դրանք.

Ախտ բազմիմաստ գոյականը կիրառվել է նոր՝ «դաշտան» նշանա-կությամբ. «Նշանն այս է, որ ընդունի զովտակն, որ սկսու ու *ախտ* իջնու ի յիրմէ» (50): «Եւ հետ այնոր, թէ սկսնու *ախտն*, նա…կուզէ զովտակն» (51): Բերված իմաստն առանց աղբյուրի հղման նշում են միայն երեք բառարաններ
(չկա ՄՀԲ-ում)[10]:

Անդամ գոյականը, որ գրաբարում ունի «մարմնի մաս» և «մարմին» իմաստները, ԲՋ-ում կիրառվել է նաև իբրև կոնկրետ մարմնի մաս՝ «ազդր, ազդրոսկր». «Եւ ագետկուցն միսն, որ կայ յետն *անդմացն*, նա լինի հաստ և պինդ» (47): «Կենդանու ազդր» իմաստը կա Ղարաբաղի և Նոր ջուղայի բարբառներում[11], իսկ արդի հայերենի բառապաշարում ամրագրված է «արտաքին վերջույթ» նշանակությունը[12]:

Բոլոր բառը «շրջան, պտույտ» իմաստի[13] ընդլայնմամբ

---

[10] *Առձեռն բառարան*, Վենետիկ, Ս. Ղազար, 1865, էջ 7, **Ս. Գաբամաճյան**, *Նոր բառգիրք հայերեն լեզուի,* Կ. Պոլիս, 1910, էջ 11, **Ստ. Մալխասյանց**, *Հայերէն բացատրական բառարան*, Ե.,1944, հ. 1, էջ 21:

[11] *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ.1, Ե., 2001, էջ 56:

[12] **Է. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, հ.1 էջ 51:

[13] *Նոր բառգիրք հայկազնեան լեզուի* , Վենետիկ, 1836-37, հ.1, էջ 500:

բժշկարանում գործածվել է «ձիու վրա տեղ-տեղ շրջանաձև ոլորված մազեր» նշանակությամբ: Պետք է նկատել, որ նշված իմաստով բժշկարանի ցանկում կիրառվել է նաև **պտույտ** գոյականը, իսկ գլուխներում՝ *բոլոր*-ը. «Վասն պտուտնոյ, որ ի մազն լինի» (38): «Յաղագս բոլորնոյն, որ կենայ ի գրաստն» (55):

Դուռն գոյականն իբրև «կաթնատամ» է կիրառվել. «*Դռունքն* սկսնու ի սննալ (53): «Եւ առջի ակռայքն, որ բուսնի քուռկին, նա *դրունքն* է» (54);

Իջուածք հարակատարի ձևը, որ Աճառյանը դնում է նոր բառերի շար-քում «կաթուած» իմաստով[14], ԲՁ-ում հանդիպում է բժշկական «ճողվածք» նշանակությամբ. «Յաղագս ցաւու, որ յաճուկն լինի զէղ ուռէց կամ *իջուածք* է» (58): «Եւ այն, որ կոճբխի *իջուածք* է, որ ի մէջ կոճին որպէս ոսկոր» (100): Նշված իմաստը գտնում ենք նաև 15-րդ դարում ՝Ա. Ամասիացու բժշկարանում[15]:

Նկատենք, որ տվյալ բառը բարբառներում պահպանվել է «աղեթափություն», «կաթված», «մարմնի ուռուցք», «իջնելու կերպ» նշանակություններով[16], իսկ արդի հայերենի բառապաշարում ամրագրվել է նաև բժշկական տերմինի «ճողվածք» իմաստը[17]:

---

[14] **Հ. Աճառյան,** *Հայերէն արմատական բառարան,* հ,2, Ե.,1973, էջ 119:

[15] **Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան,** *Միջին հայերենի բառարան* (այսուհետ՝ ՄՀԲ), Ե., 2009, էջ 274

[16] *Հայոց լեզվի բարբառային բառարան,* հ.2, Ե., էջ 181:

[17] **Է. Աղայան**, նշվ. աշխ, էջ 504:

Հարակատարի մեկայլ ձև՝ **պատռած–**ը, որ գրաբարում ունի «ճեղք, ճեղքվածք» բառիմաստը[18], ԲԶ-ում ևս կիրառվել է «ճողվածք» իմաստով (ՄՀԲ-ն չունի). «Եւ այս նեղս ի պորտն լինի՝ ի ներքի կողմն, և ասեն իւր *պատռած*, և կամ լինի այս *պատռածս* այլ ի վայր, մերձ փոքր փորոյն, և կամ լինի աճուկն» (163);

Խնձորք գոյականը, որ միջնադարյան բժշկարաններում հանդիպում է «կատիկ», «գավակ» իմաստներով[19], ԲԶ-ում գործածվել է «կրունկների դուրս ցցված կլոր մասը» նշանակությամբ. «Եւ կոճացն ներքի դեհին լայնքն և կըրնկացն մեծութիւն ու երկու *խնձորքն* կըրնկացն ի դուրս և սմբակացն մեծութիւն սիրուն է» (46-47):

Կերիչ / ուտիչ ածականը կիրառվել է գոյականական «արյունոտ խոց» իմաստով. «Վասն *կերիչ* ցաւն, որ է դաշտիկ» (39): «Յաղագս *ուտիչ* ցաւու» (116): «Այլ դեղ *ուտչի* և այլ խոցերոյ» (117):

Հովություն բառը, որ գրաբարում «զովություն» իմաստն ունի[20], ԲԶ-ում գործածվել է որպես հիվանդություն՝ «ցրտառություն, գայլցավ», բայց բառարաններում գրանցված չէ, բացառությամբ ՄՀԲ-ի. «Վասն գայլցաւի, որ է *հովութիւն*» (39): «Պատճառքն լինի ի հովէ և ի քրտնելոյ» (120):

---

[18] *Նոր բառգիրք հայկազնեան լեզուի*, Վենետիկ, 1836-37, հ.2, էջ 604:

[19] **Նորայր Բյուզանդացի,** *Բառգիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց* (Մարտիրոս Մինասյանի հրատարակությանբ), Ժնև, 2000, էջ 296:

[20] *Նոր բառգիրք հայկազնեան լեզուի*, Վենետիկ, 1836-37 , հ.2, էջ 123:

Ճաղ վրացերենից փոխառված գոյականը, որը Աճառյանը վկայված է համարում 15-րդ դարից[21], ԲՁ-ում կիրառվել է «սրունքի երկու ոսկորները՝ ոլոք և նրբոլոք» իմաստով. «Եւ կայ, որ խլի բազկին *ճաղն*: Եւ ոմանք մի ասցել են, թէ չէ այն բազկին *ճաղն*, ապա այն երակ է ու ի դուրս կու գա» (99): Նկատենք, որ *ճաղ*-ի բալոր նշանակությունները պահպանվել են հայերենի բարբառներում, իսկ հիշյալ իմասն ունեն Ղարաբաղի և Նոր Նախիջևանի բարբառները[22]:

Ոռ գոյականը միջին հայերենյան «առարկայի տակ», «հետույք», «հետանցք» նշանակություններից բացի, ԲՁ-ում հանդիպում է նաև «աղիք» իմաստով (այս իմաստը չունի ՄՀԲ-ն). «Վասն որ *ոռն* ի դուրս գայ և շրջի» (40);

4. ԲՁ-ում, ինչպես և միջնադարյան մյուս բժշկարաններում, աչքի են ընկնում բժշկությանը, մասնավորապես ձիաբուժությանև վերաբերող **ժողովրդախոսակցական, բարբառային բառերը**, ինչպես՝ *աղսիբաղս* «խառնսգնաց» (ձիու մասին,95), *աճռել* «որորել, մերսել» (121), *բուռակ* «բորակ» (121), *գըռտատել* «գրգռել, բորբոքել» (88), *դարձվորտել* «այլակերպվել» (111), *գըլմփիլ* «գլխիվայր ընկնել» (76), *թաղթփֆիլ* «իրեն թափ տալ» (68), *թարխռել* «թարախակալել» (139), *ժօճտալ* «երերալ» (74), *խալիկ* «բազկոսկր» (98), *խածնան* «կծան» (89), *խոցռե*լ «խոցոտել» (101), *խռընճող, խռընճաւղ* «խխունջ» (54,151),

---

[21] **Հ. Աճառյան,** *Հայերէն արմատական բառարան,* հ.3, Ե., 1977, էջ 178:

[22] *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ.3,, Ե., 2004, էջ 364:

ծմալ, ծծմալ «տնքալ անասունի» (126, 151), *կամփէ* «կանեփյա» (121), *հայհանդ* «հանդարտ» (75), *շողոտել* / *շողրել* «ջերմել» (41,87) և այլն:

5. ԲԶ-ում կիրառվել են նաև մի շարք **անծանոթ, անստույգ ծագում ունեցող բառեր**, որոնք արձանագրված են միայն ՄՀԲ-ում, ինչպես՝ *աղվանեղի* (105), *աղվանաղի* (137), *գում* (չկա ՄՀԲ) «ճահճային կնյուն» (111), *ըռիաւալան* «ինչ-որ հիվանդություն» (107), *խոյլ* «մնթուր, խլածաղիկ» (121), *կոճբուխ* (100), *կուղունծ* (չկա ՄՀԲ) «կճղակ» (90), *հավնդեղ* «հավանի մեջ շինած դեղ» (118), *յազար* «անասունների ինչ-որ հիվանդություն» (99), *յիշոցք* «ձիերի սպեղանի» (126), *նոուֆունկառ* (143), *սնուկ, սունակ* «ինչ-որ հիվան-դություն» (58բ), *սուղաէ* «անորոշ խոտ» (107), *սպավայ* (42), *տակշուր* «հվնբ. զրաստներին սպասարկող անձ» (87), *տայխաւն* «հվնբ.ոտքերի հիվան-դություն» (99), *տուպիա* (114), *քամախ* (100), *քուռճայ* (119) և այլն:

Այսպիսով, ԲԶ-ում կիրառվել են բժշկական տերմինի արժեք ունեցող բազմաթիվ փոխառյալ, նորակազմ, նորիմաստ, ինչպես նաև ժողովրդախոսակցական, բարբառային բառեր, որոնք չեն հանդիպում նախորդ դարաշրջանի բժշկարաններում: Դրանց մի մասը՝ հիմնականում նորակազմ բառեր, պահպանվել և ամրագրվել է արդի հայերենի բառապաշարում:

Tadevosyan Hasmik - General Characteristics of the Vocabulary of the the Work "Horses' Cures Book " (13 c.). - The article discusses the vocabulary, in particular medical terms and words describing horses, that were used in the 13th-century medicine book "Horses' Cures Book". This work is of great interest from the point of view of Middle Armenian vocabulary observation. In this medical book there were used numerous newly-formed, newly-semantic and loan words with medical term value, as well as some colloquial and dialect words that are not used in medical books of previous centuries. Some of them are preserved and recorded in the Modern Armenian explanatory dictionaries.

Тадевосян Асмик - Общая характеристика словарного запаса произведении "Лечебник лошадей" (XIII в.). - В статье рассматривается словарный запас, в частности медицинские термины и слова, описывающие лошадей, которые употреблялись в медицинской произведении 13-го века "Лечебник лошадей". Это произведение представляет большой интерес с точки зрения изучения словарного запаса среднеармянского языка. В этом лечебнике были использованы многие новообразования, семантические новые слова, заимствованные слова, а также народно-разговорные и диалектные слова, свойственные медицинским терминам, которые не встречаются в лечебниках предыдущего века. Часть из них были сохранены и зафиксированы в толковых словарях современного армянского языка.

Խաչատրյան Հասմիկ
(ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԼՈՒՍԱՄՈՒՏ ԵՎ *ՊԱՏԾԳԱՄԲ* ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՆՈՒՆՆԵՐԸ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հին ժամանակներում գյուղական տունը, ինչպես գրում է ազգագրագետ Բենսեն՝ Սահակ Մովսիսյանը, միհարկանի կամ երկհարկանի, բարձր պատերով, լուսամուտներով տունը չէ, այլ մարդու հասակից մի քանի թիզ բարձր, լեռան կամ բլրի նման մի կառույց է, որը, ըստ նրա, արաբերեն կոչվում է ***խուբա*** (*գուբբէ*), այսինքն՝ կամարաձև, գմբեթաձև: Տան վերևում երդիկն է, իսկ երդիկի ճիշտ տակը իջնում է թոնիրը: Ընդհանուր առմամբ հայկական գյուղերին մոտենալիս տների ամբողջությունը պատկերանում է իբրև հողե բլուրների մի ամբողջություն՝ ծուռումուռ, նեղ փողոցներով իրարից անջատված[1]:

Հայտնի է, որ հին տներում լույսը ներթափանցում էր երդիկից, այսինքն՝ ***երդիկը*** եղել է *տանիքի լուսամուտը*: Դեռևս 5-րդ դարի մատենագիրներ Եղիշեի, Եզնիկի, Ագաթանգեղոսի, Բուզանդի երկերում գործածվել է այս բառը և ունի «տանիքի լուսամուտ, տուն, տնվոր, տնեցիներ»

---

[1] **Սահակ Մովսիսյան (Բենսե)**, *Հայ ազգագրություն և բանահյուսություն*, հ. 3, Ե., 1972, էջ 13-15:

իմաստը[2]: Ըստ Գ.Ջահուկյանի՝ բառը ծագել է թերևս բնիկ հնդեվրոպական *per-to-՝ *per- «անցկացնել, տանել» արմատից. հմմտ. ավ. pərətu «անցարան, անցուղի, անցատեղ, հուն», լատ. porta «դարպաս, մուտք»[3]:

Երդիկ բառանունը բարբառային հայերենում դրսևորված է բառակազմական և հնչյունական բազմաթիվ տարբերակներով: Բառի արմատական ***երդ*** ձևով հանդես է գալիս Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի, ինչպես նաև Ագուլիս-Մեղրիի, մասամբ նաև Արարատյան բարբառախմբի որոշ խոսվածքներում (Աստապատ, Ջուղա, Լիվասիան):

Երդ արմատական ձևը բարբառներում գործառում է ***հὸրթ*** (Արցախի Չափար, Հին Թաղլար, Խանաբաղ), ***հὸրդ*** (Կարճևան, Ագուլիս), ***հէրթ*** (Նախիջևանի Փարադաշտ, Բիստ), ***հիրթ*** (Նախիջևանի Փառակա), ***յէրթ*** (Փերիայի գավառի Միլակերտ, Ղարղուն), ***հըրթ*** (Գորիս) հնչատարբերակներով:

Բարբառային հայերենում տարածական ամենալայն ընդգրկումն ունի ***երդ*** բառային սկզբնաձևից ***-իկ*** ածանցի համադրությամբ ձևավորված ***երդիկ*** բառանունը: Այն բարբառներում դրսևորված է բազմազան հնչաձևերով ու բառաձևերով՝ ***էրտիկ*** (Սասուն), ***հ՛*** շնչեղ ձայներով

---

[2] **Հ.Աճառյան**, *Հայերէն արմատական բառարան* (այսուհետ՝ ՀԱԲ), հ. 2, Ե., էջ 44:

[3] **Գ.Ջահուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 44:

տարբերակ՝ ***հ՛էրտիկ*** (Մուշ, Կարս, Բասեն), երդիք բառի հոգնակի հայցական հոլովաձևով՝ ***հ՛էրտիս*** (Մուշ, Բիթլիս), ***էրթիս*** (Նախիջևան, Սալմաստի Փայաջուկ), ***հծրտծս*** (Շատախ), ***յէշտիք*** (Ջավախքի Կարծախ), ***արտէ՞գ*** (Քեսաբ) և այլն:

Ժամանակի ընթացքում փոփոխությունների է ենթարկվել նաև տան ընդհանուր կառուցվածքը. հայկական տունը աստիճանաբար ունեցել է նաև լուսամուտ, պատշգամբ, և, բնականաբար, բարբառային բառապաշարում պետք է արտահայտություն գտնեին նաև հիշյալ բառիմաստներին համարժեք բառանուններ:

Արդի գրական հայերենում «***լուսամուտ***» հասկացությունը դրսևորված է հիմնականում ***պատուհան*** և ***լուսամուտ*** բառանուններով: ՆՀԲ-ում վկայված է պատուհան բառի երկու իմաստ՝

1. Ծակ որմոյ տան առ ի կողմանէ կամ ի վերուստ ի պէտս անցից լուսոյ և հողմոյ, լուսամուտ, լուսանցոյց.

2. Պահարան, խորշ, ծակ ի մէջ որմոյ[4]:

Հ.Աճառյանը որպես ***պատուհան***-ի հնագույն ձև դիտարկում է ***պատուրհանը***: Գիտնականը, սակայն, հավաստի չի համարում ՆՀԲ-ի մեկնությունը (պարսկերեն «պատիուն, պատխէն, որպես թե հողմանցույց և յն որպես դռնակ» կամ այլ մեկնաբանությամբ հողմամուտ,

---

[4] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետ՝ ՆՀԲ), հ. 2, Ե. , 1981, էջ 621:

պատուհան) և կարծում է, որ ավելի հիմնավոր է Փ. Տեր-Մովսիսյանի ստուգաբանությունը, ըստ որի՝ ***պատուհան***-ը որպես թե հայերեն ***պատ*** և ***հանել*** բաղադրիչներից ձևավորված բառանուն է[5]:

Գ.Ջահուկյանը ևս ***պատուհան*** բառի հին ձևը համարում է ***պատուրհանը***՝ ծագումնաբանորեն առնչակից համարելով իրանական ***paturhānā*** (pati-frāna) բառին: Ըստ Լ.Հովհաննիսյանի՝ ***պատուհան*** բառի իրանական ծագման հավաստի փաստարկումներ կան մի շարք իրանագետների ուսումնասիրություններում: Ուշադրության է արժանի հատկապես Է. Բենվենիստի ստուգաբանությունը. «Միջին իրանական pātfrās-ի համաբանությամբ՝ հյ. պատուհան, տեսնում է միջ. իրանական *pātrfan<*pāti.pāna. *frāna, սնս. prāna «փչել» *patirfana կազմության մեջ տեսնելով «օդանցք, լուսամուտ» իմաստը (BSL, 1957, 63): Լ.Հովհաննիսյանին ավելի հավանական է թվում Բենվենիստի մեկնաբանությունը հատկապես այն պատճառով, որ *patirfana-ի համապատասխանությունը ակնհայտ է ***պատուհան***-ի ***պատրհան*** տարբերակը դիտարկելիս, որը ավելի հին ձև է և պահպանված է նաև արդի որոշ բարբառներում[6]:

---

5 **Հ.Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետ՝ ՀԱԲ), հ. 4, Ե., 1979, էջ 50:

6 **Լ. Հովհաննիսյան**, *Հայերենի իրանական փոխառությունները*, Ե., 1990, էջ 257:

Ուշագրավ է, որ իրանական ***պատրհան*** բառանունը՝ իր ***պատրհան*** և ***պատուհան*** բարբառային տարբերակներով, հայերենի բարբառներում գործառվել է հիմնականում որպես «***որմնախորշ***» հասկացության նշանակելի: Քանի որ գյուղական հին տները լուսամուտ չեն ունեցել, հնում այն, բնականաբար, այդ իմաստով չէր կարող կիրառվել: Ժամանակի ընթացքում աստիճանաբար ***պատրհան-***ի ***պատուհան*** տարբերակը բարբառներում սկսել է գործածվել նաև որպես ***լուսամուտ*** հասկացության բառանուն: Կարծում ենք՝ ***պատրհան*** բառը բառիմաստի ընդլայնմամբ ձեռք է բերել նաև ***լուսամուտ*** նշանակությունը՝ պայմանավորված ժողովրդական լեզվամտածողության առանձնահատկություններով. թերևս այստեղ **պատ** և **հանել** ժողովրդական ստուգաբանությունը ևս իր դերն է ունեցել:

Պատուհան բառանունը բարբառային հայերենում յուրօրինակ հնչատարբերակներով է դրսևորված: Օրինակ՝ ***բըդ՞հ՞ն*** տարբերակով արձանագրված է Տիգրանակերտի բարբառում[7], Սվեդիայի բարբառում՝ ***բ՞դիհում***[8], իսկ Ագուլիսի բարբառում բառը ներկայացված է ***պըտօ՛րհան***՝ հնչատարբերակով[9] և այլն:

Արևելյան որոշ՝ Նոյեմբերյանի Կոթի, Լոռու Հաղպատ, Տավուշի Չինչին գյուղերի խոսվածքներում ***երդիկ*** (որը նաև

---

[7] **Ա. Հանեյան**, *Տիգրանակերտի բարբառը*, Ե., 1978, էջ 195:

[8] **Տ. Անդրեասյան**, *Սվեդիայի բարբառը*, Ե., 1967, էջ 380:

[9] **Հ. Աճառյան**, *Քննութիւն Ագուլիսի բարբառի*, Ե.,1935, էջ 49:

լուսամուտ էր) հասկացության նշանակելի է դիտվել յուրահատուկ ***լիսածակ*** նկարագրական բառակաղապարը, իսկ Եղեսիայի Գարմունջ գյուղում ***լուսաձագ*** բառանվանը զուգահեռ գործածվել է ***լուսաբաղֆօնը,*** որը, ըստ բարբառը արձանագրողի, տան պատի վերնում է եղել: Ի դեպ, ***լուսաբաղֆօնը լույս*** և ***պատրհան*** բաղադրիչներից յուրօրինակ լեզվամտածողությամբ բաղարկված բառանուն է, այսինքն՝ այն «լույսի պատրհան (լույսի ծակ, անցք)» է:

«Լուսամուտ» հասկացության բառանուն է դիտարկվել նաև ***փանջարա***-ն, որը փոխառություն է պարսկերենից (pānĵ-āra): Բառանունը հիշատակված է դեռևս միջնադարյան քնարերգության մեջ (Աշխարս մե **փանջարա** է): Բարբառային հայերենում ***փանջարա*** բառանունը գործառվել է ոչ միայն ***պատրհան,*** այլև ***լուսամուտ*** նշանակությամբ: Արևելյան բարբառներում՝ Արարատյան, Թիֆլիսի, Խոյի, այն դրսևորված է ***փանջարա,*** իսկ արևմտյան բարբառներում՝ թուրքերենի ազդեցությամբ ***փէնջէրէ*** հնչաձևով: Հարկ է նշել, որ Ղարաբաղի բարբառում բառանունը «պատուհանի երկաթյա ցանց» նշանակությամբ է գործածվում[10]:

Բարբառային հայերենում առկա ***շըբակ*** բառանունը հանդես է գալիս իրար առնչակից բառիմաստային տարբեր դրսևորումներով: Մեր նախորդ հրապարակումներում,

---

[10] *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետ՝ *ՀԼԲԲ*), հ. Զ, Ե., 2010, էջ 346:

քննության առնելով «***որմնախորշ***» հասկացությունը, անդրադարձել ենք հիշյալ բառանվանը և այն դիտարկել ենք որպես «*սենյակում պատի մեջ թողած, երեսը բաց պահարան*» հասկացության նշանակելի[11]:

Արաբերենից փոխառյալ ***շըբակ*** բառանունը բացի «*պատի կույր պատուհան, ակնատ*» իմաստներից որոշ բարբառներում ու խոսվածքներում (Մուշ, Ալաշկերտ, Մոկս) գործառում է նաև «*լուսամուտ, լուսանցք*» նշանակությամբ (Որսը անում էր իր տան բոլորակ պատուհանից, որ ***շբաք*** էր կոչվում), իսկ Տիգրանակերտում հիշյալ բառանունը դրսևորված է արդեն «պատշգամբ» նշանակությամբ (Դէսնում էլօն հընդէ զաննուզ ***շըբակի*** դազ ընձի զընայէ)[12]:

Սահակ Ամատունին «Հայոց բառ ու բան»-ում արձանագրել է ***շըմաթ*** բառանունը՝ որպես «*լուսամուտ*» հասկացության նշանակելի (Ունիս բոլորակ… լուսածագ ***շմաթք*** բուն երկոտասան)[13]: Միջին հայերենի բառարանում ևս փաստված է ***շըմաթ***-ը, որը, ի դեպ, դրսևորված է իրար հետ զրեթե կապ չունեցող մի քանի իմաստով. նախ՝ «նուրբ, սպիտակ կտոր», որ գործածում են իբրև «ծածկոց քնելու ժամանակ, սավան», նաև «բարակ կրծկալ», ինչպես նաև խնդրո առարկա՝ ***«նեղ լուսամուտ, պատուհան (եկեղեցու***

[11] *Տե՛ս Ջահուկյանական ընթերցումներ*, Ե., 2008, էջ 88:

[12] **Վ.Պետոյան**, *Սասունի բարբառը*, էջ 149, *ՀԼԲԲ*, հ. Դ, Ե., 2007, էջ 217-218:

[13] **Ս. Ամատունի**, *Հայոց բառ ու բան*, Վաղարշապատ, 1912, էջ 517:

զմբեթի վրա)» նշանակություններով (Ցաջմէ և աhէկէ ***շմաթք***, որ hեզիկ hողմն գայր ի նա)[14]:

Հարկ է փաստել, որ Գ.Ջահուկյանը ***շմաթ***-ը՝ իբրև «*զմբեթի պատուհան*» հասկացության բառանուն, անհայտ ծագման բառ է համարում, իսկ «շոր, կտոր, որպես կրծկալ, գոգնոց» նշանակությամբ ***շմաթ***-ը, ըստ նրա, ծագումնաբանորեն առնչակից է պարսկերեն ***šāmād*** բառանվանը[15]: Այն վկայված է նաև Ս.Մալխասյանցի, Գնել Ճերեճյանի[16], Ա.Սուքիասյանի և այլոց բառարաններում, որտեղ հիշատակված է նաև նրա «*նեղ, բարակ լուսամուտ, զմբեթի պատուհան*» իմաստը:

Հ. Մուրադյանը Կաքավաբերդի բարբառում «*հնձանի, գոմի, մարագի լուսամուտ*» նշանակությամբ հիշատակել է ***տիրի՛ճակ*** բառանունը[17]: Ի դեպ, այս բառն արձանագրված է նաև Հ.Աճառյանի, Ս.Մալխասյանցի, Ա.Սուքիասյանի ***(դըրիճակ՝ ակնատ, պատծակ, մջնդուռ)***[18], Պ. Ճիզմեճյանի[19] բառարաններում:

---

[14] **Ռ. Ղազարյան, Հ.Ավետիսյան**, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 597:

[15] **Գ. Ջահուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 590:

[16] **Գ. Ճէրէճեան, Փ. Տօնիկեան և Ա. Տէր Խաչատուրեան,** *Հայոց լեզուի նոր բառարան*, Պեյրութ, 1992, հ.2, էջ 463:

[17] **Հ. Մուրադյան**, *Կաքավաբերդի բարբառը*, Ե., 1967, էջ 206:

[18] **Ա. Սուքիասյան**, *Հոմանիշների բացատրական բառարան*, Ե., 2009, էջ 256:

Ըստ Մալխասյանցի՝ ***դըրիճակ***-ը փոխառություն է պարսկերենից. ***derīče***, որ նշանակել է «*դռնակ, պատուհան*», և հայերենում այն ունի «*երկու կից տների ընդհանուր պատի մեջ բացված փոքրիկ դռնակ կամ պատուհան, որի միջով իրար հետ խոսակցում են կամ իրեր են տալիս առնում*» նշանակությունը: Օրինակ՝ ***Դրիճակի*** միջով երկու սիրահարները ամեն երեկո քչփչում էին: Վտանգի ժամանակ ***դրիճակները*** նաև ծառայում էին իբրև միջոց օգնություն կանչելու, զգուշացնելու համար[20]:

Հ.Աճառյանը, ***դրիճակ*** բառանվան բացատրությունը տալուց բացի, փաստում է նաև, որ այն գործառում է Երևանի խոսվածքում ***դըրիջակ*** հնչաձևով, իսկ Ղարաբաղում՝ ***տըրիճակ***[21]:

Որպես «*լուսամուտ*» հասկացության նշանակելի՝ բարբառային հայերենի բառապաշարում գործառում է ռուսերենից փոխառյալ ***ակուշկա*** (*окошко*) բառանունը (նաև՝ ***ագուշկա, ակօշկա*** հնչաձևերով): Օրինակ՝Արարատյան բարբառի մի խոսվածքում՝ ***Ագուշկէն*** փագի', ցուրդ °:

Խնդրո առարկա **«պատշգամբ»** հասկացությունը բարբառային հայերենում սահմանափակ բառանուններով է դրսևորված. հիմնականում գործածվել են պարսկերենից

---

19 **Պ. Ճիզմէճեան**, *Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան*, Հալեպ, 1957, էջ 945:

20 **Ս. Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան*, Ե., 2010, էջ 545:

21 **Հ. Աճառյան**, *Հայերէն գաւառական բառարան*, Մոսկուա, 1913, էջ 289:

փոխառյալ ***շիշ՞բ՞նդ*** և ավելի ուշ հավանաբար ռուսերենի միջնորդավորմամբ բարբառներին անցած ***բալկօն*** բառանունները:

Շուշաբանդ հնչաձևով բառանունը վկայված է Արարատյան բարբառի խոսվածքներում, Մանազկերտում, Մուշում (Բաղեշ), ***շիշաբանդ***-ը՝ Ղարաբաղի, Կարնո (Ջավախք), Շամախիի, Վանի խոսվածքներում, ***շյուշաբանդ***-ը՝ Մոկսում, ***շուշաբանդլի***-ն՝ Ղարաբաղում: Օրինակ՝ Հարը-մարը …եշըմ են տըսենում ախճիգյը տեղերը հըվաքած, ինքյն էլ սարքված, տըռանը ***շուշաբանդավը*** վերավ ընգյած, թըմաշա ընելիս:

Հարկ է փաստել, որ ***շուշաբանդ*** բառանունը բարբառներում ունի նաև այլ իմաստներ՝ 1. «ապակեպատ լուսամուտ» (Մոկս. օրինակ՝ ***Շյուշաբանդիր*** բիրադի կուտրած էնու ձէնից), 2. «ապակեպատ, ապակիով պատած» (Մի ***շուշաբանս*** օթախ սարքենք, դնենք մեջը, որ գալողը թամաշ անի: Տարան ***շուշաբանդ*** բաղնիքը, դրին օսկե վաննայի մեջ)[22]:

«Պատշգամբ» հասկացության ուշագրավ բառաձևեր են վկայված Ստ. Մալխասեանցի բացատրական և Հայոց լեզվի բարբառային բառարաններում: Վանի, Մուշի խոսվածքներում որպես տան «պատշգամբ», որի երեք կողմը պատ է, իսկ առաջը բաց է և ճաղերով պատած, փաստված է

[22] *ՀԼԲԲ*, հ. Դ, Ե., 2007, էջ 303:

ժողովրդական յուրահատուկ լեզվամտածողությամբ ձևավորված ***երեսբաց*** բառանունը, այսինքն՝ բաց երեսով շինություն (Տան մը այն մասին վանեցիք ***երեսբաց*** կը կոչեն, որ ***պատշգամբն*** է (Արվ.))[23]: Ի դեպ, Հ. Աճառյանը ևս Վանի բարբառի բարդ բառերը քննելիս արձանագրել է հիշյալ բառանունը ***էօրէօսպաց*** հնչաձևով՝ որպես ***balcon*** հասկացության բառանուն[24]:

Որպես «*արեգունի տեղ՝ սրահակ շինութեան մեջ*, կամ *լուսացույց*, *լուսամուտ*» հասկացության նշանակելի Ս.Մալխասյանցը և Ա.Սուքիասյանը արձանագրել են ***արեգակնակ*** բառանունը[25]: ***Արեգակնակ***-ը վկայված է դեռևս հին մատենագրության մեջ (Մ. Խորենացի), ինչպես նաև հիշատակված է ՆՀԲ-ում («կա՛մ է նմանութեամբ որպէս փոքրիկ արեգակն, լուսաւոր և պայծառ վայր. և կամ տեղի արևահայեաց ՚ի բարձունս ապարանից»[26]) և Հ.Աճառյանի ՀԱԲ-ում՝ «պատշգամ»[27] նշանակությամբ: Ս. Գաբամաճյանի՝ 1910 թվին Պոլսում տպագրված բառարանում ևս արձանագրված է ***արեգակնակ***-ը, որը «տանիքի կամ բարձր

---

[23] **Ստ. Մալխասեանց**, *Հայոց լեզվի բացատրական բառարան,* հ. 1, Ե. 2010, էջ 580, ՀԼԲԲ, հ. Ա, Ե., 2001, էջ 384:

[24] **Հ. Աճառյան**, *Քննություն Վանի բարբառի*, Ե., 1953, էջ 208:

[25] **Ստ. Մալխասեանց,** *Հայոց լեզվի բացատրական բառարան*, հ. 1, Ե. 2010, էջ 260, **Ա.Սուքիասյան**, *Հայոց լեզվի հոմանիշների բառարան*, Ե., 1967, էջ 540:

[26] *ՆՀԲ*, Վենետիկ, 1836, հ. 1, էջ 351:

[27] **Հ.Աճառյան**, *ՀԱԲ*, հ. 1, Ե., 1926, էջ 310:

տեղի վրա հովանոց» նշանակությամբ է հիշատակված[28]: Բեյրութում տպագրված «Հայոց լեզուի նոր բառարանում» հիշյալ բառանունը փաստված է ***արեգակնակ***, ինչպես նաև ***արեգնակ*** տարբերակով՝ «պատշգամ, արեւկայ, լուսամուտ» նշանակությամբ[29]: ***Արեգակնակ***-ը, ըստ երևույթին, ***արեգակի ակ*** (աչք) բառակապակցությունից բաղադրված ուշագրավ բառանուն է, որը բարբառային հայերենում կարծես թե գործածական չի եղել:

Անդրադառնալով «***պատշգամբ»*** հասկացության՝ ռուսերենից փոխառյալ ***բալկոն*** բառանվանը՝ կարող ենք արձանագրել, որ Արևելյան Հայաստանի տարածքի գրեթե բոլոր բարբառներում և խոսվածքներում այն համընդհանուր կիրառություն ունի:

Ս.Վարդանյանը կրոնափոխ համշենահայերի բարբառում հիշատակել է «*պատշգամբ*» հասկացության ***փէքա*** բառանունը[30], որի ծագումը մեզ անհայտ է:

Բարբառային հայերենում որպես «*պատշգամբ*» հասկացության նշանակելի գործառում է նաև ***այվան*** բառանունը: Մեր նախորդ հրապարակումներում «թոնրատուն» հասկացության բառանունները քննելիս մենք

---

[28] **Ս.Գաբամաճեան**, *Նոր բառգիրք հարերէն լեզուի*, Կ.Պոլիս, 1910, էջ 198:
[29] **Գ. Ճէրէճեան, Փ. Տօնիկեան և Ա. Տէր Խաչատուրեան**, *Հայոց լեզուի նոր բառարան*, Պեյրութ, 1992, հ.1, էջ 217:
[30] **Ս.Վարդանյան**, *Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը*, Ե., 2009, էջ 324:

անդրադարձել ենք պարսկերենից փոխառյալ ***այվան*** բառանվանը[31]: Հարկ է փաստել, որ ***այվան***-ը հնում պարսկերենում «պալատ» է նշանակել, այնուհետև ձեռք է բերել «բաց պատշգամբ» իմաստը:

Հայերենի բարբառներում ***այվան***-ը հանդես է գալիս և՛ որպես «թոնրատուն» հասկացության նշանակելի (Մակու՝ *այվան*, Խոյ՝ *էյվան*), և' «վերնատուն, վերնահարկ, ինչպես նաև հյուրասենյակ» (Կարին), և՛ «ունեցվածք, տուն-տեղ» (Մուշ) և՛, իհարկե, խնդրո առարկա «պատշգամբ» նշանակությամբ (Մենք վաղուց նրա համար տեղ ենք պատրաստել ***այվանի*** կտերը (ՊՊ): Հավելենք նաև, որ հիշյալ բառանունը բարբառներում գործածվում է նաև փոխաբերական իմաստով՝ դրսևորվելով «գլուխ, խելք» նշանակությամբ (***Այվանումը*** մի զատ էլ չկա)[32]:

Բառակազմական յուրահատուկ դրսևորում է Արաբկիրի խոսվածքում արձանագրված ***դիվան-խան***-ը. այն բնութագրել է *միջանցքից* դեպի իր շարունակությունը կազմող *պատշգամբի* հատվածը, որին հաջորդում էին տան մնացած երեք բաժինները՝ *կէնալտունը, ննջարանը՝ յաթաղօղասը և խոհանոցը՝ աշխանէն:*

Այսպիսով՝ քննելով հայերենի բարբառներում առկա ***լուսամուտ*** և ***պատշգամբ*** հասկացությունների բառանուն-

---

[31] *Ջահուկյանական ընթերցումներ*, Ե., 2017, էջ 148:

[32] *ՀԼԲԲ*, հ. Ա, Ե., 2001, էջ 54, **Հ. Մկրտչյան**, *Կարինի բարբառը*, Ե., 1952, էջ 121:

ները՝ կարող ենք ասել, որ ժամանակի ընթացքում տան ընդհանուր կառուցվածքը փոփոխության ենթարկ-վելով, անհրաժեշտաբար ստեղծվել են ***լուսամուտ*** և ***պատշգամբ*** հասկացություններին համապատասխանող բառեր:

Քանի որ հին տներում լույսը ներթափանցում էր երդիկից, այդ պատճառով որպես «*լուսամուտ*» հասկացության նշանակելի ենք դիտարկել նաև ***երդիկ*** բառանունը: Բառիմաստային զուգորդումներով պայմանա-վորված՝ պարսկերենից փոխառյալ ***պատրհան*** բառի ***պատուհան*** տարբերակը, որ սկզբնապես «սենյակում պատի մեջ թողած, երեսը բաց պահարան» նշանակությունն է ունեցել, ժամանակի ընթացքում ձեռք է բերել «լուսամուտ» իմաստը: ***«Պատուհան»*** հասկացության ուշագրավ դրսևորումներ են նաև ***լուսաձագ***, ***լիսածակ***, ***լուսապաղֆօն*** բառանունները: Բարբառային հայերենում առկա են նաև «լուսամուտ» հասկացության փոխառյալ ***փանջարա, շըբաք, շըմաթ***, ***ակուշկա*** բառերը:

«Պատշգամբ» հասկացությունը բարբառային հայերենում դրսևորված է հիմնականում փոխառյալ ***շուշաբանդ, այվան, բալկոն, փէքա*** բառերով:

Ուշագրավ է Վանի բարբառի յուրահատուկ լեզվա-մտածողությամբ ձևավորված ***երեսբաց*** (***էօրէօսպաց)*** բառանունը՝ որպես «***պատշգամբ***» հասկացության նշանակելի:

Khachatryan Hasmik - Words Expressing the Meanings of “Window” and “Balcony” in the Dialects of Armenian. Over time, the general structure of the Armenian house changed: it gradually acquired windows and balconies, and consequently, the dialects of the Armenian language acquired respective nouns to express these meanings.

In the dialects of Armenian, the concept of “window” is expressed by the words ***երդիկ [yerdik], լիսածակ [lisatsak]*** and ***պատուհան [patuhan***], of which ***երդիկ [yerdik]*** and ***լիսածակ [lisatsak]*** are native Armenian words, and ***պատուհան [patuhan]*** is related by origin to the Persian word ***paturhānā (պատուրհան)*** and has been used mostly as a designation of the concept “niche.” Over time, the ***պատուհան [patuhan]*** version of the word ***պատրհան [patrhan]*** began to be used in the dialects to denote the concept of ***լուսամուտ [lusamut]*** (window). In the dialects, there are also the borrowed words ***փանջարա [panjara], շըբակ [shybak],*** and ***շըմաթ [shymat]*** denoting the concept of ***լուսամուտ [lusamut] (window)***.

The concept of ***պատշգամբ [patyshgamb]*** (balcony) is expressed by the mostly borrowed words ***շուշաբանդ [shushaband], այվան [ayvan], բալկոն [balkon]***, and ***փեքա [peqa]*** in the dielects of Armenian.

The word ***երեսբաց [yeresbast] (էօրէօսպաց [eoreospats])*** is noteworthy in the Van dialect: it has been formed due to unique

linguistic thinking, as a designator of the concept ***պատշգամբ [patyshgamb]*** (balcony).

Хачатрян Асмик - Понятия «Окно и балкон» в диалектном армянском языке. С течением времени общая структура армянского дома подверглась измене-нию. Постепенно в армянском доме появились *окно*, *балкон*, и естественно, что в диалектной лексике должны были использоваться слова, соответствующие указанным значениям.

В диалектном армянском лексема ***լուսամուտ*** *(лусаму́т – окно; /букв.: вход для света/)* происходит от существительных ***երդիկ, լիսածակ, պատուհան*** *(ерди□к, лисаца́к, патуհа́н),* из которых *ерди□к и лисаца́к* являются исконно армянскими словами, а *патуհа́н* (*окно*) изначально связано с иранским словом ***պատրհան*** и ***պատուհան*** *(patərhānā)* и употреблялось в значении «отверстие в стене». Со временем ***պատրհան*** и ***պատուհան*** стали использоваться в диалектах в значении ***լուսամուտ*** *(лусаму́т – окно).* В диалектах есть также заимствованные лексемы ***փանջարա, շըբակ, շըմաթ*** *(панджара́, шəба́к, шəма́т).*

Понятие ***պատշգամբ*** *(патəшга́мб – балкон)* в диалектном армянском языке в основном выражается заимствованными словами ***շուշաբանդ, այվան, բալկոն, փէքա*** *(шушаба́нд, айва́н, балкон, пэка́).*

Примечательно наличие в диалекте Вана слова ***երեսբաց*** (***էօրէօսպաց)*** *(ересба́ц, эореспа́ц – открытое лицо)*, имеющего значение «балкон» и являющегося продуктом своеобразного лингвистического осмысления.

Ներսիսյան Վարսիկ
(ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՁԵՎԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕՁՆԵՑՈՒ ԵՐԿԵՐՈՒՄ

Հովհաննես Իմաստասեր Օձնեցու երկերի լեզուն սերտորեն արտացոլում է ինչպես դրանցում արծարծված թեմատիկան և գաղափարաբանությունը, այնպես էլ հայերենի դասական և ետդասական շրջանների լեզվական իրողությունները: Անշուշտ, Օձնեցու լեզուն ամենից առաջ առանձնանում է բառապաշարի հարստությամբ, հեղինակային նորակազմությունների առատությամբ, բառերի նորիմաստային բազմաթիվ կիրառություններով, կրոնաեկեղեցական և իմաստասիրական տերմինների գործածությամբ և այլն, որոնց անդրադարձ կատարվել է տարբեր աշխատություններում[1]: Սակայն ուշագրավ դրսևորումներ կան նաև քերականական համակարգում, որոնց ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն Օձնեցու

---

[1]Հմմտ. **Հովհաննես Օձնեցի**, *Երկեր*, գրաբարից փոխադրումը, առաջաբանը և ծանոթագրությունները **Վ. Համբարձումյանի**, Ե., 1999: *Մատենագիրք Հայոց*, Զ , Ը դար, Յաւելուած, Անթիլիաս-Լիբանան, 2007 (այսուհետև՝ ՄՀ): **Վ.Ներսիսյան**, *Հովհաննես Օձնեցու երկերի լեզուն*, Ե., 2012:

անհատական լեզվի և ոճի նկարագրության, այլ նաև ժամանակաշրջանի լեզվական նկարագիրը ամբողջացնելու առումով:

Խոնարհման համակարգն իր հիմնական գծերով արտացոլում է դասական գրաբարի իրողությունները և առանձնապես աչքի չի ընկնում շեղումներով, որոնք կարող են բնութագրվել որպես առանձնահատկություն ետդասական շրջանի համար: Օձնեցին զերծ է մնացել հունաբան դպրոցի որոշ արհեստական նորամուծություններից, որոնց մասին նշվում է տարբեր քերականական աշխատություններում[2], և հարազատ է մնացել դասական հայերենի նորմերին: Հունաբան հայերենի դրսևորումը նրա երկերում թերևս զգալի է բառակազմական հարուստ միջոցների գործածությամբ նոր բառեր կերտելու առումով:

Սակայն, այնուամենայնիվ, Օձնեցու երկերում ևս բայի խոնարհումն ունի որոշ առանձնահատուկ դրսևորումներ, որոնց ուսումնասիրությունը կարող է ամբողջացնել 7-8-րդ դարերի հայերենի լեզվական նկարագիրը:

Սույն աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել բայի եղանակաժամանակային ձևերի գործածությունը Հովհաննես Օձնեցու երկերում, բացահայտել դրանց աղերսներն ու

---

[2]Տե՛ս **Հր. Աճառյան**, *Հայոց լեզվի պատմություն*, 2-րդ հ., էջ 149-156: **Ս. Ղ. Ղազարյան**, *Հայոց լեզվի համառոտ պատմություն*, Ե., 2006, էջ 183-190:

առնչությունները մի կողմից՝ դասական հայերենի, մյուս կողմից՝ ետդասական հայերենի լեզվական իրողություններին, ինչպես նաև ցույց տալ դրանց գործածության հաճախականությունը:

Թեև 7-10-րդ դդ. լեզվավիճակի ուսումնասիրության առումով առավել կարևորվում են **առաջին** և **երկրորդ ապառնի** ժամանակաձևերի դրսևորումները, սակայն մյուս ժամանակաձևերում ևս ուշագրավ դրսևորումներ կան, ուստի դրանք ևս կներկայացնենք:

Սահմանական եղանակի ներկա ժամանակաձևի գործածությունները բազմաթիվ են՝ կրավորաձև և ներգործաձև, դրական և ժխտական խոնարհումներով, պարզ և հարադիր կազմություններով: Օր՝ ** աւանդին** (Ատենաբանութիւն, 5)[3], **ասէ** (Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից՝ Յովհաննու Վերծանաւղի, 108)[4], **բառնայ** (ՆՊ, 111), **բարբառիմ** (Ատ., 9), **գայ հասնէ** (ՄՀ, 137), **գտանի** (Ատ., 6), **եկամուտ լինի** (ՆՊ, 120), **զեկուցանէ** (Ատ., 11), **ընծայեմք** (Ատ., 5), **լուծանեն** (Ատ., 4), ոչ **ծնանի,** ոչ **կերակրէ**(Ատ., 8), **հրամայէ** (Ատ., 10), **հրաշագործի** (Ատ., 8),

---

[3]**Յովհաննու Օձնեցւոյ** *Մատենագրութիւնք*, «Ատենաբանութիւն», Վենետիկ, 1833, էջ 1-33 (այսուհետև՝ Ատ.):

[4]**Ա. Յակոբեան**, *Յովհան Օձնեցու Նորայայտ տօնացուցային երկը՝ «Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից՝ Յովհաննու Վերծանաւղի»* (այսուհետև՝ ՆՊ), «Հանդէս ամսօրեայ», թիվ 1-12, Վիեննա-Երևան, 2006:

ողջակիզի (ՄՀ, 137), **տաւնակից եւ պարակից լինին** (ՄՀ, 134), **փափաքէ** (ՄՀ, 137), **ցուցանէ** (Ատ., 5), ո՛չ **ունի** (ՆՊ, 116), ոչ **ունիմ** (Ատ., 8) և այլն: Ինչպես տեսնում ենք, դասական հայերենի համեմատությամբ տարբերություններ չեն դրսևորվել:

Անցյալ անկատար ժամանակաձևի դրսևորման առումով դարձյալ շեղումներ չկան, բացառությամբ ***–իւր*** վերջավորության հանդես գալուց: Ուշագրավ է սահմանական եղանակի կրավորաձև անկատարի 3-րդ դեմքում *–իւր* վերջավորության հանդես գալը, որը, սկզբնավորվելով հունաբան հայերենի շրջանում, մեծ տարածում է ստացել հետագայում՝ հատկապես լատինաբան հայերենի շրջանում[5]: Այս վերջավորությամբ անցյալ անկատատարի գործածությունը հատուկ է նաև 7-րդ դ. պատմիչ Սեբեոսի «Պատմությանը»[6], որտեղ ևս, ինչպես Օձնեցու երկերում,բացի ***ե*** խոնարհման բայերից, այն հանդես է գալիս նաև ***ի*** խոնարհման բայերի կազմում, թեև քերականական աշխատություններում այն ներկայացվում է որպես ***ե*** խոնարհման բայերին հատուկ երևույթ[7]: Ներկայացնենք օրինակներ տարբեր երկերից՝**ազդ առնէր**

---

[5]Տե՛ս **Վ.Համբարձումյան**, *Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ- ԺԹ դդ.*, Ե., 1990, էջ 299:

[6]Տե՛ս **Գ. Բաղդիշյան**, *Սեբեոսի լեզուն և ոճը.*_ Հայոց լեզվի պատմության հարցեր, պր. 1, Ե., ԳԱ հրատ., 1981, էջ 46:

[7]Տե՛ս **Ա. Աբրահամյան**, *Գրաբարի ձեռնարկ*, Ե., 1976, էջ 118:

(ՆՊ, 109), **ածէր** (ՆՊ, 107), **ամբաստանէր**(ՆՊ, 104), **բաղձայր** (ՄՀ,136), **բերէի** (Ատ., 9), **գրգռէր** (ՆՊ, 107), **գրէի** (ՆՊ, 108), **դատիւր** (ԸԵ, 93)[8], **դիզանայր** (ՄՀ, 137), **դիտէր,** (ՄՀ, 136), **եղանէին**(ՅԿԵ, 82), **լնոյր** (ՆՊ, 104), **խորհէի**(Ատ., 2), **խորհիւր** (Յաղագս կարգաց եկեղեցւոյ, 82)[9], **հարցանէր** (ԸԵ, 86), **ոռոգանէր** (Ատ., 2)**, ուռճանայր, պատրաստէր** (Ատ., 2),**վայելչանայր, վերածնէր, վկայէին** (ՆՊ, 111), **ստիպէր** (Ատ., 6), **օծանէին** (Ատ., 8) և այլն: Ինչպես տեսնում ենք, նշվածներից ***ի*** խոնարհման երկու բայ (**խորհիւր, դատիւր)** ստացել են ***–իւր*** վերջավորություն:

Ամփոփելով ներկայի հիմքից կազմվող այս երկու ժամանակաձևերի քննությունը՝ պետք է նկատել, որ դրանցում**–ան-** բայածանցով բազմաթիվ գործածություններ կան, ինչպես՝ **գտանի** (Ատ., 6), **զեկուցանէ** (Ատ., 11), **լուծանեն**(Ատ., 4)[10], **ոռոգանէր**, (Ատ., 2), **օծանէին** (Ատ., 8) և այլն: Մինչդեռ Ս. Ղազարյանը, խոսելով 7-10-րդ դդ. բայական համակարգում տեղի ունեցած փոփոխությունների մասին՝ գրում է. «Մի շարք բայերի զուգահեռ ձևերից սկսել են

---

[8]**Յովհան Օձնեցի**, *Մատենագրութիւնք*, 2-րդ տպ., «Ընդդէմ երեւութականաց» (այսուհետև՝ ԸԵ), Վենետիկ, 1953, էջ 61-97:

[9]**Յովհաննու Օձնեցւոյ Մատենագրութիւնք**, *«Յաղագս կարգաց եկեղեցւոյ »*, Վենետիկ, 1833, էջ 81-93 (այսուհետև՝ ՅԿԵ):

[10]Այս բայի ***լուծանել*** անորոշը գործածվել է նաև «Սակս ժողովոց որ եղեն ի Հայք»-ում (էջ 490), ***տեսանել*** –ը՝ «Ընդդէմ Պաւղիկեանց»-ում (Յովհաննու Օձնեցւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ , 35):

գործածվել նրանց ածանցազուրկ ձևերը, ինչպես՝ յատել (փոխ. յատանել), ներկել (փոխ. ներկանել), տարածել (փոխ. տարածանել) և այլն»[11]: Այս առումով ևս, ինչպես տեսնում ենք, Օձնեցին ավանդապահ է և շարունակում է գործածել **–*ան-*** ածանցով ձևերը:

Անցյալ կատարյալ ժամանակաձևում շեղումներ չեն նկատվում: Օր.՝ **այլայլեցին** (ՆՏԵ, 107), **ոչ արածեցին** (Ատ., 11), **աւանդեցան** (Ատ., 5), **դէպ եղեւ** (ՄՀ,134), **դիպեցայ** (Ատ., 2), **եկն** (ՆՊ, 109), **եկն եհաս** (ՆՊ, 112), **եհաս, եղեն** (Ատ., 6), **զարկեցաք** (Ատ., 3), **թլփատեցաւ** (ՆՊ, 112), **թուեցաւ** (Ատ., 5), ոչ **խաբեցար** (ՄՀ, 139), ոչ **կարացին** (ԸԵ, 81), **կարգեաց** (ՆՊ, 108), **հոլանեցայ** (ԸՊ, 37), **յայտ արարին** (ՆՊ, 118), **յանդգնեցան** (ԸՊ, 139) ոչ **յարմարէցին** (ՆՊ, 117), **տարածեցաւ, ուսոյց,** (ՄՀ, 136), **չոգան դօղեցին** (ԸՊ, 39), **սովորեցին** (ԸՊ, 33),**տեսին**(ՆՊ, 108),**փոփոխեցին** (ՆՊ, 107)**, սահմանեցին** (Ատ., 23) և այլն:

Հայտնի է, որ գրաբարում ստորադասական եղանակն ուներ առաջին և երկրորդ ապառնի ժամանակաձևեր, որոնցից առաջինը կազմվում էր ներկայի հիմքից, իսկ երկրորդը՝ անցյալի հիմքից: Լեզվի հետագա զարգացման ընթացքում աստիճանաբար գործածությունից դուրս է գալիս նախ առաջին ապառնին, ապա՝ երկրորդը: Օձնեցու երկերում երկու ժամանակաձևերն էլ գործածական են, թեև

---

[11]**Ս. Ղազարյան**, *Հայոց լեզվի համառոտ պատմություն*, Եր., 2006, էջ 193:

առաջինը գործածության հաճախականությամբ զիջում է երկրորդին. առաջին ապառնին տարբեր երկերում ավելի հաճախ հանդես է գալիս Աստվածաշնչից արված մեջբերումներում: Այնուամենայնիվ, դրանք գործածական են նաև Օձնեցու հեղինակային խոսքում: Օրինակներ՝ **ասիցէ** (Ատ., 6), **բաւական լիցի** (Ատ., 23), **գայցէ** (Ատ., 16), **գոզցես** (Ատ., 18), **գործիցէ** (Ատ., 3), **ծանիցես** (Թ., 133), **հանգուցանիցէ** (Ատ., 17), **հրաժարիցէ** (Ատ., 15), **վայելիցեմք** (Ատ., 7) և այլն:

Երկրորդ ապառնու գործածությունները բազմաթիվ են տարբեր երկերում, ինչպես՝ **ապրեցուսցես**(Ատ., 21), **դադարեսցին**(Ատ., 4), **դարձցուք**(Ատ., 3),**դիցեն** (Ատ., 27), **եղիջիք** (Ատ., 4), **զուարճասցի**(Ատ., 11), ոչ **թողցէ** (ՄՀ, 139),**ի բաց դիցէ** (Ատ., 13), **խաթարեսցես** (ՄՀ, 133), **խնդրեցից (**Ատ., 13), **ծագեսցէ** (Ատ., 14), **ծաղկեցուսցէ** (ՄՀ,137)**,կամեսցի** (Ատ., 3), **հակառակեսցի** (Ատ.Կ., 26), **հասցէ**(Ատ., 9), ոչ **հասցէ** (ԸԵ, 76), **յանդգնեսցի** (Ատ., 5), **յանձնեսցէ** (Ատ., 17), **յարդարեսցին** (Ատ., 4), **ներհորդեսցի** (Ատ., 11), **նսեմասցի** (ՄՀ,135), **շփոթեսցես** (ՄՀ, 133), **պատմեսցէ** (ՄՀ,134), **պատշաճեսցի** (Ատ., 9), **պսակեսցեն** (Ատ., 10),**ջարդեցայք** (ՄՀ,137), **վայելեսցեն** (Ատ., 19), **տարածեսցէ** (Ատ., 11), **տարակուսեսցի** (Ատ., 5), **տեսցուք** (Ատ., 7) և այլն:

Համեմատելու համար նշված ժամանակաձևերի բաշխումը ուսումնասիրվող երկերում՝ ներկայացնենք դրանց դրսևորումները երկու երկում միայն:

Այսպես՝ «**Ընդդէմ երեւութականաց**» ճառում գործածվել են առաջին ապառնու հետևյալ ձևերը՝ **ածիցեն** (62)**, ասիցես** (70), **(**ոչ)**ասիցէք** (63), **եղանիցիք** (63), **երթիցէ** (79, 75, 82), **թուիցիս** (66), **թուիցին** (68), **իցեն** (84, 87,87, 92), **իցէ** (94), ոչ **ծանիցի** (74), **կամիցիս** (77), **կայցէ** (61, 93, 94), **մարտնչիցի** (72), **յենուցուս** (68), **նայիցի** (70), **տայցեմք** (62), **քաւ լիցի** (73), **քննիցեն** (87)։ Ինչպես տեսնում ենք, այս երկում ընդամենը 29 գործածություն կա (16 բայ)։

Մինչդեռ նույն երկում երկրորդ ապառնին ունի**51**կիրառություն՝**39 բայի** համար՝ **ածցիս**(70), **ակնարկեսցին** (79), **առաջնորդեսցես** (77), **ասացից** (61), **ասասցես** (62, 77), **ասասցէ** (94),**ասասցի** (74), **ատեսցուք** (61), **արասցես** (77), **արասցէ** (92,94), **գայթակղեսցիս** (89), **գիտասջիք** (63), **գիտասցեն** (96), **գիտասցէ** (93), **գոգցես** (92), **գործեսցէ** (90), **դարձուսցէ** (95), **եղիցի** (79), **եղիցիս** (63), **թիւրեսցես** (76), **ժողովեսցէ** (97), **իմասցուք** (72), **խոստովանեսցից** (74), **կամակորեսցուք** (65), **կարասցես** (71, 76, 80), **կարծեսցի** (84), **կարկեսցէ** (88),**կենդանասցին** (75),**կոչեսցէ** (92), **հակամիտեսցի** (84), **համբարձցիս** (71), **հանդիպեսցի** (84), **հասցէ** (74, 78), **հարկեսցիս** (80), **հաւանեցուսցեն** (71), **հաւաստեսցես** (75), **հաւատասցես** (75), **հետնեսցի** (84), **հնձեսցէ** (84), **մաքառեսցուք** (74), **յայտարասցէ** (88), **նշանակեսցի** (70, 79), **պատկանեսցի** (80), **տացես** (66), **ուսուսցէ** (95)։

«Սակս ժողովոց որ եղեն ի Հայք»[12] երկում առաջին ապառնիով ընդամենը երեք բայ է հանդես եկել՝ 5 գործածություններով՝**գայցեն** (483), **եղիցի** (493), **իցէ** (490, 491, 491)։ Նշված ժամանակաձևով մնացած ձևերը գործածված են միայն Աստվածաշնչից կատարված մեջբերումներում։

Նույն երկում բազմաթիվ (44 գործածություն, 35 բայ)դրսևորումներ է ստացելերկրորդ ապառնին՝**ածցուք** (485), **արասցէ**(492), **բանաստեղծեսցես** (492), **զրեսցուք** (484), **դիցուք**(483), **եկայք ցնծասցուք** (489), **եղիցի** (484, 490), **եղիցուք** (483), **ընկալցիս** (493), **ընկեսցուք** (483), **իշխեսցէ** (484), **լիցուք** (484), **խաբեսցեն** (474), **խզեսցուք** (484), **խոտորեսցին** (483), **խոտորեցուսցեն** (483), **խօսեսցուք** (485), **ծանուսցես** (493), **կայցէ**(492), **կատարեսցէ** (484), **կարգեսցուք** (483, 485), **կործանեսցի** (484, 485), **կործանեսցին** (485), **կորուսցուք** (484), **կրեսցէ** (484), **հաղորդիցին** (486), **հնարեսցին** (485), **հնարեսցուք** (484, 485), **մատենագրեսցես** (493), **մերժեսցին** (474), **մերձեսցին** (486), **մուծցի** (490), **յօրինեսցուք** (484), **որոշեսցուք** (484), **սեպհականեսցի** (485), **ուրախասցուք** (489), **փակեսցի** (490), **քակեսցուք** (483)։ Ակնհայտ է երկրորդի գերակշիռ գործածությունը առաջինի համեմատությամբ։

Ինչպես նշում է Ս. Ղազարյանը, 7-10-րդ դդ. որոշ բայերի հրամայականը փոխվել է. օր.՝ **հասի՛ր (փոխ. հա՛ս),**

---

[12]**Յովհաննու Իմաստասիրի Հայոց կաթողիկոսի** *Սակս ժողովոց որ եղեն ի Հայք* (այսուհետև՝ ՍԺ), «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 473-493։

դարձի՛ր, դարձա՛յք (փոխ. դարձարուք), խափանէ՛ (փոխ. խափանեա՛), գրէ՛ (փոխ. գրեա՛), տարէ՛ք (փոխ. տարա՛յք) և այլն: Կամ մի քանի զուգահեռ ձևերից մեկն է գործածական, ինչպես՝ **իմանալ** բայի միայն **իմացի՛ր** ձևը և այլն[13]: Ներկայացնենք հրամայական եղանակի դրսևորում-ները Օձնեցու երկերում:

Հայտնի է, որ **արգելական հրամայականը** կազմվում է ներկայի հիմքից, որում «Ե խոնարհման բայերն ունեն և՛ ներգործաձև(-եր, -էք), և՛ կրավորաձև (-իր, -իք) վերջավորություններ. ներգործաձև խոնարհվում են այդ խոնարհման բոլոր բայերը, կրավորաձև կարող են խոնարհվել միայն ներգործական սեռի բայերը՝ դառնալով կրավորական սեռի: Ի խոնարհման բայերն ունեն միայն կրավորաձև վերջավորություններ (-իր, -իք), Ա և ՈՒ խոնարհումների բայերը՝ ընդհանուր վերջավորություններ (-ար, -այք, -ուր, -ուք)[14]: Օձնեցու երկերում **մի՛ բաղդատեր** (ԸԵ, 74) և նման այլ գործածությունների կողքին գործածական են նաև **մի՛ իշխեսցէ** (Ատ., 24), **մի՛ լեալ,** փոխ.՝մի՛ լինիր (ԸԵ, 66), **մի՛համարիցիս** (ԸԵ, 91), **մի՛ հայեսցին** (ԸԵ, 96), **մի՛ հրաժարեսցէ** (Ատ.), **մի՛ուտիցես** (ԸԵ, 83), **մի՛ գտցի** (ՆՊ, 101) և այլ ձևեր՝ կազմված **մի՛** արգելականով և 1-ին ու 2-րդ ապառնիներով, ինչպես նաև անցյալ դերբայով:

---

[13]**Ս. Ղազարյան**, նշվ. աշխ., էջ 193:

[14]**Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ. , էջ 128:

Սրանցից անսովոր է թերևս **մի՛**-ի գործածությունը անցյալ դերբայի հետ, որի մասին քերականական աշխատություններում չի նշվում[15]:Երկրորդ ապառնու հետ գործածությունը հատուկ է նաև Սեբեոսի երկերի լեզվին[16]:

Բուն հրամայական՝ **արարէ՛ք** (ՆՊ, 107) **բռնահարեա՛** (ՍԺ, **ընկա՛լ** (ԸԵ, 75), 493), **խոստովանեա՛** (ԸԵ, 74)**, ծանի՛ր** (ԸԵ, 76), **ծանիցու՛ք (**ԸԵ, 74), **կոչեա՛** (ՍԺ, 492), **հայեա՛ց** (Ատ., 21), **ձեռնարկու՛ լեր** (ՍԺ, 492), **ճշմարտեա՛** (ԸԵ, 75), **մի՛տ դիր** (ՍԺ, 480), **յայտնեա՛** (ԸԵ, 95), **նայեա՛(**ՍԺ, 480), **քննեա՛** (ՍԺ, 491)և այլն: Նկատելի է, որ Օձնեցին գործածել է դասական հայերենում ընդունված ձևերը:

Հազվադեպ գործածվում են նաև հորդորական հրամայականի ձևեր, ինչպես՝ **բերկրեսջի՛ր (**ՍԺ, 493), **համարեսջի՛ր** (ԸԵ, 75), **հարցջի՛ր** (ԸԵ, 71) և այլն: Բացի պարզ ժամանակաձևերից, գործածական են նաև վերլուծական ձևեր, որոնք «գրաբարում կազմվում են *անցյալ* և *ապառնի* դերբայներով ու օժանդակ բայով: Որպես օժանդակ բայ գրաբարում սովորաբար գործածվում են *եմ* և *լինիմ* բայերը (մասամբ էլ ուրիշ բայեր)»[17]:

Սահմանական եղանակի վերլուծական ժամանակաձևերից ամենաքիչը բաղադրյալ ապառնիով գործածություն-

---

[15]Տե՛ս **Վ. Առաքելեան**, *Գրաբարի քերականութիւն*, Ե., 2010, էջ 196: **Լ.Մ. Խաչատրյան, Գ.Բ. Թոսունյան**, *Գրաբարի դասագիրք*, Ե., 2004, էջ 222:

[16]**Գ. Բաղդիշյան**, նշվ. աշխ., էջ 49:

[17]**Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ211:

ներն են, ինչպես՝ **ասելի է** (ԸԵ, 87), **գալոց ես** (ՍԺ,489), **լինելոց է** (ԸԵ, 96, ՆՊ, 120), **յափշտակելոց են** (Ատ., 14), իսկ ամենաշատը՝ **վաղակատար-հարակատարներկայի** ձևերը: Օրինակներ՝ **առեալ լինի** (ԸԵ, 83), **ասացեալ է** (ԸԵ, 76), **բարձեալ է** (ՄՀ, 105), **բարձեալ լինի** (ԸԵ, 78), **բնաւորեալ է** (ԸԵ, 68), **գրեալ է** (ՆՊ, 100, ՑԿԵ, 85, ԸԵ, 83), **եղեալ են** (ՆՊ, 101, 102), **ենթակայեալ ունի** (ՆՊ, 121), **զանխլացեալ են** (ՆՊ, 112), **կարգեալ են** (ՑԿԵ, 87, 88), **կարգեալ է** (ՆՊ, 102), **հիացեալ եմ** (ԸԵ, 79), **միացեալ է**(ՆՊ, 115), **յանդիպեալ է** (ՆՏԵ, 119), **որոշեալ է** (ԸԵ, 89), **պատմեալ է** (ԸԵ, 89)**,** **պնդեալ են** (ՆՏԵ, 111), **ցուցեալ է** (ԸԵ, 89) և այլն:

ՍԺ-ում գործածվել են հետևյալ բայաձևերը՝ **կատարեալ է** (487), **եղեալ է** (487)՝ բաղադրված **եմ** բայով: Մյուս երկերում հանդիպում են և՛ **եմ**-ով, և՛ **լինել**-ով ձևեր: Այս երկում վաղակատար-հարակատար անցյալը կազմվել է և՛ **եմ,** և՛**լինել** բայերով, մեկ անգամ էլ՝ **մնալ** բայով, ինչպես՝ **լցեալ լինէին** (488), **հանդիպեալ մնային** (489), **հաւանեալ եղեն** (473), **հաստատեալ էին** (477), **հաւանեալ լինէր** (475), **հնազանդեալ էին** (477), **ճաշակեալ լինէին** (489), **սփռեալ տարածեալ էր** (490), **վարեալ լինէին** (477)**:** Այլ երկերից օրինակներ՝ **աշակերտեալ էր** (ՆՊ, 102), **ասացեալ եղեւ** (ԸԵ, 78), **բարձեալ եղեն** (ԸԵ, 95), **բնաւորեալ եղեւ** (ԸԵ, 67), **եղեալ էիր** (ԸԵ, 77), **զգուշացեալ լինէր** (ԸԵ, 83)**,** **լուծեալ եղեւ** (ԸԵ, 62), **բնաւորեալ էր** (ԸԵ, 83), **ոչ էր բնաւորեալ** (ԸԵ, 69) **ժողովեալ էին** (ՆՊ, 107), **հաստատեալ լինէր** (ՆՊ, 105) և այլն:

Ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնին հազվադեպ է գործածվում, ինչպես՝ **մնացեալ իցէ** (ՅՍԳ, 133), **ըմբռնեալ իցեն** (Ատ. 11), **համարեալ իցեն** (ԸԵ, 87), **նզովեալ եղիցի** (ՍԺ,474, 490) և այլն:

Սակավաթիվ են նաև սահմանական եղանակի բաղադրյալ անցյալ ապառնու (**գտանելոց էր**(ՄՀ, 133), **տանելոց էր** (ՄՀ, 133)), **փոփոխելի էր (**ԸԵ, 88)), ինչպես նաև ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնու ձևերը **(մնալոց իցէ** (ՄՀ, 137)):

Պետք է նկատել, որ սահմանական եղանակի բաղադրյալ ներկա և անցյալ ապառնիների դեպքում երբեմն հանդիպում են *ի* վերջավորությամբ ձևեր, մինչդեռ քերականագիտության մեջ ընդունված է, որ բաղադրյալ ժամանակաձևերը կազմվում են միայն **–ոց** վերջավորությամբ ապառնիով[18]:

Այսպիսով՝ բայի եղանակաժամանակային ձևերի գործածության առումով Օձնեցու երկերում շեղումները մասնավոր բնույթ են կրում և առանձնապես տարբերություններ չեն դրսևորում դասական հայերենի համապատասխան ձևերի համեմատությամբ: Հունաբան դպրոցի արհեստական նորամուծություններից ևս Օձնեցին զերծ է մնացել: Թերևս հենց այդ հատկանիշներով էլ Օձնեցու երկերի լեզուն առանձնանում և իր ժամանակակիցներից

[18]Տե՛ս **Վ. Առաքելեան**, նշվ. աշխ., էջ 193:

շատերի լեզվից և թույլ տալիս դրանք դիտել որպես լեզվական առանձնահատկություն 7-8-րդ դդ. գրաբարի համար:

Nersisyan Varsik - The Use of the Tense and Mood Forms of the Verb in the Works by Hovhannes Odzneci. - The main goal of the given paper is to analyse the use of the tense and mood forms in the works by Hovhannes Odzneci, discover their ties with the Ancient Armenian language, from the one hand, and with Classical Armenian, from the other hand, as well as to demonstrate the frequency of their usage. Though from the perspective of the study of the linguistic situation in 7-10 centuries the forms of Future I and Future II are distinguished there are other remarkable tense forms as well which have been presented in the paper.

Нерсисян Варсик - Употребление форм времени и наклонения глагола в трудах Ованеса Одзнеци. - Цель данной работы - проанализировать употребление форм времени и наклонения в трудах ОванесаОдзнеци, выявить их связь с классическим армянским, с одной стороны, и постклассическим армянским, с другой стороны, а также показать частотность их употребления. Хотя с точки зрения исследования языковой ситуации 7-10 вв.выделяются формы будущего первого и будущего второго, существуют и другие примечательные временные формы, которые предаставлены нами в данной статье.

Մարգսյան Նռանե
(ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ

Հասարակական, տնտեսական, քաղաքական կյանքի աշխուժացումը, գիտատեխնիկական նվաճումները և դրանց արդյունքում առաջ եկող փոփոխությունները դրսևորվում են նաև լեզվական համակարգում: Հայտնի է, որ ամենաարագը փոփոխվում է բառապաշարը: Ի հայտ եկած նոր առարկաների, երևույթների անվանումները մտնում են բառապաշար որպես նոր բառեր:

Բառապաշարը մշտապես փոփոխվող, հարստացվող լեզվական շերտ է: Այն ժամանակի ընթացքում հարստանում է նաև տարբեր տեսակի հապավումներով, որոնք առաջանում են բառակապակցությունների կամ բաղադրյալ անվանումների բաղադրիչների կրճատ գրության հիման վրա և, «ի տարբերություն բարդության այլ տեսակների, գրավոր ծագում ունեն»[1]:

Հապավումները լայն տարածում ու գործածություն ունեն նաև լեզվի արդի շրջանում: Հատկապես 2018թ. հեղափոխությունից հետո հասարակական-քաղաքական կյանքում առաջ եկան մի շարք փոփոխություններ. ստեղծվեցին կառավարման նոր մարմիններ, փոխվեցին որոշ կառույցների անվանումները և այլն: Արդյունքում

[1] **Ա. Մարգարյան,** *Հայոց լեզվի հապավումները*, Ե., 1984, էջ 15:

գործածության մեջ մտան նոր հապավումներ, որոնց հավաքումն[2] ու քննությունը լեզվի արդի վիճակի ուսումնասիրման դիտանկյունից կարող են կարևոր և օգտակար լինել՝ պատկերացում տալով նաև կատարված փոփոխությունների մասին:

Հապավումները գրավոր խոսքի հիմնական բաղադրիչներից են և նպաստում են խոսքի սեղմությանը, բազմազանությանը: Լեզվաբանության մեջ հիմնականում տարբերակվում են վանկային, տառային և խառը հապավումներ:

Վանկային հապավումները կազմվում են բաղադրության բաղադրիչների սկզբնամասերից, ինչպես՝ **տեխնոլաբ**՝ *տեխնոլոգիական լաբորատորիա*, **պետջրկոմ**՝ *պետական ջրային կոմիտե*, **գիտկոմ**՝ *գիտության կոմիտե* և այլն:

Վանկային հապավումները ավելի քիչ տարածում ու գործածություն ունեն, քան **խառը հապավումները,** որոնց բաղադրիչները կարող են լինել վանկային և բառային կամ վանկային և տառային, օրինակ՝ **պետավիածառայություն**՝ *պետական ավիածառայություն*, **բուժծառայություն**՝ *բուժա-*

---

[2] Արդի հայերենի բազմաթիվ հապավումներ ընդգրկված են «*Նոր բառեր*» բառարանի պրակներում: Շարունակաբար հարստացվում է նաև **Դ. Գյուրջինյանի, Ն. Հեքեքյանի** «*Հայերենում գործածվող տառային հապավումները*» բառարանը:

կան՝ բժշկական ծառայություն, **ժողսպառում**՝ *ժողովրդական սպառում*, **կուսղեկավար**՝ *կուսակցության ղեկավար*, **պետանվտանգություն**՝ *պետական անվտանգություն*, **ՀրազՋԷԿ**՝ *Հրազդանի ջերմային էլեկտրակայան:*

Արդի հայերենում խառը հապավումների կազմության առավել գործուն սկզբնաբաղադրիչներից են, օրինակ, **սոց**՝ *սոցապահով, սոցաշխատակից, սոցաջակցություն, սոց-բաժին*, **պետ**՝ *պետաշխատող, պետաջակցություն, պետգույք, պետխորհուրդ*, **էկո**՝ *էկոայգի, էկոզարդ, էկոմթերք, էկոռեստորան*, բաղադրիչները:

Այսպիսի հապավումների մեջ դուրս են գալիս ածանցներն ու վերջավորությունները, իսկ բաղադրիչը իր հիմնական տեսքը չի կորցնում, և կազմությունը մոտենում է իսկական բարդությանը:

Վերջին տասնամյակում լայն գործածություն են ստացել **տառային հապավումները**, որոնք կազմվում են բաղադրյալ անվան բաղադրիչների սկզբնատառերով: Արդի հայերենի տառային հապավումներից են **ԱԱՏՄ**՝ *Աշխատանքի և առողջապահական տեսչական մարմին*, **ՇՄՆ**՝ *Շրջակա միջավայրի նախարարություն*, **ՍԱՏՄ**՝ *Սննդի անվտանգության տեսչական մարմին*, **ԲՊՄՄ**՝ *Բնության պահպանության միջազգային միություն* և այլն: Նշենք նաև, որ իրենց կիրառության ոլորտում այս հապավումներից շատերը կարող են տերմինային արժեք ունենալ, օրինակ՝ **ՊՇՌ**՝ *Պոլիմերազային շղթայական ռեակցիա*, **ԱՎՕ**՝

Արտադրական վտանգավոր օբյեկտ, **ԱԹՍ**՝ *Անօդաչու թռչող սարք* և այլն[3]:

Ինչպես նշեցինք, կատարվող սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ փոփոխությունները իրենց արտահայտությունն են գտնում նաև հապավումներում: Այսպես, 2019 թ. Հայաստանի Ազգային ժողովը հաստատեց Կառավարության առաջարկը կառուցվածքային փոփոխությունների մասին, ըստ որի՝ մշակույթի նախարարությունը, սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունն ու կրթության և գիտության նախարարությունը միավորվել են՝ ստեղծելով կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ինչի արդյունքում **ԿԳՆ** (Կրթության և գիտության նախարարություն) հապավմանը փոխարինելու եկավ **ԿԳՄՍՆ** հապավումը: Կամ 2018 թ. մեկ այլ որոշմամբ հանձնաժողովները դարձան կոմիտեներ, և *բարձրագույն որակավորման հանձնաժողովը* վերածվեց *բարձրագույն որակավորման կոմիտեի*, հետևաբար **ԲՈՀ** հապավման փոխարեն սկսեց գործածվել **ԲՈԿ** տարբերակը: Նախորդ

[3] Նշենք, որ որոշակի տարբերություններ կան արևելահայերենում և արևմտահայերենում կիրառվող հապավումների կազմության, գործածության և վերծանման հարցում: Այսպես, *ԱԽ* հապավումը արևելահայերենում վերծանվում է *Անվտանգության խորհուրդ*, իսկ արևմտահայերենում այն *Ապահովության խորհուրդ* է: Կամ *Հյուսիս-Ատլանտյան դաշինք* նշանակող հապավումը արևելահայերենը փոխառել և գործածում է անգլերենից՝ **ՆԱՏՕ**՝ *North Atlantic Treaty Organization*, իսկ արևմտահայերենը՝ ֆրանսերենից՝ *Organisation du traité de l'Atlantique Nord*, հետևաբար արևմտահայերենում կիրառվում է **ՕԹԱՆ** հապավումը՝ նույն իմաստով:

ձևերը հնաբանության արժեք ստացան և դուրս եկան գործածությունից:

Երբեմն արդեն եղած առարկաների, երևույթների որակական կամ այլ հատկանիշի տարբերակմամբ տրվող անվանումները ևս կարող են նպաստել նոր հապավումների՝ խոսք մուտք գործելուն, ինչպես՝ **փոքր** հիդրոէլեկտրակայան-**փհէկ**:

Արդի հայերենում լայն գործածություն ունեն նաև փոխառյալ հապավումները, մասնավորապես՝ տառային. «Իբրև բաղադրության յուրահատուկ տեսակ, տառային հապավումները բառակազմական ընդհանրական երևույթ են և տարբեր լեզուներում գրեթե նույն օրինաչափություններն են դրսևորում: Այդ պատճառով էլ ավելի հեշտությամբ փոխառվում ու պատճենվում են»[4], ինչպես՝ **ԻԿՐԱՆԵՏ**՝ *Ռելատիվիստական աստղաֆիզիկայի կենտրոնների միջազգային ցանց (International Center for Relativistic Astrophysics Network)*, **ԻԿՕՄՕՍ**՝ *Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհուրդ (International Council on Monuments and Sites)*, **ՍԻԳՄԱ**՝ *Փորձագիտական կառույց (Support for Improvement in Governance and Management)*, **ԿՈՆԻՖԱ**՝ *Չճանաչված երկրների ֆուտբոլի ասոցիացիաների կոնֆեդերացիա (Confederation of Independent Football Associations)* և այլն:

---

[4] **Ն. Հերբերյան,** *Օտարալեզու տառային հապավումները հայերենում: Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն*, Գ պրակ, Ե., 2003, էջ 77:

Պատճենումներ կատարվում են մեծ մասամբ անգլերենից և ռուսերենից, օրինակ՝ **ՀԱՀ**-Global *Leadership Foundation-Համաշխարհային առաջնորդության հիմնադրամ*, **ԺԳՀ-** *House Democracy Partnership -Ժողովրդավարական գործընկերության հանձնախումբ*, **ԱԹՍ**-*Беспилотный летательный аппарат*-անօդաչու թռչող սարք: Վերջին տասնամյակում գերակշռում են անգլերենից կատարված փոխառություններն ու պատճենումները:

Նորագույն, հատկապես փոխառյալ, հապավումների կիրառությունը կարող է որոշակի դժվարություններ առաջ բերել հանրության լայն շրջանակներին անծանոթ կամ քիչ ծանոթ լինելու պատճառով: Ուստի ցանկալի է, որ հապավմանը զուգահեռ կամ խոսքի սկզբում տրվի վերջինիս վերծանված տարբերակը, հատկապես այն դեպքում, որ լեզվում հաճախ առաջ են գալիս համանուն հապավումներ, որոնց ունեցած նշանակությունը կարելի է հասկանալ միայն տվյալ համատեքստը դիտարկելիս: Համանուն հապավումներ են, օրինակ՝ **ՀԽ**՝ 1.*Հանրային խորհուրդ: 2. Հասարակական խորհուրդ: 3. Հիմնադիր խորհրդարան*, **ՋԱՀ**՝ *1. Ջերմանջատիչ հավաքվածքներ: 2. «Ջավախքին աջակցություն» հիմնադրամ* հապավումները:

Կան նաև այսպես կոչված **տեղային հապավումներ**: Սրանք այնպիսի հապավումներ են, որոնք կիրառելի են միայն տվյալ համակարգում, կառույցում և այլն, այսինքն՝ համընդհանուր գործածություն և ճանաչում չունեն տվյալ լեզվի լեզվակիրառողների շրջանում: Այսպես, Վ. Բրյուսովի

անվան լեզվագիտական համալսարանում կիրառելի են **ՌՕԼ**՝ *ռուսաց և օտար լեզուներ*, **ԹՄՀ**՝ *թարգմանություն և միջմշակութային հաղորդակցություն*, **ՍԳՄ**՝ *սոցիալական գիտություններ և սերվիս* և նման այլ հապավումներ, որոնք հայտնի են միայն նեղ շրջանակի։

Ճիշտ է, հապավումները նպաստում են խոսքի սեղմությանը, սակայն երբեմն հապավումը կազմող բաղադրիչները ևս կարող են զեղչվել, օրինակ՝ **ԳԱՏՕ**՝ *Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության*[5]։

Այսպիսով, առկա օրինակները հնարավորություն են տալիս փաստելու, որ այսօր էլ կազմվում և լայնորեն կիրառվում են հապավումների տարբեր տեսակները՝ նպաստելով խոսքի սեղմությանը։

Sargsyan Nrane – Abbreviations of the Modern Armenian Language. - The article is an attempt to present the latest abbreviations of the modern Armenian language. Changes in the political and social spheres are also reflected in the abbreviations. New abbreviations are coming into use.

In addition to syllabic, alphabetic, and mixed abbreviations, there are also local abbreviations familiar only to a narrow circle.

[5] Գ. Սևակը այսպիսի հապավումները անվանում է կրկնահապավումներ կամ զեղչումով հապավումներ: Տե'ս **Սևակ Գ.,** *Հայոց լեզվի դասընթաց*, Ե., 2009, էջ 182:

Abbreviations are mainly used in writing speech and contribute to the brevity of speech.

Саргсян Нране - Аббревиатуры современного армянского языка. - В статье сделана попытка представить новейшие аббревиатуры современного армянского языка. Изменения в политической и социальной сферах отражаются и в аббревиатурах. Вступают в использование новые аббревиатуры.

Кроме слоговых, буквенных и смешанных аббревиатур, есть и локальные аббревиатуры, знакомые только с узким кругом. Аббревиатуры в основном используются в письменном языке и способствуют краткость речи.

Վարդանյան Արտակ
(ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԱՐՑԱԽԻ ԲԱՐԲԱՌԻ «ՏՆՋՐԻ» ԲՈՒՍԱՆՈՒՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայերենի **սոսի (սօս(ի), սաւս(ի)** բուսանունը բարբառներում գրեթե չի պահպանվել: Վաղնջական ժամանակներից հայոց հավատալիքներում սրբացված այս ծառի անունը մեր բարբառներում հիմնականում կիրառվում է փոխառյալ **չինար** ձևով (պարսկերեն՝ **čenar**, թուրքերեն՝ **çınar**, ադրբեջաներեն՝ **çinar**): Հայերեն ավանդական **սոսի** տարբերակի բարբառային ձևերից հայտնի է միայն Սվեդիայի բարբառի **սուսա** ձևը[1]:

Արցախի բարբառում առավել կիրառական է ծառանվան **տընջըրի** տարբերակը, որի ակնհայտ կապը անցյալի սկզբնաղբյուրներում (Եղիշե, Վարդան Արևելցի, Կիրակոս Գանձակեցի և այլք) վկայված հայերեն **ճանդար(ի)** տարբերակի հետ նկատել է լեզվաբան Հրաչ Մարտիրոսյանը[2]:

---

[1] **Հ. Աճառեան,** *Հայերէն արմատական բառարան,* հ. Դ, Ե., 1926, էջ 290:

[2] **H. Martirosyan,** *Armenian čandari ‘plane tree’,* Iran and the Caucasus, 18.1, Tehran, 2014, էջ 51-63:

Հրաչյա Աճառյանը[3] և Գևորգ Ջահուկյանը[4] **ճանդար(ի)** ծառանունը պարսկերեն (իրանական) փոխառություն են համարել՝ առանց ստուգաբանությունը մեկնելու: Հ. Մարտիրոսյանը, սակայն, ստուգաբանել է որպես միջին պարսկերենի **čandidan** («դողալ, երերալ, թրթռալ») և **dār** («ծառ») բառերից բաղկացած **čand dār** («դողացող ծառ») հարադրության ամփոփված ձև՝ հնարավոր համարելով նաև վերջինիս կապը նոր պարսկերենի **čenār** («սոսի») բառի հետ, իսկ Արցախի բարբառի **տընջըրին** ներկայացնելով որպես **ճանդարիի**՝ դրափոխությամբ հնչյունափոխված (**ճ/դ**) տարբերակ (ճանդարի > ճընդըրի > դընջըրի > **տընջըրի**):

Պատմաբան Հասմիկ Հմայակյանը, հենվելով Պետեր Կալմայերի[5] և Երվանդ Գրեկյանի[6] ուսումնասիրությունների վրա, ակնհայտ է համարում Արարատյան թագավորության Խալդի աստծուն նվիրված պաշտամունքային կառույցների՝ **սուսի** տաճարների անվանական նմանությունը **սոսի** բուսանվան հետ[7]:

---

[3] **Հ. Աճառեան,** *Հայերէն արմատական բառարան,* հ. Գ, Ե., 1926, էջ 183-184:

[4] **Գ. Ջահուկյան,** *Հայերեն ստուգաբանական բառարան,* Ե., 2010, էջ 488:

[5] **П. Кальмейер,** *Символ Халди,* Древний Восток, 4, Е, 1993, էջ 184:

[6] **Ե. Գրեկյան,** *Ուրարտուի պետական դիցարանը.*– Ե. Գրեկյան, Մ. Բադալյան, Ն. Տիրացյան, Ա. Պետրոսյան, Բիայնիլի-Ուրարտու. աստվածներ, տաճարներ, պաշտամունք, Ե., 2018, էջ 21:

[7] **Հ. Հմայակյան,** *«Սոսի» բուսանվան ստուգաբանության փորձ*, «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական հոդվածների ժողովածու, 2019, էջ 114-121: **Հ. Հմայակյան,** *Գրիգոր Ղափանցյանը և խեթագիտությունը*, Երևան 2016, էջ 82:

Միանգամայն հավանական համարելով այս կարծիքը՝ մեր տպավորությամբ այն ոչ միայն լույս է սփռում **սոսի** ծառի պաշտամունքի ակունքներին, այլև թույլ է տալիս Արցախի բարբառի **տընըջրի** ծառանվան ծագումը դիտարկել այլ տեսանկյունից:

Հ. Հմայակյանը մատնանշում է ոչ միայն Արարատյան թագավորության **սուսի** պաշտամունքային կառույցների և հայերենի **սոսի** բուսանվան ստուգաբանական կապը, այլև ուսումնասիրողների դիտարկումները ուրարտական **սուսի** տաճարների և կենաց ծառի կապի, ինչպես նաև, համապատասխանաբար, կենաց ծառի և սոսի ծառի հնարավոր կապի առնչությամբ[8]: Անկասկած, կարող ենք ենթադրել, որ սոսի սրբազան ծառը մեր նախնիները ընկալել են որպես տաճարին փոխարինող ծառ՝ տաճարի ծառ:

Ենթադրության օգտին են խոսում հայերենում **սոս (սօս)** բառի ունեցած մյուս իմաստները՝ «պերճ, հպարտ, սեգ, վեհ», «պայծառ գույն», «բարձրահասակ, վայելչագեղ, հաղթանդամ» և այլն, որոնք, անշուշտ, կապ ունեն տաճարի և սրբազան ծառի նախնական իմաստների հետ: Անգամ պատահական չենք համարում մեր օրերում էլ Ամենայն հայոց կաթողիկոսին **վեհափառ, վեհ** մակդիրներով դիմելը և նրա նստավայրը **վեհարան** անվանելը:

---

[8] **Հ. Հմայակյան,** *«Սօսի» բուսանվան ստուգաբանության փորձ*, «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2019, էջ 117:

Պատահական չէ նաև, որ վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը Հայկական լեռնաշխարհի պաշտամունքային վայրերին կից աճում են դարավոր, հազարամյա սոսիներ, իսկ հասունացած ցորենի ցողուններից և հասկերից պատրաստվող՝ տան և ընտանիքի պահապան կենաց ծառերի տերևները հյուսվում են երեք, հինգ, յոթ կամ ավելի հասկերի փնջերով՝ հենց սոսու տերևների ակնհայտ նմանակմամբ[9]:

Այս առումով պատմահայր Մովսես Խորենացու հիշատակած Անուշավան Սոսանվեր[10] նահապետի անունը կարելի է մեկնել ոչ միայն որպես «սոսու անտառին նվիրված», այլև առավել տրամաբանական «տաճարին նվիրված, տաճարանվեր» իմաստով:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ մեզ թույլ ենք տալիս ենթադրելու, որ հայերեն բարբառային **տընջրի** ծառանունը կարող էր առաջանալ նաև հայերեն **տաճար** բառի սեռական հոլովից՝ **ն**-ի հավելմամբ, միջձայնավորային խուլի ձայնեղացմամբ (ճ > ջ), անշեշտ վանկերում ա > **ը** հնչյունափոխություններով՝ տաճարի > տաջարի > տանջարի > **տընջըրի** և ունենալ «տաճարի ծառ» նշանակությունը: **Տաճար** բառը, որի նախնական իմաստները հայերենում եղել են՝ «պալատ, արքունիք», «սեղանատուն», «անկելանոց,

---

[9] *Հայոց տոնածիսական մշակույթն ըստ գեղանկարչուհի Լուսիկ Ագուլեցու ստեղծագործությունների,* Ե., 2015, էջ 7-13, 27:

[10] **Մ. Խորենացի,** *Հայոց պատմություն,* Ե., 1981, էջ 128:

ծերանոց», «մեհյան», «աղոթատուն» և այլն, Հ. Աճառյանը[11] և Գ. Ջահուկյանը[12] կրկին համարել են իրանական փոխառություն՝ հին պարսկերենի **tačara** («պալատ, ապարանք») բառից, որը նոր պարսկերենում ստացել է **tajar** («ձմեռանոց», «շտեմարան, ամբար») իմաստը: Հայ լեզվաբանության դասականներն այստեղ ևս չեն մատնանշում բառի ստուգաբանությունը, սակայն, հայերենում բառի առավել ընդգրկուն իմաստային դաշտը, մասնավորապես՝ ծիսապաշտամունքային նշանակություն-ները, այն միանշանակ իրանական փոխառություն համարելը կասկածելի է դարձնում:

Այսպիսով, ինչպես **սոսի** բուսանունն է բխում **սուսի** տաճարի անունից, նույն օրինաչափությամբ և տրամաբանությամբ էլ **տընջըրին** կարող է բխել **տաճար** բառից, իսկ **ճանդարը** կամ **ճանդարին** կարող է վերջինիս դրափոխված (**տ/ճ**) ձևը լինել՝ տաճարի > ճատարի > ճադարի > **ճանդարի**:

Vardanyan Artak – Ethimology of the PLant Name “Tənəǰri” of Artsakh Dialect.– The connection of the **տընջըրի tənəǰri** variant of the plant name **սոսի sosi** (‘’platan’’) used in the Artsakh dialect with the variant **ճանդար(ի**) **čandar(i)**, attested in the primary sources of the past (Yeghishe, Vardan Areveltsi, Kirakos

[11] **Հ. Աճառեան,** *Հայերէն արմատական բառարան,* հ. Դ, Ե., 1926, էջ 365:
[12] **Գ. Ջահուկյան,** նշված աշխատանքը, էջ 719:

Gandzaketsi and etc.) noticed Hrachya Martirosyan and etymologized it as a generalized form of comparison, composed of the words **čandidan** (“tremble, flicker”) and **dār** (“tree”) of the Middle Persian language – **čand dār** (“trembling tree”).

Hasmik Hmayakyan considers obvious the similarity of the names of the cathedrals **susi** – religious buildings dedicated to the god Khaldi of the Ararat kingdom (Urartu), with the name of the plant **sosi**, as well as the connection with the Tree of Life.

As the name of the plant **sosi** comes from the name of the cathedral **susi,** with the same regularity and logic tənəǰri can come from the genitive case of the word **տաճար tačar** (“temple”) in the Armenian language – **տաճարի tačari** and have the meaning ‘’temple tree’’ (տաճարի tačari> տաջարի taǰari> տանջարի tanǰari> **տընջըրի tənǰəri**), and the variant **ճանդար(ի)** may be the result of the latter's metathesis (տաճարի tačari> ճատարի čatari> **ճադարի čadari**).

Варданян Артак - Этимология названия растения “tənəǰri” арцахского диалекта. - Связь употребляемого в арцахском диалекте варианта **տընջըրի tənəǰri** названия растения **սոսի sosi** (‘’платан’’) с вариантом **ճանդար(ի) čandar(i)**, засвидетельствованная в первоисточниках прошлого (Егише, Вардан Аревелци, Киракос Гандзакеци и др.), заметил Рачия Мартиросян и этимологизировал как обобщенную форму сопоставления, составленную из слов **čandidan** («дрожать,

трепетать, мерцать») и **dār** («дерево») среднеперсидского языка – **čand dār** («дрожащее дерево»).

Асмик Амаякян считает очевидным именное сходство соборов **susi** – культовых сооружений, посвященных богу Халди Араратского царства (Урарту), с названием растения **sosi**, а также связь с Деревом жизни.

Как название растения **sosi** происходит от имени собора **susi**, с той же закономерностью и логикой **tənəǰri** может происходить от родительного падежа слова **տաճար** **tačar** (‘’собор’’) армянского языка – **տաճարի tačari** и иметь значение ‘’дерево собора’’ (տաճարի tačari > տաջարի taǰari > տանջարի tanǰari > **տընջըրի tənǰəri**), а вариант **ճանդար(ի)** может быть результатом метатезы последнего (տաճարի tačari > ճատարի čatari > ճադարի čadari > **čandari ճանդարի**)։

Տիոյան Սուսաննա
(ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԶՈՒԳԱԴԻՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՀՈՄԱՆԻՇ ԲԱՌԵՐԸ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ժամանակակից գրական հայերենի երկու լեզվաճյուղերի մեջ կան բառեր, որոնց ընդունված է հոմանիշներ անվանել, սակայն բառակազմական, իմաստային և կիրառական հայեցակետերից դրանք խիստ տարորոշված են. խոսքային նույն իրադրության կամ միևնույն երևույթի համար արևելահայերենում հոմանշային շարքի մեկ, իսկ արևմտահայերենում մյուս անդամն է հանդես գալիս: Այս ուսումնասիրության մեջ ընդգրկել ենք հաճախական, բայց տարաբնույթ երկանդամ հետևյալ շարքերը.

ատամ- ակռա,
ատոմային –հյուլեային (զենք),
բաժակ – գավաթ,
բնատուր – ինքնեկ,
թղթածրար[1] – թուղթերու տրցակ

---

[1] «Հայկական, ասորական, յունական, քրտական ցեղասպանութիւններ իրականացուցած Թուրքիոյ ստուար թղթածրարին վրայ պիտի աւելնայ նաեւ լիբանանեանը», **Անդրանիկ Վրդ. Կռանեան,** *Բառգիրք հայերէն լեզուի,* Պէյրութ, 1998: Էջ 141:

թղթե ծրար - թղթապանակ,

միջուկային-կորիզային (զենք),

կարգ - դասակարգ (մարզիկի քաշային կարգ):

Բերված զույգերում առկա են ինչպես որևէ անորոշություն կամ առարկություն չառաջացնող, բայց իմաստային նրբերանգներով տարբերակվող զույգեր, օրինակ, ատոմային –հյուլեային (զենք), բնատուր – ինքնեկ, միջուկային-կորիզային(զենք), այնպես էլ հայերենի երկու գրականներում միանգամայն տարբեր դեպքերում կամ իրավիճակներում գործածվողներ, ինչպես, օրինակ, բաժակ – գավաթ կամ կարգ - դասակարգ շարքերն են:

Ատամ- ակռա զույգի պարագայում ունենք բացարձակ համապատասխանություն՝ հիմք ընդունելով բառարանային մեկնաբանությունները. օրինակ, Գ. Ճէրէճեանի բառարա-նում՝ «ատամ, ատամն, տե՛ս ակռայ»[2], Անդ. Կռանեանի բառգրքում՝ «ատամ գոյական Ակռայ »[3], Յ. Գայայեանի բառարանում՝ «ատամն գոյական 1. Ակռայ: 3. (գազանի) ժանիք, կեռիք»[4], Գնէլ արք. Ճէրէճեանի *Հայոց լեզուի նոր բառարանում*՝...«ատամ, ատամն, տե՛ս ակռայ: Կան՝ ա)

---

[2] **Գնէլ արքեպիսկոպոս Ճէրէճեան, Փարամազ Կ. Տօնիկեան եւ Արտաշէս Տէր Խաչատուրեան,** *Հայոց լեզուի նոր բառարան*, Պէյրութ, 1992, էջ 211:

[3] **Անդրանիկ Վրդ. Կռանեան,** *Բառգիրք հայերէն լեզուի*, Պէյրութ, 1998, էջ 41:

[4] **Յարութիւն Թ. Գայայեան, . Գահիրէ,** *Բառարան Գանձարան Հայերէն Լեզուի*, 1938, էջ 44:

կաթի, բ) բնական, գ) իմաստութեան եւ դ) արուեստական»[5], իսկ Ա. Սուքիասյանի հոմանիշների բացատրական բառարանում կարդում ենք՝ «Ատամ, գ., 1. Ակռա (արևմտհ.,), 2. Կժիկ (երեխայի), 3. Ժանիք (գազանի)»[6] . ատամ գոյականի **ակռա** զույգը բոլոր վերը նշված բառարաններում անխտիր, այլև հայերենի՝ «Նաիրի հայերէնի ուղղագրիչ բառարանում» առկա բոլոր բացատրական բառարաններում մեկնաբանվել է որպես **ատամ**[7]. բացառություն են կազմում Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական[8]», այլև «Արդի հայերենի առձեռն բացատրական[9]» բառարանները, որոնցում **ակռա-**ն մեկնաբանվում է՝ «գ., (արևմտ.) 1. Ատամ: 2. Տե՛ս Սեղանատամ»[10]: Ինչպես վերը նշեցինք, **ատամ-ակռա** զույգը բացարձակ հոմանիշներ են. մեր այս պնդումի ապացույցը

---

[5] **Գնէլ արքեպիսկոպոս Ճէրէճեան, Փարամազ Կ. Տօնիկեան եւ Արտաշէս Տէր Խաչատուրեան,** *Հայոց լեզուի նոր բառարան,* Պէյրութ, 1992, էջ 203-204:

[6] **Ա. Սուքիասյան,** *Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան,* Ե., 2009, էջ 103:

[7] Տե՛ս **Անդրանիկ Վրդ. Կռանեան,** *Բառգիրք հայերէն լեզուի,* Պէյրութ, 1998, էջ 13, **Յարութիւն Թ. Գայայեան,** *Բառարան Գանձարան Հայերէն Լեզուի,* Գահիրէ, 1938, էջ 6, **Ստ. Մալխասեանց,** *Հայերէն բացատրական բառարան.* Ե., 1944, էջ 55:

[8] **Էդ. Աղայան,** *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, հ. 1. էջ 18:

[9] **Էդ. Աղայան,** *Արդի հայերենի առձեռն բացատրական բառարան,* Ե., 2014, էջ 26:

[10] Տե՛ս նույն տեղը:

նաև ԱՐԵՎԱԿ-ում[11] առկա 23 համաքստերի օրինակներն են, որոնք հայ (արևելահայ և արևմտահայ), այլև օտար գրողների (թարգմանաբար) ստեղծագործություններից են.

«…Նախ՝ կատարեցին միակ կարելին.

թրի-սրի դեմ, հրի դեմ, ջրի,

հրանոթի դեմ ու զնդացրրի,

երեկվա նման ու վաղվա նման մարտնչում էին **ակռա-ատամով,** կռվում կրունկով, թաթով ու ծունկով՝

Վանում, Ուրֆայում, Մուսայի վրա, Գարահիսարի կիս ավեր բերդում... (ԱՐԵՎԱԿ, Պ. Սևակ, Եռաձայն պատարագ)»: Կամ՝ «Ժողովրդի մեջ ննջում են Նրանք,

Ինչպես ջրի մեջ՝ ահեղ գոլորշին,

Ինչպես ընտանի աքաղաղի մեջ՝

Իր իսկ երբեմնի թռչունությունը,

Ինչպես մանուկի պարապ բերանում **ակռա** - ատամը

(Արևակ, Պ. Սևակ, Եվ այր մի Մաշտոց անուն):»

«Ո՛չ **ակռա** մնաց, ո՛չ աչքի լույս, ասաց նա և դառնալով ինձ՝ ավելացրրեց….(ԱՐԵՎԱԿ, Խաչիկ Դաշտենց, Խոդեդան)»:

«Հիմակուհիմա **ակռա** չեն կրնար սեղմել, կըսեն որ մեր ֆիտ այիները եկած են Ստամբոլ և գործը լավ կերթաւ (ԱՐԵՎԱԿ, Վահան Թոթովենց, Երկեր 2)»:

---

[11] ԱՐԵՎԱԿ-ը՝ Արևելահայերենի ազգային կորպուսը, բազմաթիվ արևելահայերեն և արևմտահայերեն տեքստեր պարունակող լեզվաբանական որոնման համակարգ է, բաղկացած մոտ 100 միլիոն բառամթերքից:

Այսինքն, հոմանշային **ատամ - ակռա** զույգը տարբե-րակվում է միայն կիրառության «տարածքներով». **ատամը** հիմնականում արևելահայերենում (այստեղ մասամբ գործածվում է **ակռան,** ինչպես վկայում են ԱՐԵՎԱԿ-ային օրինակները), իսկ **ակռան** միայն և բացարձակապես արևմտահայերենում:

Նույնը վերաբերում է **ատոմային –հյուլեային** (զենք) և **միջուկային - կորիզային** (զենք) հոմանշային զույգերին, որտեղ ատոմայինի դեպքում արևելահայերենը ռուսերենից միջնորդավորված ճանապարհով փոխառել է атом-ը և տառադարձել, իսկ միջուկայինի դեպքում՝ ядер-ն ու թարգմանել՝ երկու հիմքերին ավելացնելով -ային ածանցը, իսկ արևմտահայերենը փոխառյալ բառերն ամբողջությամբ թարգմանում, հայերենացնում է՝ որպես օտարամուտ բառերի փոխառության դեպքերում որդեգրած սկզբունք, կարգ: Եվ, բնականաբար, գրական հայերենի մի ճյուղում գործածվում է իր ստեղծածը, մյուսում՝ իրենը՝ ապահովելով փոխընկալումը:

Բոլորովին այլ է պատկերը **բաժակ – գավաթ** զույգի պարա-գայում.այստեղ կիրառության ոլորտներն են տարբեր երկու գրականներում (թեև վերը նշված կարգը մասամբ գործում է նաև այստեղ՝ արևելահայը կասի **մեկ բաժակ**

սուրճ, արևմտահայը՝ մեկ գավաթ սուրճ[12]). այսպես, Ա. Կռանեանի բառգրքում կարդում ենք՝ **բաժակ**, գոյական, գաւաթ, ըմպանակ ·ծաղիկի բացուած գլուխը[13], իսկ Յ. Գայայեանի մոտ՝ **բաժակ.** գոյական, 1. գաւաթ, սկահ, ըմպանակ, թաս: 2. (արծաթ՝ ոսկի) նուիրակ[14]: Ստ. Մալխասյանը նույն բառը մեկնաբանում է՝ բաժակ, (եբրայերէն bazak, bazik, զանդկերէն baġina անոթ) գոյական Տե՛ս խառնարան[15]: Բառն ավելի հստակ և բազմակողմանի է ներկայացված Գ. Ճէրէճեանի բառարանում, բաժակ (Եբր. – Զենտ.), գ., 1. Զանազան նիւթերէ շինուած գաւաթ (ջուրի, թէյի, սուրճի)…[16], ապա բերվում են դրա մյուս՝ ըստ համապատասխան ոլորտում կիրառության անվանումները: Հայոց լեզվի բոլոր առկա բառարաններում՝ արևմտահայերենի, թե արևելահայերենի, ըմպանակը

---

[12] Այս իմաստով բաժակ-գավաթը բացարձակ հոմանիշներ են՝ «Հ. Բայց երեխային առավոտյան ճանապարհելուց առաջ պետք է մի բաժ ակ, մի գավաթ հյութ անպայման տալ, դա կլինի ծիրան, ապելսին, խոսքը վերաբերվում է моя семя բնական հյութերին Շատ բնական հյութեր, մեզ h ամար առողջարար, առողջ ընտանիք, առողջ երկիր, հա՞(**OPD140-1,** 2008)»:

[13] **Անդրանիկ Վրդ. Կռանեան**, *Բառգիրք հայերէն լեզուի,* Պէյրութ, 1998, էջ 55:

[14] **Յարութիւն Թ. Գայայեան,** *Բառարան Գանձարան Հայերէն Լեզուի,* Գահիրէ, 1938, էջ 57:

[15] **Ստ. Մալխասեանց,** *Հայերէն բացատրական բառարան.* Ե., 1944, էջ 336:

[16] **Գնէլ արքեպիսկոպոս Ճէրէճեան, Փարամազ Կ. Տօնիկեան եւ Արտաշէս Տէր Խաչատուրեան**, *Հայոց լեզուի նոր բառարան,* Պէյրութ, 1992, հ.1, էջ 276:

արևելահայերենում բաժակն է՝ գինու, ջրի, թեյի և այլն, իսկ արևմտահայերենում՝ գավաթը: Հայկական սովետական հանրագիտարանում ևս նշված գոյականները մեկնաբանվում են մեկը մյուսով՝ «ՍԿԱՀԱԿ, տարբեր նյութերից (արծաթ, պղինձ, փայտ, կավ ևն) պատրաստված փոքր սկահ՝ **գավաթ**, **բաժակ** (ԱՐԵՎԱԿ, Հայկական սովետական հանրագիտարան, Ե., 1984, հ. 10)»:

ԱՐԵՎԱԿ-ում **բաժակ** բառով առկա են 4951 օրինակներ՝ բնագրային (արձակ, թե չափածո), թարգմանական գրականություն և այլն, հաճախադեպ՝ բաժակ բարձրացնել, բաժակ զարկել, մի բաժակ գինի, կոնյակ, սառը ջուր, թեյ և նման տիպի բառակապակցություններում: Թեև նույն ԱՐԵՎԱԿ -ում **գավաթ** բառով առկա 1051 համատեքստերում, նաև թարգմանական, հայ հեղինակներն անխտիր օգտագործել են **գավաթ** բառը (կա այդպիսի մտայնություն, թե բաժակ-գավաթ զույգում երկրորդն ավելի բարձր ոճի միավոր է, ուստի, գեղարվեստական գրականության մեջ, հատկապես թարգմանություններում, դիմում են այդ միավորին՝ բաժակի պարունակելիի տեսակն ու չափն անտեսելով՝ սուրճ, գինի, օղի, թեյ, թե կաթ կամ մածուն՝ անկարևոր է), օրինակ՝ «Տղայի երգի ընթացքում Էլի խմեց ու զգաց, որ աչքերը մշուշվում են: Այդպես շո՞ւտ փոքրիկ գավաթներով դեռ մի քանի **գավաթ** է խմել: Ուրեմն էլ խմել պետք չէ Զորոն կերուխումի համար չի եկել :

Տանտերը թող խմի, թող տանտերը խմի ու հարբի, որդիները թող խմեն, իսկ Ջորոն նպատակ ունի Ո՞ւր է Ալեն» (Արևակ, Մուշեղ Գալշոյան, Ձորի Միրոն):

«Գավաթ գավաթի ետևից դատարկելով, գլուխները տաքացան (ԱՐԵՎԱԿ, Ալ. Շիրվանզադե, Պատմվածքներ, ֆելիետոններ, նովելներ)»: «Դռան մոտ կանգնած, մի **գավաթ** գարեջուր խմեցի, վայելելով փողոցից փչող զովի շունչը, (ԱՐԵՎԱԿ, Էռնեստ Հեմինգուեյ, Եվ ծագում է արևը, 1985)»:

Տարբերությունն այն է, որ մարզական, սպորտային բնագավառում արևելահայերենը գործածում է միայն **գավաթ** եզրույթը, օրինակ. «Երեկ Երեւանի «Դինամո» մարզադահ-լիճում ավարտվեց օլիմպիական խաղերի, աշխարհի եւ Եվրոպայի բազմակի չեմպիոն «Լեւոն Ջուլֆա-լակյանի **գավաթ**» անունը կրող ազատ ոճի ըմբշամարտի եր իտաասարդական մրցաշարը, որին մասնակցեցին Գերմանի այի, Ռուսաստանի, Վրաստանի եւ Իրանի հավաքականներ ը (Արե-վակ, Հայկական ժամանակ, 04. 06. 2004)», իսկ արևմտահայերենը՝ **բաժակ** գոյականը (Լիբանանի պաաքեթպոլի տղոց **բաժակի** մրցաշարքի քառորդ ավարտականի ծիրին մէջ, երէկ երեկոյեան ՀԲԸՄ-ի «Տեմիրճեան» կեդրոնին մէջ (Նաքքաշ) տեղի ունեցավ Պիպլոս – ՀՄԸՄ մրցումը»): Ասվածի բառարանային

ապացույցներից է Ռ. Սաքապետոյանի բառարանը, որտեղ **զավաթը** մեկնաբանված է՝ զ. (մարզ.) Բաժակ[17]:

Կարգ - դասակարգ (մարզիկի քաշային կարգ) զույգի բաղադրիչները իմաստային մեծ բազմազանություն են դրսևորում. այսպես, **կարգ** գոյականը Ա. վրդ. Կռանեանի Բառգրքում ունի վեց իմաստ՝ շարք, յաջորդութիւն, հերթ, դասարան, *եկեղեցական աստիճան, ծէս *կրոնական ուխտ,[18] իսկ Յ. Գայայեանի Բառարանում՝ տասներկուս՝ 1. Շարք, շարան, տող, տողան: 2. Սովորութիւն: 3.(աստիճան՝) դաս, դասակարգ: 4. (վարժարանի՝) դասարան: 5. (կանոն՝) կանոնագիր, օրէնք: 6. (եղանակներու՝) շրջան, դարձ: 7. (յաջորդական՝) յաջորդութիւն: 8. (երկրագունտի կեղեւին՝ ընկերութեան՝) խաւ: 9. (եկեղեցականի՝) աստիճան: 10. (միաբանական՝) միաբանութիւն, ուխտ: 11. (ժողովի խնդիրներ՝)օրակարգ: 12. (յօրինուածական՝) կապակ-ցութիւն[19]: Ստ. Մալխասյանցի բառարանում

---

[17] **Ռ. Սաքապէտոյեան**, *Արևմտահայերեն – արևելյահայէրեն նոր բառարան,* Ե., 2011, ցանկ 1, էջ 67:

[18] **Անդրանիկ Վրդ. Կռանեան,** *Բառգիրք հայերէն լեզուի*, Պէյրութ, 1998, էջ 206:

[19] **Յարութիւն Թ. Գայայեան,** *Բառարան Գանձարան Հայերէն Լեզուի,*.Գահիրէ, 1938, էջ 226:

[19] **Ստ. Մալխասեանց,** *Հայերէն բացատրական բառարան.* Ե., 1944, հ. 2, ցուցակ 1, էջ 102-103:

20 **Ստ. Մալխասեանց,** նշվ. աշխ. , հ. 2, ցուցակ 1, էջ 402-403:

թվարկված խմբերն ավելի մանրամասն են ներկայացված (շուրջ 16 իմաստներ). այսպես, առաջին՝ **շարք,** շարանն ունի «իրերի կանոնաւոր դասաւորութիւն որոշ սիստեմով»[20], օրինակ, ըստ այբբենական կարգի, կամ ըստ ժամանակագրության և այլն, **իրերի դասավորվածությունը ըստ նպատակահարմա-րության** (Թղթերս կարգի բերի), հաջորդը՝ բնական կամ սովորությամբ սահմանված **կանոն**, **օրենք** (Մեր մէջ կարգն այնպէս է, որ առաջ քոյրն ամուսնանայ և յետոյ եղբայրը), **դաս, աստիճան** (Առաջին կարգի շքանշան), **հերթ** (Իմ կարգս շուտ կհասնի), **կեանքի վիճակ**, դրութիւն (Աշխարհիկ կարգով է ապրում այժմ), (եկեղ.) **մարդկանց խումբ**, որոնք ուխտում են ապրել որոշակի կանոններով (Դոմինիկեան կարգի կրօնաւոր), **կանոն, սահմանա-դրութիւն**, որին պէտք է հետեւել (Ծնողների գոյքը ժառանգութեան կարգով անցնում է որդոց), (եկեղ.) **ձեռնադրութիւն** (Կարգը եօթը աստիճան ունի), **ծիսակատարութիւն** (մկրտութեան, պսակի կարգ), **կենդանիների և բոյսերի խումբ** (կետազգիների կարգ), **վագոն**՝ աւելի կամ նուազ յարմարութիւններով (Նա միշտ առաջին կարգի վագոնով էր ճանապարհորդում). հաջորդիվ բերվում են **կարգ**-ով կազմված բառակապակ-

21 Տե՛ս նույն տեղը:

ցությունները ամենատարբեր ոլորտներից՝ իրավական, կրոնաեկեղեցիական, հասարակագիտական և այլն[21]: Ինչպես տեսնում ենք, Ստ. Մալխասյանցի մոտ, չնայած մանրակրկտությանը, բացակայում են, բնականաբար, հետագայում ի հայտ եկած բառիմաստները, որոնք տեղ են գտել, օրինակ, ակադեմիական «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում»[22], կամ Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում», որտեղ բերված են **կարգ** բառի 20 իմաստներ և դրանով կազմված տասնյակ բառակապակցություններ[23]: Այստեղ արդեն հավելված են մասնա-գիտական ու գիտական տարբեր բնագավառներում որակավորման աստիճանները, օրինակ՝ **առաջին կարգի շախմատիստ**, գիտական տերմինաբա-նության մեջ առարկաների կամ երևույթների դասակարգման ստորաբաժանում, օրինակ՝ **թվի քերականական կարգ**, տարբեր աստիճանի կահավորմամբ երկաթուղային վագոնների և նավասենյակների տիպը, օրինակ՝ **առաջին կարգի նավասենյակ**, արժեթղթերի և փաստաթղթերի որոշ թվով

---

[22] *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան,* Հր. Աճառյանի անվ. Լեզվի ինստիտուտ, Ե., 1969, հ. 3, էջ 72-73:

[23] **Էդ. Աղայան,** *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, հ. 1, էջ 703:

համարների հաջորդական շարքերից յուրաքանչյուրը, օրինակ՝ **անձնագրի համարը և կարգը**, ընդունված կարգով որևէ բան իրականացնելը, օրինակ՝ **ընտրությունների կարգ** և այլն[24]: Արևմտահայերենում **կարգ** գոյականը **կարգ մը** ձևով անչափ հաճախադեպ է՝ դրսևորելով «որոշ, ինչ-ինչ, ինչ -որ, մի քանի»՝ ինչպես որոշյալ, այնպես էլ անորոշ իմաստները (այդ են վկայում ԱՐԵՎԱԿ-ի տվյալները), որը արևելահայերենում բացակայում է. Օրինակ՝ «Անկէ զատ, անգլիական արդյունաբերողներու **կարգ մը** շրջանակներ ու մեջ վախ կա, թե ամերիկյան մոնոբոլները, իրենց ձեռք ին մեջ առնելով ճաբոնական արդյունաբերությունը և աշ խատող ձեռքերը, պիտի սկսին անգլիական ապրանքներ ը փոխարինել համաշխարհային շուկաներու մեջ (Արևակ, Երևան, 07/54, 01. 1947)», կամ «Այս արդիւնք-ները կը գերազանցեն եւրոպական **կարգ մը** երկիրներու մրցանիշներէն շատերը (Արևակ, Հառաջ, 11. 04.1967)», «Իր **կարգ** մը երկերուն մէջ ան պատկերած է նաեւ հայ մ տաւորականութեան կեանքը…(Հորիզոն, 1983.09.19 #17)» :

Մեզ այս պարագայում հետաքրքրում է հոմանշային զույգը միավորող **մարզիկի (սպորտսմենի) քաշային կարգ** ընդհանուր իմաստը, որն

[24] Տե՛ս նույն տեղը:

արևելահայերենում առկա է գրեթե բոլոր բառարաններում և որին արևմտահայերենում համապատասխանում է **դասակարգը,** իմաստ, որը բացակայում է արևելահայերենի բացատրական բառարան-ներում, այլև արևելահայոց մտածողության մեջ. օրինակ՝ «Այն անձինք, ովքեր, անկախ վաղեմության ժամկետից, զբաղվել են թենիսով, ունեն մարզական **կարգ**, հաճախել ե ն սեղանի թենիսի որեւէ սեկցիայի պարապմունքների, մրց մանը մասնակցելու իրավունք չեն ստանա (ԱՐԵՎԱԿ, Առաւոտ, 20.05.2008)» և «Նոյնպս Թորոնթոյէն՝ Թալինա Եսայեան առաջին հանդիսացած է բարձրութիւն ցատկելու մէջ (աղջկանց Ա. **դասակարգ**) (ԱՐԵՎԱԿ, Հորիզոն, 26# 18. 09. 1983)»:

Թղթե ծրար - թղթապանակ, զույգը միավորվում է «թղթակալ, որի մեջ թղթեր են դրվում»[25] իմաստով, սակայն գրական հայերենի մեկ և մյուս տարբերակներում զույգն ունի բազմապիսի՝ իրարից տարբերվող իմաստային դրսևորում-ներ, որը հետևանք կամ արդյունք է երկու գրականների՝ տարբեր լեզվական միջավայրերում կամ

[25] **Անդրանիկ Վրդ. Կռանեան,** *Բառգիրք հայերէն լեզուի*, Պէյրութ, 1998, էջ 141, **Յարութիւն Թ. Գայայեան**, *Բառարան Գանձարան Հայերէն Լեզուի,* Գահիրէ, 1938, էջ 151, **Ստ. Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան,* Ե., 1944, էջ 745, **Գնէլ արք. Ճէրէճեան, Փարամազ Կ. Տօնիկեան եւ Արտաշէս Տէր Խաչատուրեան,** *Հայոց լեզուի նոր բառարան,* Պէյրութ, 1992, էջ 701:

լեզվական ազդեցության ոլորտներում զարգանալու. այսպես, եթե արևելահայերենում **թղթապանակը** ճիշտ համարժեքն է ռուսերենի պապկայի[26] և ունի թղթածրար, ծոցատետր, ձեռնկախ պայուսակ՝ պորտֆել, իմաստային համարժեք-ները,[27] ապա արևմտահայերենում այն միարժեքորեն հայերենացվել է որպես **թղթակալ** (տե՛ս հղում 25 –ի բառարանների մեկնաբանությունները)՝ թղթերի պահոց: Ամեն դեպքում զույգը հոմանիշ է վերոբերյալ իմաստով՝ թղթեր պահելու տեղ: Մեր օրերում քննարկվող այս հոմանշային զույգին փոխարինելու է գալիս **ֆայլը** (անգլ. file բառի հայերեն տառադարձումը), որն Ա. Հայրապետյանի «Օտար բառերի բառարանում» մեկնաբանվում է՝ 1. (հմկրգչ.) Համակարգչային ինֆորմացիայի որոշակիորեն բաժանված և որպես մեկ ամբողջություն վերցվող միավոր: 2. (խսկց.): Նուրբ թղթապանակ (պոլիէթիլենային)[28]: Ներկայումս հենց այդ «նուրբ թղթապանակներում» են զետեղվում տարբեր հիմնարկ – ձեռնար-կությունների աշխատակիցների գործերը կադրերի բաժիններում (**ֆայլը** արևմտահայերենում կիրառվում է **նշոց – տոմսածրար** տար-բերակներով, որոնցից երկրորդը անհասկանալի է,

---

[26]Տե՛ս *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, Հր. Աճառյանի անվ. Լեզվի ինստիտուտ, Ե., 1969, հ. 2 էջ 210:
[27] Տե՛ս նույն տեղը:
[28] **Ա. Հայրապետյան**, *Օտար բառերի բառարան*, Ե., 2011, էջ 612:

իսկ առաջինը՝ անընդունելի. այդպիսով կիրառության մեջ է **ֆայլը**[29]):

Ինչ վերաբերում է **թղթածրար[30] – թուղթերու տըցակ** զույգին, ապա արևմտահայերենում դրանց միավորում է «որևէ պարագայի կամ գործի վերաբերող փաստաթղթերի հավաքածու, ամբողջություն» իմաստը,[31] իսկ արևելահայե-րենում՝ միևնույն անձին կամ թեմայի պատկանող թղթերի փաթեթ, ծրար, թղթապանակ իմաստը[32]: Ինչպես տեսնում ենք, կա ակնհայտ իմաստային ընդհանրություն:

---

[29] Այս մասին մանրամասն տե՛ս **Ս. Տիոյան,** *Հայերենի տերմի-նազիտության հարցեր*, Ե., 2016:

[30] «Հայկական, ասորական, յունական, քրտական ցեղասպանութիւններ իրականացուցած Թուրքիոյ ստուար թղթածրարին վրայ պիտի աւելնայ նաեւ լիբանանեանը», **Անդրանիկ Վրդ. Կռանեան,** *Բառգիրք հայերէն լեզուի,* Պէյրութ, 1998: էջ 141:

[31] Տե՛ս **Անդրանիկ Վրդ. Կռանեան**, *Բառգիրք հայերէն լեզուի*, Պէյրութ, 1998, էջ 141 և **Յարութիւն Թ. Գայայեան**, *Բառարան Գանձարան Հայերէն Լեզուի,* Գահիրէ, 1938, էջ 151:

[32] *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, Հր. Աճառյանի անվ. Լեզվի ինստիտուտ, Ե., 1969, հ. 2 էջ 209: Տե՛ս **Անդրանիկ Վրդ. Կռանեան**, *Բառգիրք հայերէն լեզուի*, Պէյրութ, 1998, էջ 67, **Յարութիւն Թ. Գայայեան,** *Բառարան Գանձարան Հայերէն Լեզուի*, Գահիրէ, 1938, էջ 70, **Ստ. Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան*, Ե., 1944, էջ 402, **Գնէլ արք. Ճէրէճեան, Փարամազ Կ. Տօնիկեան եւ Արտաշէս Տէր Խաչատուրեան**, *Հայոց լեզուի նոր բառարան*, Պէյրութ, 1992, էջ 340: Տե՛ս հղում 32 – ի բառարանները:

[33] **Էդ. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, հ. 1, էջ 500:

Բնատուր – ինքնեկ հոմանշային զույգի առաջին միավորի իմաստը նույնն է երկու գրականներում և վերաբերում է կենդանիներին, բնության երևույթներին, մարդուն՝ բնությունից տրված, բնածիր, երկնապարգև շնորհ, ձիրք, տաղանդ՝[33] երկու գրականների լեզվակիրների լեզվամտածողական որոշակի տարբերությամբ, իսկ հոմանշային շարքի երկրորդ անդամի իմաստը արևմտահայերենում հիմնականում կամ մեծ մասամբ կապվում է բույսերի կամ ջրի հետ. ինքնիրմէ եկած, ինքնահոս, ինքնաբոյս, անսերման (բոյս), առանց ցանելու բուսած[34], իսկ արևելահայերենում՝ նաև անձանց՝ ինքն իր գլխի՝ իր կամքով եկած[35]: Համոզվելու համար բերենք օրինակներ ԱՐԵՎԱԿ-ից, որտեղ **բնատուրով** 282 համատեքստեր կան, ուր այդ բառը հանդիպում է հիմնականում **բնատուր** շնորհ, **բնատուր** ընդունակություն-ներ,
բնատուր զգացողություն ու հոտառություն, **բնա-տուր** ձայն, **բնատուր** հայկական գեղեցկություն, **բնատուր** տաղանդ**, բնատուր** ձիրք**, բնատուր** խելք, **բնատուր** հմայք

---

[34] **Յարութիւն Թ. Գայայեան**, *Բառարան Գանձարան Հայերէն Լեզուի*. Գահիրէ, 1938, էջ 162: **Ստեփան Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան*. Ե., 1944, էջ 799:
[35] **Էդ. Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, հ. 1, էջ 500:

տիպի բառակապակցություններում. «Եվ եթե հասարա-
կության կառուցվածքը, կենսոլորտը ինչ-որ չափով ազդել
են նրա մտածելակերպի վրա, ապա իր գործողությունների
ն ուղղություն տվող ուժը եղել է կենսական պաշարների **բնա-
տուր** հարստությունը, բնամարդկային զուգորդություններ
ի վրա հենված ենթագիտակցությունը **(Ազգ, 2003.11.12)**», «Բարե-
կազմ, գեղեկեցկադեմ և աշխույժ երիտասարդ էր Միհրան
ը՝ օժտված կատակաբանության և ծիծաղեցնելու **բնատուր**
ընդունակությամբ, ձիրքով **(Խերանյան Մկրտիչ, Չայն տուր ով ծովակ)**»: **«**Լառեչը նաեւ ասել է, թե հայերն աչքի են ընկնում
բնատուր գործարարությամբ (Հայկական Ժամանակ, 2004.06.09)**»**, «Արուեստագէտի նման է ուսուցիչը, **բնատուր** բան մը ունի իր մէջ (Հայրենիք, 2003.09.19)»: Բերենք օրինակ-ներ նաև **ինքնեկով**՝ վերն ասվածը փաստելու նպատակով. «Ղարաբաղյան շարժման առաջին **ինքնեկ** առաջնորդները՝ Վաչե Սարուխանյանը եւ Իգոր Մուրադյանը կարճ ժամա
նակ անց դուրս մղվեցին «Ղարաբաղ» կոմիտեից մի պարզ պատ-
ճառաբանությամբ, որ շարժման մյուս առաջնորդները կա

րողացան ճըշտել ՊԱԿից Ազատության հրապարակ, այնտ եղից Զորի Բալայան տանող նրանց երթուղին (Առաւօտ, 2002. 12. 21)», «Թլկատինցի-Յովհաննէս Յարութիւնեան, զաւառա-
կան գրականութիւնը **ինքնեկ**, հարազատ, անխառն ու պա րզ պատկերացնողը (Հայրենիք, 2005.02.25)», «Մեղքի զգացո-ղությունից հետո զղջումը **ինքնեկ** է **(**Թորոսյան Սասունիկ, Ձյուների կույսը, Անալի աղ)»: Դատելով ԱՐԵՎԱԿ-ի օրինակներից՝ կարելի է փաստել **ինքնեկ**ի չվկայված մի իմաստի գոյությունը. այն է՝ *ինքնըստինքյան* (ժողովրդական խոսքում տարածված՝ **ինքնազլուխ**՝ տե՛ս վերը բերված առաջին օրինակը). «Ձեռքս **ինքնեկ** դրվեց աղջկա ծնկին՝
իբր այդ ես չեմ, գործ չունեմ այդ անամոթ ձեռքի հետ, մատ ներս շոշափելով քայլեցին վե՛ր, վե՛ր, վե՛ր...(Այվազյան Աղասի, Եղած չեղածը՝ մի կյանք (Օրհնություն և անեծք))»:

Tioyan Susanna - A Contrastive Analysis of Vocabulary. Synonymous Words in Standard Armenian. - The contrastive analysis of the vocabulary of Eastern and Western variants in Standard Armenian reveals both linguistic and extra-linguistic phenomena. It is aimed atmaking communication between native speakers of the two varieties more effective. Thus, the

synonymous pair ատամ-ակռաare differentiated in terms of belonging to a certain national variety, namely: ատամis mainly used in Eastern Armenian, whereas ակռա – in Western Armenian. The same is relevant to the synonymous pairs ատոմային-հյուլեային (weapons) and միջուկային-կորիզային (weapons). The synonymous pair բաժակ-գավաթ, which is equally understandable to native speakers of both varieties, is only differentiated in in the areasports, more specifically: գավաթ gets used in Eastern Armenian, while բաժակ in Western Armenian. In the word-combination մարզիկի քաշային կարգ it is the vocabulary unit կարգ that is used in Eastern Armenian, while in Western Armenian we find դասակարգ: The pair թղթեծրար-թղթապանակ is synonymous in one meaning – «a file in which papers are kept», whereas the synonyms թղթածրար and թուղթեր ու սրցակ are similar in the meaning «a collection of documents related to one case». There is a semantic similarity in the words քնատուր and ինքնեկ, in which case we can single out one meaning of ինքնեկ, more specifically: ինքնըստինքյան, which is used in popular speech as ինքնազլուխ:

Тиоян Сусанна - Сопоставительный анализ лексики. Синонимичные слова в литературном армянском языке. - В результате сопоставительного анализа лексики литературного армянского языка (восточный и западный варианты) вскрываются как лингвистические, так и экстралингвистические особенности, что, в свою очередь, способствует улучшению коммуникации между носителями двух вариантов армянского языка. Так, синонимичная пара

ատամ- ակռա различается только в плане области употребления, а именно: слово **ատամ** употребляется в восточно-армянском, в то время как **ակռա** употребляется исключительно в западно-армянском. То же относится к синонимичным парам **ատոմային –հյուլեային** (оружие) և **միջուկային - կորիզային** (оружие). Синонимичная пара **բաժակ – գավաթ,** которая понятна носителям обоих вариантов, различается только в области спорта, а именно: в восточно-армянском употребляется термин **գավաթ,** а в западно-армянском – **բաժակ.** В той же области в словосочетании **մարզիկի քաշային կարգ** в восточно-армянском используется существительное **կարգ,** а в западно-армянском –**դասակարգ.** Только в значении “папка для бумаг”, синонимичной является пара **թղթե ծրար - թղթապանակ,** а в значении “коллекция документов по какому-то делу или обстоятельству” синонимичной является пара **թղթածրար - թուղթերուտրցակ.** Явная семантическая общность можно проследить в паре **բնատուր-ինքնեկ,** в которой можно выделитьодно неотмеченное значение **ինքնեկ,** а именно: “само по себе”, которое в просторечии используется как “самостоятельно”.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բառնասյան Ջեմմա - Լեզվամտածողության առանձնահատկությունների քննություն՝ ըստ Շիրակի մարզի գյուղերի խոսվածքների գրառումների 3

Գրիգորյան Գայանե - Ականավոր հնչյունաբաններ............10

Գրիգորյան Սուսաննա - Գրիգոր Տաթեւացու «Գիրք քարոզութեան» ամառան եւ ձմեռան հատորների բառապաշարի ձնաիմաստային խմբերն իբրև ինքնատիպ լեզվամտածողության արտահայտություն 28

Զաքարյան Հովհաննես - Հ.-Ե. *(a)u̯(e)- արմատից սերված հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն 48

Զաքարյան Հովհաննես - Հայոց լեզվաշինության անցյալը, ներկան և ապագայի տեսլականը....................................69

Թաղևոսյան Հասմիկ - «Բժշկարան ձիոյ եվ առհասարակ գրաստնոյ» երկի բառապաշարի ընդհանուր բնութագիրը 89

Խաչատրյան Հասմիկ - *Լուսամուտ* եվ *պատշգամբ* հասկացությունների բառանունները բարբառային հայերենում......106

Ներսիսյան Վարսիկ - Բայի եղանակաժամանակային ձևերի գործածությունը Հովհաննես Օձնեցու երկերում 122

Սարգսյան Նռանե - Արդի հայերենի նորագույն հապավումները 136

Վարդանյան Արտակ - Արցախի բարբառի «տնջրի» բուսանվան ստուգաբանությունը 144

Տիոյան Սուսաննա - Բառապաշարի զուգադիր քննություն հոմանիշ բառերը գրական հայերենում 151